Azg
Ազգ
14 ՄԱՅԻՍ 2005 ՇԱԲԱԹ 87 (3253)

Բաքվի շուկաներում կարելի է գնել հայկական կոնյակ, «Ձերմուկ», սիգարետներ

Ադրբեջանական շուկաներում հայտնվել են հայկական արտադրության ապրանքներ: Ադրբեջանական «Դեյ» կայքէջը հաղորդում է, որ Բաքվի շուկաներում ազատ կարելի է գնել հայկական «Արարատ» կոնյակ, «Ձերմուկ» հանքային ջուր, «Սիգարոն» տեսակի ծխախոտ եւ այլ ապրանքներ: Փորձագետների կարծիքով, Հայաստանի եւ Ադրբեջանի ոչ պատշաճական առեւտրային հարաբերությունները երբեք չեն ընդհատվել: Ադրբեջանից Հայաստան է ներկրվում հիմնականում նավթամթերք եւ ձկնեղեն, իսկ արտահանվում են էլեկտրատեխնիկա, թեթեւ եւ սննդի արդյունաբերության ապրանքատեսակներ: Ապրանքաշրջանառությունը կատարվում է Վրաստանի եւ Իրանի տարածքով: «Դեյը», վկայակոչելով Ադրբեջանի պետական մաքսային ծառայության աղբյուրներին, նշում է, որ այդ ծառայությունը քայլեր է ձեռնարկում կանխելու հայկական ապրանքների ներկրումն Ադրբեջան:

«Հայ-թուրքական հարաբերություններում տեղաշարժ կլինի, սակայն Հայաստանն ավելի հեշտ լեզու կգտնի ԱՄՆ-ի, քան Թուրքիայի հետ»

«Ծանրագույն հանցանք, ծայրագույն մարտահրավեր. ցեղասպանությունն ու մարդու իրավունքները» միջազգային համաժողովին մասնակցելու համար Երեւան էր ժամանել ամերիկահայ մտավորական եւ հայտնի հրապարակախոս Երվանդ Ազատյանը: Ինչպես միշտ, նա այցելեց մեր խմբագրություն: «Ազգը», նկատի ունենալով պրն Ազատյանի հասարակական եւ քաղաքական գործունեությունը, ինչպես համաժողովի աշխատանքների եւ դրա թուրք մասնակիցների ելույթների, այնպես էլ հայ-թուրքական հարաբերություններում վերջերս նկատվող տեղաշարժերի մասին անկողմնակալ գնահատական ստանալու ակնկալիքով դիմեց նրա կարծիքին: Իսկ նա մեր հարցերին պատասխանելիս իր անձնական կարծիքի հետ ներկայացրեց նաեւ վերոհիշյալ տեղաշարժերի նկատմամբ պաշտոնական Վաշինգտոնի դիրքորոշումը:

- Ինչպե՞ս եք գնահատում Մեծ եղեռնի 90-րդ տարելիցին նվիրված միջազգային համաժողովը:

- Համաժողովն իր մակարդակով, զեկուցողների ընդգրկմամբ վերջին տարիների ամենատպավորիչ նախաձեռնություններից մեկն էր: Անշուշտ, կային անհավասարություններ, բայց գերակշռում էին բովանդակալից ելույթները: Չնայած համաժողովը վայելում էր պետության հովանավորությունը, իսկ դա, որպես կանոն, ակադեմիական շրջանակներում տեղիք է տալիս վերապահության, ինչպես մենք ենք վերապահությամբ վերաբերվում թուրքական պատմական ընկերության նախագահ Յուսուֆ Հալաչօղլուի գլխավորած հանձնախմբին, մեզ հետ նաեւ անկախ մտավորականները, համարելով դա պետության մեկ թեւը, սակայն ուրիշ ելք չկար: Ի վերջո, միջոցառումը կազմված էր Մեծ եղեռնի 90-րդ տարելիցի հետ, եւ պետությունը դարձավ դրա նախաձեռնողը: Դա միաժամանակ տարելիցին գիտական լիցք եւ բովանդակություն հաղորդեց: Դրական էր նաեւ այն, որ մենք ունեցանք միջազգային իրավաբաններ, որոնք իրավաբանական, օրինական անկախ մեկնաբանություն տվեցին մեր ցեղասպանությանը:

Տես էջ 4

ԸՆԴԱՌԱՏ

Եվրոխորհրդի գագաթաժողով Լեհաստանում

Ակնկալվում են Քոչարյան-Ալիեւ եւ Քոչարյան-Էրդողան հանդիպումներ Վարշավայում

Մայիսի 16-17-ը Լեհաստանի մայրաքաղաքում տեղի է ունենալու Եվրոխորհրդի 3-րդ գագաթաժողովը, որին մասնակցելու են կազմակերպության անդամ պետությունների նախագահները կամ կառավարության ղեկավարները: Երկօրյա աշխատանքների ընթացքում կքննարկվեն երեք գլխավոր թեմաներ՝ Եվրոպական միություն եւ եվրոպական արժեքներ, եվրոպական հանրությանն ուղղված մարտահրավերները եւ եվրոպական «ճարտարապետությունը», այսինքն՝ ինչպիսին պետք է լինի 800 մլն բնակչությամբ Եվրոպան ապագայում:

Հայաստանի նախագահի մամլո գրասենյակը հաղորդում է, որ Ռոբերտ Քոչարյանը մայիսի 15-ին կմեկնի Վարշավա՝ մասնակցելու Եվրոխորհրդի 3-րդ գագաթաժողովին: «Հայաստանի նախագահը Վարշավայում երկկողմ հանդիպումներ կունենա մի շարք երկրների ղեկավարների հետ: Գագաթաժողովի շրջանակներում, Մինսկի խմբի համանախագահների առաջարկությամբ, նախատեսվում է նաեւ Ռոբերտ Քոչարյանի եւ Իլհամ Ալիեւի հանդիպումը», ասվում է մամլո հաղորդագրության մեջ:

Ռուսաստանցի համանախագահ Յուրի Մերզլյակովն ադրբեջանական ANS հեռուստաընկերությանն ասել է, որ նախագահներ Քոչարյանի եւ Ալիեւի հանդիպումը տեղի կունենա մայիսի 15-ի երեկոյան: Իսկ այսօր Մինսկի խմբի համանախագահները Լեհաստանում կհանդիպեն Հայաստանի արտգործնախարարի հետ: Միջնորդները Ադրբեջանի արտգործնախարար Էլմար Մամեդյարովի հետ հանդիպել են ապրիլի 27-ին Ֆրանկֆուրտում:

Ամենայն հավանականությամբ Եվրոխորհրդի գագաթաժողովի շրջանակներում տեղի կունենա Հայաստանի նախագահի եւ Թուրքիայի վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանի հանդիպումը: Եթե պաշտոնական Երեւանը շարունակում է պնդել, որ նման պայմանավորվածություն չկա, ապա թուրքական մամուլը հավանական է համարում Էրդողան-Քոչարյան հանդիպումը:

Երեւանում Լեհաստանի դեսպանատան աջակցությամբ «Ազգ» օրաթերթը հնարավորություն է ստացել Վարշավայից լուսաբանելու ինչպես Եվրոխորհրդի գագաթաժողովի աշխատանքները, այնպես էլ դրա շրջանակներում նախատեսված երկկողմ հանդիպումները:

Թ. Հ.

«Ջենջերը» խոսքը մեկ արած դոլար չեն վաճառում

Որքան էլ որ չես ուզում հավատալ, որ մեր բանկերը ժողովրդի ձեռքից ԱՄՆ դոլարները հավաքում են, որ հետո ավելի թանկ գնով նույն ժողովրդի վրա «սաղացնեն», փաստը մնում է փաստ... Երեկ Տիգրան Մեծի պողոտայի աջ եւ ձախ մասերում գործող տարադրամի փոխանակման 26 կետերից որեւէ մեկում մեզ չհաջողվեց գնել ԱՄՆ դոլար (առք՝ 452, վաճառք՝ 457): Նախ պատճառաբանում էին, թե մանր դոլար չունեն, իսկ երբ փորձեցի 100 դոլարանոց գնել, պարզվեց, որ կրկին չունեն: Իմ հորդորներին բոլոր վաճառողները խոսքը մեկ արած պատասխանում էին. «Կուզես բողոքի, Կենտրոնական բանկը թող տա, մենք էլ վաճառենք»: Չկարծեք, թե ես միակ գնորդն էի: Իմ աչքի առաջ դոլար մանրած քաղաքացու հեռանալուց հետո փոխանակման կետի աշխատողն այդ դոլարը դրեց չհրկիզվող պահարանում ու փակեց... Մեր պաշտոնյաները չմեղանում են, թե՝ խուճապի մի մասնվեք, դա ժամանակավոր բնույթ է կրում, մինչդեռ ամեն քայլափոխի հակառակ պատկերն ես տեսնում: Մնում է փողոցում կանգնել ու մինչեւ «ջենջ» մտնելն ուզածդ դոլարը գնել փոխանակողից եւ հետու մնալ «ջենջերի» շառլատաններից:

ՄԱՐԻԵՏԱ ՄԱՐԿԱՐՅԱՆ

Ձերբակալվել է Ադրբեջանի օգտին լրտեսությամբ զբաղվող ԼՂՀ քաղաքացի

«Ռեգնում» գործակալությունը հաղորդում է, որ ԼՂՀ ազգային անվտանգության ծառայության եւ հանրապետության ոստիկանության համատեղ օպերատիվ հետախուզական միջոցառումների արդյունքում ձերբակալվել է ԼՂՀ քաղաքացի, որը կասկածվում է Ադրբեջանի օգտին լրտեսության մեջ: Հետաքննությունների շահերից ելնելով, կասկածյալի անունը չի հրապարակվում: Համաձայն ԼՂՀ ազգային անվտանգության ծառայության, ձերբակալվածն ունեցել է գաղտնի կապեր Ադրբեջանի հատուկ ծառայությունների հետ, պարբերաբար Ադրբեջանին է փոխանցել պետական գաղտնիք պարունակող տեղեկություններ: Գլխավոր դատախազությունը քրեական գործ է հարուցել ԼՂՀ քր. օր.-ի թիվ 299 հոդվածով, որը նախատեսում է 10-15 տարի ազատազրկում:

Մեհրիբան եւ Միշա կամ մի «սիրո պատմություն»

Երկրի նախագահները նույնպես զերծ չեն տղամարդկային թուլությունից: Երբեմն այդ թուլությունն ուղղակիորեն անդրադառնում է միջպետական հարաբերություններին: Օրինակ, վրաց քաղաքական շրջանակներում եւ ՁԼՄ-ներում հաճախ են խոսում «սիրավեպի» մասին՝ մի քանի ամիս առաջ Իլհամ Ալիեւի Թբիլիսի այցի շրջանակներում: Միխայիլ Սաակաշվիլուն այն ասիճանի է գրավել Մեհրիբան Ալիեւայի արեւելյան գեղեցկությունը, որ նա անզոր է եղել զսպելու իր զգացմունքները: Միշան, հենց այսպես են փաղաքշորեն կանչում Վրաստանի նախագահին, Իլհամի ներկայությամբ համարձակվել է Մեհրիբանին «սիրաշաբել»: Ասում են, գլուխը կորցրած Ալիեւը վերադառնալով Բաքու՝ կարգադրել է մանրազնին ստուգել Ադրբեջանից Վրաստան մեկնող վագոնները՝ արդյոք դրանց վերջնակետը Հայաստանը չէ: Այսպես սկսվեց հայտնի «ռելսային պատերազմը»:

Սաակաշվիլին Ուկրաինա կատարած այցի ընթացքում հրապարակել է ուկրաինուհիների գեղեցկությամբ: Ի տարբերություն Ալիեւի, Վիկտոր Յուշչենկոն ոչ միայն որեւէ կարգի պատերազմ չի հայտարարել, այլեւ Վրաստանի նախագահի վերադարձից հետո հատուկ նրա համար ուղարկել է մի քանի զույգ գեղեցկուհիներ: Ասում են նաեւ, որ անցյալ տարի պաշտոնական այցով Հայաստան ժամանած Սաակաշվիլին գիշերն անցկացրել է «Օմեգա» ակումբում:

Արմատականների ապստամբություն Ուզբեկստանի արեւելքում

Հաջորդը «սեխերի» հեղափոխությո՞ւնն է

Դատելով ամերիկյան լրատվամիջոցների եւ առաջին հերթին CNN-ի տեսադրամներից, ամենայն հավանականությամբ առաջիկա հեղափոխությունը տեղի է ունենալու Ուզբեկստանում: Այդ լրատվամիջոցները երեկ արդեն սկսել էին նախապատրաստել մտքերը եւ հրահրել կրքերը, տեսնելով, որ Ուզբեկստանը բռնատիրական երկիր է, նախագահ Իսլամ Քարիմովը նախկին խորհրդային ղեկավար է, որն այդ երկրում իշխում է 1991 թ.-ից ի վեր, թե երկրի 26 միլիոնանոց բնակչությունն ապրում է տնտեսական վատ պայմաններում եւ զրկված է ազատություններից, թե ամիսներ առաջ Քարիմովը երկրից վռնդել է միջազգային մի շարք կազմակերպությունների եւ առաջին հերթին Սորոս հիմնադրամի ներկայացուցիչներին եւ այլն: Անշուշտ, այդ բոլորը ճիշտ են, սխալ բան չկա: Սակայն հնչող մեղադրանքներն այնքան նման են նախապես «հեղափոխականացած» այլ երկրների պարագայում օգտագործված բառապաշարին, որ կասկած չի մնում, որ Ուզբեկստանում վարչակարգի տապալումից հետո եւս մի երկիր ընկնելու է Վաշինգտոնի ուղղակի տիրապետության տակ եւ մոռացվելու են ժողովրդավարությունն ու ազատությունները: Առայժմ մնում է հարմար ծաղիկ կամ գույն գտնել ուզբեկական հեղափոխության համար: Առաջարկում ենք «սեխերի հեղափոխությունը»:

Երեկ վաղ առավոտյան Ուզբեկստանի արեւելքում գտնվող Անդիջան քաղաքում խռովարարների ապստամբության հետեւանքով հանրապետությունում լարված իրադրություն է ստեղծվել: Ապստամբները գրավել են շրջանային վարչակազմի եւ բանտի շենքերը: Ուզբեկ պաշտոնյաների խոսքերը վկայակոչելով Ֆրանսպրեսը հաղորդում է, որ բանտից փախուստ են տվել 2000 կալանավորներ, հրկիզվել են մեկական թատրոն եւ կինոթատրոն: Այլ տեղեկությունների համաձայն, արձակված բանտարկյալների թիվը 3000 է: Նրանց մեծ մասն արմատականներ են, կան նաեւ սակավաթիվ քրեական հանցագործներ:

Հետմիջօրեին նախագահական վարչակազմից ստացված տվյալներով, քաղաքում զոհվել են 9 եւ վիրավորվել 36 անձինք: Ապստամբների տվյալներով, սպանվել են 20 եւ վիրավորվել 30 ցուցարարներ: Քաղաքում մերթ ընդ մերթ լսվում են հրաձգության ձայներ: Զինվորներ եւ ոստիկաններ գրեթե չեն երեւում: Հարձակում է կատարվել քաղաքի կայազորի վրա:

Տես էջ 5

ԸՆԹԱՑԻԿ

Մայիսի 12-ին ՀՀ արտգործնախարար Վարդան Օսկանյանը հայտարարել էր, որ Վարշավայում նախագահ Ռոբերտ Քոչարյանի եւ Թուրքիայի վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանի հանդիպման պայմանավորվածություն դեռեւս չկա: Պայմանավորվածության բացակայությունը, սակայն, ամենեւին չի բացառում մայիսի 16-17-ը Եվրոխորհրդի անդամ պետությունների ղեկավարների վարշավյան գագաթաժողովում նախատեսվող այդ հանդիպման իրականացումը: Թեեւ կողմերը հանդիպման առնչությամբ պաշտոնական որեւէ դիմում չեն ներկայացրել միմյանց, բայց եւ այնպես, Քոչարյան-Էրդողան ոչ պաշտոնական հանդիպումն ավելի քան իրատեսական է, որ Անկարան դա նախապես սեփական նկրտումներին ծառայեցնելու համար կեղծիքի է դիմում, թե Հայաստանն իբր «Ադրբեջանի գրավյալ տարածքները՝ Լեռնային Ղարաբաղը ներառյալ, ազատելու Հայաստանի «անկախկալ» պատրաստակամության» հայտնագործություն էին անում եւ դա, որպես իրողություն, իրենց ինտերնետային էջերի միջոցով մատուցում միջազգային հանրությանը:

Նույն օրը երեկոյան ինֆորմացիոն գլխավոր ծրագրով թուրքական հանրային հեռուստատեսությունը հարկ համարեց հերքել այս կեղծիքը, թե «Երեւանը գրավյալ տարածքներից ստիպանաբար դուրս գալու բանաձեւ է ներկայացրել Ադրբեջանին, դա չափազանց կարեւոր է Վարշավայում նախատեսվող Քոչարյան-Էրդողան նախատեսվող հնարավոր հանդիպման նախօրյակին, բանաձեւի մասին պաշտոնական Անկարային անձամբ տեղեկացրել է Ադրբեջանի փոխարտգործնախարար Արազ Ազիմովը՝ այցելելով շաբաթվա սկզբին Թուրքիա»:

«Զաման» թերթը մայիսի 13-ի համարում «Ղարաբաղի առնչությամբ ժեստը կնպաստի Էրդողան-Քոչարյան հանդիպմանը» խորագրով մասնակի սրբագրեց ինչպես «Միլլիեթին», այնպես էլ թուրքական հանրային հեռուստատեսությանը, մասնավորապես գրելով. «Թուրք-հայկական բարձրագույն մակարդակի հանդիպումից առաջ ծրագրվում է ՀՀ նախագահ Քոչարյանի եւ Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւի հանդիպումը Վարշավայում: Սակայն դա եւս, ինչպես Էրդողան-Քոչարյան հանդիպումն է, չի հստակեցվել: Անկարան ակնկալում է, որ Քոչարյան-Ալիեւ հանդիպմանը պաշտոնական Երեւանը որոշակի քայլեր կկատարի Լեռնային Ղարաբաղից դուրս գալու հարցում: Սակայն Թուրքիայի հասած տեղեկությունները ցույց են տալիս, որ դա հավանականությունը մեծ չէ»:

Հայաստանը Ղարաբաղից դուրս գալու բանաձե՞ւ է առաջարկել Բաքվին

Թե՞ Թուրքիան մտացածին այս առաջարկը ծառայեցնում է Քոչարյան-Էրդողան հանդիպմանը ցանկալի ընթացք տալու իր նկրտումներին

բեջանի գրավյալ տարածքներն ազատելու ազդանշան է տվել», նույնիսկ «Լեռնային Ղարաբաղից դուրս գալու բանաձեւ է առաջարկել Բաքվին»:

Կեղծիքի պարագայում խնդրո առարկա «Միլլիեթ» թերթն էր եւ թուրքական հանրային հեռուստատեսությունը: Մայիսի 12-ին, երբ ՀՀ արտգործնախարարը հայտարարություն էր անում, թուրքական այս լրատվամիջոցները «Ադրբեջանի գրավյալ տարածքները՝ Լեռնային Ղարաբաղը ներառյալ, ազատելու Հայաստանի «անկախկալ» պատրաստակամության» հայտնագործություն էին անում եւ դա, որպես իրողություն, իրենց ինտերնետային էջերի միջոցով մատուցում միջազգային հանրությանը:

Նույն օրը երեկոյան ինֆորմացիոն գլխավոր ծրագրով թուրքական հանրային հեռուստատեսությունը հարկ համարեց հերքել այս կեղծիքը, թե «Երեւանը գրավյալ տարածքներից ստիպանաբար դուրս գալու բանաձեւ է ներկայացրել Ադրբեջանին, դա չափազանց կարեւոր է Վարշավայում նախատեսվող Քոչարյան-Էրդողան նախատեսվող հնարավոր հանդիպման նախօրյակին, բանաձեւի մասին պաշտոնական Անկարային անձամբ տեղեկացրել է Ադրբեջանի փոխարտգործնախարար Արազ Ազիմովը՝ այցելելով շաբաթվա սկզբին Թուրքիա»:

Այլ կերպ, թուրքական «Զամանը» կասկածի տակ է դնում «Լեռնային Ղարաբաղից դուրս գալու Հայաստանի անակնկալ պատրաստակամության» մասին «Միլլիեթի» եւ թուրքական հանրային հեռուստատեսության ապատեղեկատվության բնույթի տեղեկությունը: Դրանով հանդերձ այս թերթը եւս վկայակոչում է Ազիմովին, թերեւս դրանով էլ կեղծիքի պատասխանատվությունը նրա վրա է բարդում եւ միաժամանակ հակասում ինքն իրեն: «Զամանի» տվյալներով, տարածաշրջանի քաղաքական զարգացումների մասին թուրքական կողմին իրազեկելու համար Անկարա ժամանելով Ազիմովն ասել է, որ «Հայաստանը մեկ անգամ եւս կրկնեց «Լեռնային Ղարաբաղի յոթ շրջաններից» դուրս գալու» իր առաջարկը, սակայն փորձում է «Ադրբեջանի եւ Նախիջեւանի միջեւ Լաչինի միջանցքից, ինչպես նաեւ Ղարաբաղին հարակից Քելբաջարից դուրս գալը թողնել վերջում»: «Զամանը» նշում է նաեւ, որ ադրբեջանցիները մերժելով ստիպանաբար դուրս գալու 5+1+1 բանաձեւը՝ պահանջում են գրավյալ տարածքներն ազատել անվերապահորեն եւ լիարժեք:

Ի դեպ, հավն էլ օգտակար կենդանի է, երազ տեսնում է, իսկ երազում մշտապես՝ կորեկ: Համենայն դեպս, «Զամանը» հնարավոր է համարում, որ կողմերը Վարշավայում քննարկեն գրավյալ տարածքներից Հայաստանի դուրսբերման ձեւը, որքան էլ ցածր լինի նրանց վերջնական համաձայնության հավանականությունը եւ Հայաստանի ու Ադրբեջանի ղեկավարներն ընդհանուր հայտարարի գան հակամարտության կարգավորման ուղեգծի շուրջը: Դա, ըստ «Զամանի», դրականորեն կանդրադառնա Երեւան-Անկարա հարաբերությունների վրա, իսկ Էրդողան-Քոչարյան հանդիպումը կդառնա դրա առաջին պտուղը:

Եթե մի կողմ թողնենք գրավյալ տարածքները, Լեռնային Ղարաբաղից Հայաստանի դուրսբերման հարց գոյություն չունի, իսկ վերոհիշյալ 7 շրջանները Լեռնային Ղարաբաղի շրջանները չեն: Ինչ վերաբերում է Լաչինին, արդա դա Ադրբեջանի հետ Նախիջեւանի միջանցք դարձնելու համար անհրաժեշտ է փոխել շրջանի աշխարհագրական դիրքը: Այս անճշտությունները պատահական չեն: Թերեւ «Միլլիեթի», «Զամանի» եւ թուրքական հանրային հեռուստատեսության վերոհիշյալ ապատեղեկատվության առնչությամբ պաշտոնական Անկարան պետական պատվերի մեղադրանքներից պաշտպանելու միտում ունի:

Համենայն դեպս, ինչպիսին էլ լինի միտումների բնույթը, «Լեռնային Ղարաբաղից եւ գրավյալ տարածքներից Հայաստանի դուրս գալու պատրաստակամության» մասին այս կեղծիքը Քոչարյան-Էրդողան հանդիպման նախօրյակին միջազգային հանրությանն ապակողմնորոշելու եւ հայկական կողմի վրա հոգեբանական ճնշում գործադրելու Անկարայի հերթական փորձն է: Սա նշանակում է, որ Անկարան հանդիպումից չի հրաժարվելու, փոխարենը նախընտրում է դա ծառայեցնել սեփական նկրտումներին: Երբ խնդիրը սեփական նկրտումներն են, բոլորովին պարտադիր չէ, որ Թուրքիայի բուն նպատակն Ադրբեջանի գրավյալ տարածքները լինեն: Չի բացառվում, որ տարածքների ազատման համար Հայաստանին հոգեբանական ճնշման ենթարկելով, Անկարան իրականում նպատակ հետապնդի զիջումներ կորզել Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման հարցում:

ՀԱՍՈՒՆ ՉԱՔԱԲՅԱՆ

Պուշկինի անվան զբոսայգին վերականգնվելու է երիտասարդ ճարտարապետների նախագծերով

Երեկ ՀՀ ճարտարապետների միության շենքում «Ռոբերտ Պողոսյան եւ որդիներ» հիմնադրամը կազմակերպել էր Երեւանի Պուշկինի անվան զբոսայգու վերականգնման նախագծի մրցանակաբաշխությունը: Զբոսայգին 1990-ականներից ի վեր հիմնավերանորոգման կարիք է զգում, եւ այն իրագործելու համար Երեւանի Կենտրոն թաղամասերանն ու «Ռոբերտ Պողոսյան եւ որդիներ» հիմնադրամը ստորագրելու են փոխըմբռնման հուշագիր, որը հիմք կծառայի որոշելու այգու վերականգնման նախագիծը: Ինչպես նշեց պրն Պողոսյանը, «մեր նպատակն է սկիզբ դնել Երեւանում կանաչ գոտիների պահպանմանն ու դրանց պաշտպան օգտագործմանը: Այս ոչ առեւտրային ծրագրով այգուն վերստին կվերադարձվի նախկին հմայքը»:

Զբոսայգու վերջնական նախագիծը կազմելիս հաշվի կառնվեն

հիմնադրամի կողմից դրամական մրցանակների արժանացած Երեւանի ճարտարապետաշինարարական համալսարանի ուսանողների առաջարկած գաղափարները: Մրցույթին ներկայացված 16 նախագիծ աշխատանքներից 11-ն արժանացան մրցանակների: 1-ին մրցանակը բաժանվեց 3 հեղինակային խմբի՝ յուրաքանչյուրին 1700 եվրո (8 ուսանող), 2-րդ մրցանակը բաժանված էր չորս խմբի՝ յուրաքանչյուրին 500 եվրո, 4 նախագծի հեղինակների էլ շնորհվեց 250-ական եվրո:

Ընդհանուր առմամբ այգու վերանորոգման աշխատանքները հանձնարարվել են «Հայաստան» համահայկական հիմնադրամին:

ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ

ՈԵՊԼԻԿ

Թիվ 3 կառավարական շենքում լրագրողներից կպահանջվի նաեւ կոշիկի կամ վերնաշապիկի չափը

Կամ ինչպես է ոտնահարվում տեղեկատվության ազատության իրավունքը

Երբ կառավարական թ. 3 շենքի նախասրահում համակարգիչներ տեղադրվեցին, եւ դա անվանեցին այդտեղ տեղակայված նախարարությունների աշխատանքի բարելավման ուղղված քայլ, ոչ հասարակության, ոչ էլ լրատվամիջոցների կողմից համարժեք արձագանքներ չեղան: Ոչ ոք իրեն իրենց անունով չկոչեց եւ չասաց, որ դա ոչ այլ ինչ է, քան մի քանի նախարարությունների չինովնիկներին հաճախորդներից գլուխն ազատելու նպատակ ունեցող միջոցառում: Այսինքն, նրանք հանգիստ կարող են «տեղում չլինել», «խորհրդակցության մասնակցել», «զբաղված լինել» կամ «հյուրեր ունենալ», եւ ոչ մի քաղաքացի իր համառությամբ չի հետապնդի եւ չի



ստիպի նրանց կատարել իրենց պարտականությունները: Սակայն առավել տարօրինակն այն էր, որ այդ միջոցառումն իրականացվել է Համաշխարհային բանկի ֆինանսավորմամբ եւ կոչված է բարեփոխելու պետական կառավարման համակարգը:

Սակայն պարզվում է, որ վերոնշյալը չինովնիկական կամայականությունների դրսեւորման միակ եւ առավել ցայտուն օրինակը չէ: Տվյալ շենքի կառավարչի հաջորդ «հանճարեղ» որոշումն այն է, որ թույլ չի տրվում այնտեղ մուտք գործել լրագրողական վկայականներով, չնայած դրանցում, բացի լրագրողի նկարից, նշված է վկայականի համարը եւ կա

Արմինե Ահարոնյանի համերգը Կարլովի Վարիում

Դուբայում անցկացված պատանի վիրտուոզների միջազգային մրցույթում առաջին տեղին արժանացած 17-ամյա դաշնակահարուհի Արմինե Ահարոնյանը անցած շաբաթվերջին հանդես եկավ Չեխիայի Կարլովի Վարի առողջարանային հայտնի քաղաքի սիմֆոնիկ նվագախմբի հետ՝ կատարելով Բեթհովենի դաշնամուրի կոնցերտը: Նրա հետ ելույթ ունեցավ նաեւ նույն մրցույթի այլ բաժնում առաջին տեղը գրաված չեխ ջութակահար Պետր Մաթեյակը: Դուբայում անցկացված մրցույթից հետո որոշվել էր առաջին տեղը գրաված երկու վիրտուոզներին հնարավորություն տալ ելույթ ունենալու չեխական սիմֆոնիկ նվագախմբի հետ: Ինչպես Դուբայում, այնպես էլ Կարլովի Վարիում պատանի երաժիշտները փայլեցին իրենց կատարողական արվեստով: Հիշեցնենք, որ Արմինե Ահարոնյանը Երեւանի Կոմիտասի անվան կոնսերվատորիայի ուսանող է եւ ոչ միայն բազմաթիվ մրցույթների դափնեկիր է, այլեւ «Նոր անուններ» ծրագրի շրջանակում ելույթներ է ունեցել տասնյակից ավելի երկրներում:

Հ. Ա.

Պրահա

նալու նպատակով տվյալ շենք մուտք գործելիս լրագրողները ոչ միայն անձնագիր կամ զինգրքույկ պետք է վերցնեն, այլեւ սոցիալական քարտ: Ով գիտի, բացի նկարից, գուցե կառավարչին հետաքրքրում է նաեւ անձնագրի համարն ու թե ո՞ւմ կողմից է տրված, կամ ապագայում հետաքրքրեն սոցքարտի գծիկային կոդերն ու հերթական համարը: Իսկ վարդագույն հեռանկարում ամենայն հավանականությամբ լրագրողներից կպահանջվի ասել նաեւ կոշիկի կամ վերնաշապիկի չափը:

Փաստորեն, թ. 3 կառավարական շենք լրագրողական վկայականներով մուտք գործելու անհնարինությունը ոչ այլ ինչ է, քան լրագրողների աշխատանքին խոչընդոտելու եւ տեղեկատվություն ստանալու ազատության ոտնահարման ակնհայտ դրսեւորում: Կարծում ենք, որ տվյալ խնդրի լուծումն իր վրա պետք է վերցնի կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարարը, այլապես ստացվում է, որ այդ շենքի կառավարիչը անկախ է որեւէ պետական կառույցից կամ առնվազն ուղղակի ենթակա է միայն երկրի նախագահին:

ԱՐԱ ՏԱՐՏԻՐՈՍՅԱՆ

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակության ԺԳ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ
Երեւան 375010 Հանրապետության 47
Ֆաքս 374 1 562863
e-mail: azg2@arminco.com
www.azg.am
Գլխավոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՎԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221
Լրագրողների սենյակ / հեռ 581841
Համակարգչ. ծառայություն / հեռ 582483
Շուրջօրյա լրահավաք ծառայություն / հեռ 529353
Համակարգչային շարուածը «Ազգ» թերթի
Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով կամ ռադիոհեռուստատեսութեամբ առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում
"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 375010

ԱԶԳ

ԸՆԹԱՑԻԿ

Գրադարանները փակվում են, գրականության ճակատագիրը մնում է անորոշ

Իսահակյանի անվան գրադարանի նոր ղեկավարը

«Անհասկացող մարդիկ են այս գրադարան գահել ցանկացողները: Չե՞ք տեսնում՝ չեն ուզում գեղարվեստական գիրք կարդալ, դուք տեխնիկական գրադարանի մասի՞ն եք խոսում: Շատ դաժան եք վերաբերվում նոր զարգացող կապիտալիստների հետ, կտրում եք իրենց մի կտոր հացից: Կարելի է, չէ՞, «Իսահակյանի անվան գրադարանի տեխնիկական մասնաճյուղի» փոխարեն հայերեն տառերով շենքի վրա «խաչ, խորոված, էյաբաբ» գրել, երեկ գրադարանում կազմակերպված ասուլիսի ժամանակ ստեղծված իրավիճակից վրդովված եւ անկուշտ չինովնիկների վրա զայրացած ասում էր Ազատ Գասպարյանը: Այ անազգներ, այ թշվառներ, անգրագետներ, որ ոչինչ չեք կարդում, գոնե մտածեք գալիք սերնդի մասին, գրադարանները հո միայն այսօրվա համար չեն: Դարեր շարունակ պահեցին, պահպանեցին, հասցրեցին մեզ, կարդացինք, մարդ դարձանք, հիմա ուզում եք, որ 21-րդ դարում մարդ է՛լ չմնա: Այն էլ էլեկտրի, մայրերի մասին մտածեք, որ այս գրքերը մեզ հասցրեցին: Մեկդ, որ ձեզ տղամարդ եք համարում, այդ էլեկտրի չա՞փ էլ չկա՞»:

Խնդիրն Իսահակյանի անվան գրադարանի եւ նախկին պատգամավոր, իրավաբան Եղիա Շամշյանի միջեւ է: Ըստ Իսահակյանի անվան գրադարանի տնօրեն Հասմիկ Կարապետյանի, դեռեւս 1992 թ.-ից Եղիա Շամշյանը գրադարանի տարածքում սեփականություն ունենալու երազանք է փայփայում: Այս նպատակին հասնելու համար, Հ. Կարապետյանի պնդմամբ, Շամշյանը նույնիսկ կեղծարարությունների է դիմել: Դեռեւս 1999 թ., երբ գրադարանը ՀՀ կառավարությանն էր պատկանում, Կենտրոն թաղամասերանը տարածքը Շամշյանին պատկանող «Սմելա» ընկերությանը վարձավճարով հանձնելու պայմանագիր է կնքում: Հարցը լուծվում է դատական կարգով, գրադարանը մնում է իր տեղում:

2004 թ. ապրիլին կառավարության որոշմամբ ոչ բնակելի տարածքների շարքում Կենտրոն թաղամասերանին է հանձնվում գրադարանի այս մասնաճյուղը: Մինչ օրս գրադարանի ղեկավարությունը չորս անգամ դիմում է ներկայացրել թաղամասերանին՝ տարածքն անժամկետ եւ անհատույց վարձակալելու համար: «Թաղամասերանի տարբեր ափսաակիցներ անընդհատ հավաստիացնում էին, թե պայմանագիրն անպայման կկնքվի, պարզապես թաղամասերանը դեռեւս սեփականության վկայականները ձեռք չի բերել», ասաց Հ. Կարապետյանը:

Այնինչ մայիսի 5-ին «Սմելա» ՍՊԸ-ի գործադիր տնօրենը Հասմիկ Կարապետյանին տեղեկացնում է, որ մարտի 23-ին Կենտրոն թաղամասերանը որոշում է կայացրել տարածքը ընկերությանը տրամադրելու մասին եւ մի քանի օր անց ընկերության հետ վարձավճարի պայմանագիր կնքել: Հաջորդ օրը գրադարանի տնօրենը հանդիպում է թաղամասերանի Գագիկ Բեգլարյանին՝ ներկայացնելով իրավիճակը: Բեգլարյանը զարմանում է, որ խոսքը գրադարանի տարածքի մասին է, քանի որ Շամշյանն իրեն թյուրիմացության մեջ էր գցել՝ ասելով, թե դա չօգտագործվող տարածք է: Նշենք, որ գրադարանի այս մասնաճյուղը գործում է արդեն 50 տարի, ունի մոտ 1500 ընթերցող, 50 հազար կտոր գրականություն: Որ գրադարանը բավականին լավ է գործում, փաստում էին ասուլիսի ողջ ընթացքում շենքի մոտ հավաքված բազմաթիվ ընթերցողներ:

Չնայած Գագիկ Բեգլարյանը գրադարանի ղեկավարությանը հավաստիացրել էր, որ ընդամենը մի քանի օրում կվերանայեն հարցը եւ չեղյալ կհամարեն «Սմելայի» հետ կնքած պայմանագիրը, մայիսի 12-ին գրադարան են ներկայանում դատական ակտերի հարկադիր կատարման ծառայությունից եւ տեղեկացնում, որ ՀՀ տնտեսական դատարանի որոշմամբ Իսահակյանի անվան գրադարանի տեխնիկական գրականության բաժինը «Սմելային» վարձակալությամբ հանձնված տարածից պետք է վտարվի: Երեկ գրադարանի տարածք եկան ծառայության աշխատակիցները եւ սկսեցին գույքագրման աշխատանքները: Ըստ ծառայության վտարման բաժանմունքի պետ Տիգրան Թադեւոսյանի, իրենք գրականությունն ի պահ են ընդունելու եւ իրենց մոտ են պահելու մինչեւ տերերի հետ պահանջելը:

Հասմիկ Կարապետյանը հարկադիր կատարողներին տեղեկացրեց, որ վտարման մասին տեղյակ լինելուն պես դիմել է ՀՀ տնտեսական դատարան՝ գրականության տեղափոխման համար համապատասխան միջոցների, գրականությունը փաթեթավորելու, պահպանման ջերմաստիճանի պայմաններ ապահովելու համար վտարման գործընթացը մեկ ամսով հետաձգելու խնդրանքով: Պրն Թադեւոսյանն ասաց, որ իրենք իրավասու չեն գործընթացը դադարեցնել կամ հետաձգել, կանեն այն, ինչ կորոշի տնտեսական դատարանը:

Երեկ երեկոյան «Ազգի» հետ զրույցում Հասմիկ Կարապետյանը տեղեկացրեց, որ ինքը հարկադիր կատարողներին ասել է, որ եթե շարունակեն իրենց գործողությունները, ինքը ոստիկանությանը կտեղեկացնի, որ պետական գույքի հանդեպ ոտնձգություններ են իրականացվում: Հարկադիր կատարողները, լսելով տկն Կարապետյանին, նրա խնդրանքը՝ երկու -երեք շաբաթ հետաձգել վտարման գործողությունները՝ համապատասխան ձեւով կազմակերպելու համար, որոշում են դադարեցնել եւ սպասել տնտեսական դատարանի վճռին:

«Ես զուցեցի փոխքաղաքապետ Արման Սահակյանի հետ, խնդրեցի նրա միջնորդությունը, որպեսզի քաղաքապետ Երվանդ Զախարյանը Գագիկ Բեգլարյանին հորդորի չեղյալ համարել «Սմելայի» հետ կնքած պայմանագիրը: Փոխքաղաքապետը խոստացավ պրն Զախարյանին ներկայացնել իրավիճակը, ասաց տկն Կարապետյանը: Ապա գնացի տնտեսական դատարան, որտեղ դատավորն ասաց, որ երկուսդ էլ Հայաստանում Մ. Նահանգների դեսպանատան հանրային կապերի բաժնի, ԱՄՆ ժողովրդավարության հանձնաժողովի դրամաշնորհային օժանդակությամբ: Հարցվածների միջին տարիքը 40 է, ընտանիքի անդամների միջին թիվը՝ 4,46, սեռը՝ 40,6 արական, 59,4՝ իգական:

«Կարդացե՞լ եք ՀՀ սահմանադրությունը» հարցին հարցվածների 60,2 տոկոսը պատասխանել է՝ ոչ, 25 տոկոսը՝ մասամբ, 14,8 տոկոսը՝ այո: «Մասնակցե՞լ եք 2003 թվականի մայիսին անցկացրած ՀՀ սահմանադրության փոփոխությունների հանրաքվեին» հարցին 60,4 տոկոսը տվել է դրական, իսկ 39,6 տոկոսը՝ բացասական պատասխան: Հարցվածների 60,7 տոկոսը տեղյակ չէ, թե սահմանադրական փոփոխությունների քանի նախագիծ է այժմ շրջանառվում, 23, 2 տոկոսը կարծում է, որ դրանց թիվը շատ է, 6,7 տոկոսը գիտի, որ գոյություն ունի 3 նախագիծ, 4,9 տոկոսը՝ 2, իսկ 4,5 տոկոսը՝ 1: «Ովքե՞ր են ձեզ հայտնի նախագծերի հեղինակները, կամ ո՞ւմ անունից են դրանք ներկայացված» հարցին 74, 9 տոկոսը պատասխանել է՝ չգիտեմ, իսկ 25, 1 տոկոսը նշել է հետեւյալ մարդկանց անունները՝ Արշակ Սադոյան (114 հոգի), Վիկտոր Դալլաքյան (56), Սուքիաս Ավետիսյան (43), Սերգո Երիցյան (21) եւ այլն:

Սահմանադրական փոփոխությունները հարցվածների 55,2 տոկոսին չի հետաքրքրում, դրանք հետաքրքրում են 44,8 տոկոսին միայն: «Սահմանադրական փոփոխությունների որեւէ նախագծի ծանո՞թ եք, կարդացե՞լ եք մասամբ կամ ամբողջությամբ» հարցին 64,2 տոկոսը պատասխանել է ոչ, 35,8 տոկոսը՝ այո:

«Երկրի նախագահը պե՞տք է ունենա Ազգային ժողովըցրելու իրավունք» հարցին 50,2 տոկոսը տվել է դրական, 49,8 տոկոսը՝ բացասական պատասխան: «Հանուն Հայաստանի ապագայի որոշ դեպքերում կարելի՞ է խախտել սահմանադրությունը» հարցին 71 տոկոսը պատասխանել է՝ այո, 29 տոկոսը՝ ոչ: Սահմանադրական փոփոխությունների 3 նախագծերը, կամ դրանցից որեւէ մեկը ուսումնասիրելու մտադրություն ունի հարցվածների 59,7 տոկոսը, իսկ 40,3 տոկոսի մտքով բնավ չի անցնում ծանոթանալ դրանց: Եվ վերջապես, «Մտադի՞ր եք մասնակցել 2005 թվականին անցկացվելիք սահմանադրական հանրաքվեին» հարցին 71 տոկոսը պատասխանել է՝ այո, 28,8 տոկոսը՝ ոչ:

ՌՈՒԶԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ

Հ. Գ. Երեկ երեկոյան արդարադատության նախարարության մամուլի գրասենյակից ստացված հաղորդագրության համաձայն, Տիգրան Մեծի 30 հասցեում (Իսահակյանի անվան գրադարանի մասնաճյուղ) իրականացվող կատարողական գործողությունները հետաձգվել են 10 օրով: Նման որոշում ընդունվել է հաշվի առնելով, որ գրադարանում առկա շուրջ 50 հազար գրադարանային նմուշների հաշվառման, տեղափոխման եւ պահեստավորման համար մասնագիտական մոտեցում եւ հատուկ պայմաններ են անհրաժեշտ: Հատկացված ժամկետը գրադարանի տնօրենությանը հնարավորություն կտա լուծելու այդ խնդիրը:

Արտախորհրդարանական ուժերը՝ հոգուտ ընտրական օրենսգրքի փոփոխությունների

Արտախորհրդարանական 25 կուսակցությունների մասնակցությամբ երեկ արդեն երրորդ անգամ քննարկվեց ընտրական օրենսգրքում նշյալ կուսակցությունների կողմից առաջարկված փոփոխությունների ու լրացումների հարցը: Արտախորհրդարանական ուժերը գտնում են, որ գարնանային նստաշրջանում ընտրական օրենսգրքի փոփոխությունների քննարկումները բավարար չէին եւ չեն կարող արտահայտել հասարակության լայն խմբերի տեսակետներն ու շահերը, քանի որ դրանց մասնակցում է վերոնշյալ խմբերի 10 տոկոսից ոչ ավելին:

«Հասարակական երկխոսությունների, նախաձեռնությունների կենտրոն», «Համայնք եւ իրավունք» ՀԿ-ները գտնում են, որ անհրաժեշտ է խորհրդարանական քննարկումներին զուգահեռ ծավալել լուրջ քննարկում արտախորհրդարանական ուժերի մասնակցությամբ:

Մասնակիցներն ակնկալում են քննարկումների արդյունքում ստեղծել հիմնավոր փաստաթուղթ, որը կներկայացվի ԱԺ՝ օրենքի վերջնական տարբերակի երկրորդ ընթերցման ժամանակ հաշվի առնելու ակնկալիքով: Իսկ ստեղծված փաստաթուղթն ԱԺ-ի ուշադրությանն արժանացնելու համար, «Համայնք եւ իրավունք» ՀԿ-ի նախագահ Սամվել Մկրտչյանի խոսքերով, իրենք կկիրառեն լոբբիինգի բոլոր ձեւերը, սակայն մինչ այդ պետք է փաստաթուղթն ունենալ:

Թե ինչ կստացվի վերջում եւ ինչ հանրագումարի կգան արտախորհրդարանական ուժերի մասնակիցները, դժվար է ասել, բայց երեկվա դրությամբ որոշ մասնակիցներ անգամ դեմ էին մեկ միասնական փաստաթուղթ ստորագրելուն: ԱԻՄ կուսակցության նախագահության անդամ Արկադի Վարդանյանն, օրինակ, առաջարկում է ստորագրվելիք փաստաթղթի մեջ նշել, թե որ առաջարկի հեղինակը ով է, քանի որ լինում են խիստ ծայրահեղ առաջարկներ: Նախագահության անդամը նշեց, որ ոմանք առաջարկում են ընտրություններն անցկացնել համամասնական ընտրակարգով, իսկ ոմանք էլ առաջարկում են մեծամասնականի տեղերն ավելացնել:

ԳՈՏԱՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՍՍՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գյումրեցիներին եւս փոփոխությունները քիչ են հետաքրքրում

ՀՀ սահմանադրության փոփոխությունների նկատմամբ հասարակության հետաքրքրության աստիճանը պարզելու նպատակով Գյումրու ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբը (նախագահ՝ Լետն Բարսեղյան) մարտի 10-30-ը անցկացրել է զանգվածային եւ անստորագիր հարցում Գյումրու բնակարաններում, որին ընդհանուր թվով մասնակցել է 1000 հոգի: Հետազոտությունը կատարվել է



«Կարդացե՞լ եք ՀՀ սահմանադրությունը» հարցին հարցվածների 60,2 տոկոսը պատասխանել է՝ ոչ, 25 տոկոսը՝ մասամբ, 14,8 տոկոսը՝ այո: «Մասնակցե՞լ եք 2003 թվականի մայիսին անցկացրած ՀՀ սահմանադրության փոփոխությունների հանրաքվեին» հարցին 60,4 տոկոսը տվել է դրական, իսկ 39,6 տոկոսը՝ բացասական պատասխան: Հարցվածների 60,7 տոկոսը տեղյակ չէ, թե սահմանադրական փոփոխությունների քանի նախագիծ է այժմ շրջանառվում, 23, 2 տոկոսը կարծում է, որ դրանց թիվը շատ է, 6,7 տոկոսը գիտի, որ գոյություն ունի 3 նախագիծ, 4,9 տոկոսը՝ 2, իսկ 4,5 տոկոսը՝ 1: «Ովքե՞ր են ձեզ հայտնի նախագծերի հեղինակները, կամ ո՞ւմ անունից են դրանք ներկայացված» հարցին 74, 9 տոկոսը պատասխանել է՝ չգիտեմ, իսկ 25, 1 տոկոսը նշել է հետեւյալ մարդկանց անունները՝ Արշակ Սադոյան (114 հոգի), Վիկտոր Դալլաքյան (56), Սուքիաս Ավետիսյան (43), Սերգո Երիցյան (21) եւ այլն:

Սահմանադրական փոփոխությունները հարցվածների 55,2 տոկոսին չի հետաքրքրում, դրանք հետաքրքրում են 44,8 տոկոսին միայն: «Սահմանադրական փոփոխությունների որեւէ նախագծի ծանո՞թ եք, կարդացե՞լ եք մասամբ կամ ամբողջությամբ» հարցին 64,2 տոկոսը պատասխանել է ոչ, 35,8 տոկոսը՝ այո:

«Երկրի նախագահը պե՞տք է ունենա Ազգային ժողովը ցրելու իրավունք» հարցին 50,2 տոկոսը տվել է դրական, 49,8 տոկոսը՝ բացասական պատասխան: «Հանուն Հայաստանի ապագայի որոշ դեպքերում կարելի՞ է խախտել սահմանադրությունը» հարցին 71 տոկոսը պատասխանել է՝ այո, 29 տոկոսը՝ ոչ: Սահմանադրական փոփոխությունների 3 նախագծերը, կամ դրանցից որեւէ մեկը ուսումնասիրելու մտադրություն ունի հարցվածների 59,7 տոկոսը, իսկ 40,3 տոկոսի մտքով բնավ չի անցնում ծանոթանալ դրանց: Եվ վերջապես, «Մտադի՞ր եք մասնակցել 2005 թվականին անցկացվելիք սահմանադրական հանրաքվեին» հարցին 71 տոկոսը պատասխանել է՝ այո, 28,8 տոկոսը՝ ոչ:

ՌՈՒԶԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ

Արշակ Սադոյանը կոչ է անում կանխել իմիտացիոն գործընթացը

«Սահմանադրության միտումնավոր սխալ կառույցը Հայաստանի բոլոր դժբախտությունների հիմքն է: Չլիներ դա, չէինք ունենա հոկտեմբերի 27, ապրիլի 13, դատական համակարգի կամայականություն, «ՏԵՑ-ի կռուգ», թալան...», այսպիսի եզրահանգմամբ սկսեց իր խոսքն Արշակ Սադոյանը երեկ հրավիրած ասուլիսում:

«Նախագահի լայնածավալ լիազորությունները հավերժացնող եւ դրսի ժողովրդավարական կառույցների աչքերին թոզ փչելու նպատակով ստեղծված սահմանադրության փոփոխությունների նախագիծը կոչել կոալիցիայի նախագիծ՝ ուղղակի անհեթեթություն է», սա բանախոսի հաջորդ եզրակացությունն էր: Այն հիմնավորվեց կոալիցիոն եռյակի նախընտրական ծրագրերի դրույթների մեջբերմամբ:

Արշակ Սադոյանը հիշեցրեց. «ՀՅԴ-ն կարեւորում էր պառլամենտական պետության ստեղծումն ու ծրագրերով առաջնորդվելու սկզբունքը: ՕԵԿ-ն էլ տոգորված էր խորհրդարանի իրավասությունների ընդլայնմամբ: ՀՀԿ-ն չէր կարող կողմ լինել վարչապետի մագից կախված լինելու կարգավիճակին, բայց ինչ-ինչ նկատառումներից ելնելով համաձայնեցին, ու խորհրդարանի նկարովի մեծամասնությունը իր ուժն օգտագործելով առաջին ընթերցմամբ անցկացրեց փոփոխությունների նախագիծը»: Իսկ նկատառումները Սադոյանի համոզմամբ պարտադրվել են կոալիցիայի չորրորդ կողմի՝ նախագահի կողմից:

Նշված նախագիծն անվիճելիորեն գիջում է ներկայացված մյուս երկուսին ըստ «Ազգային ժողովրդավարների դաշինք» կուսակցության, որը պատրաստվում է մյուս ընդդիմադիրների՝ առաջին հերթին «Արարություն դաշինքի» եւ «Ազգային միաբանության» հետ պայքարել սահմանադրության փոփոխությունների իմիտացիոն, վտանգավոր հետեւանքներով հղի գործընթացը կանխելու համար: Այդ նպատակով հանրությանը տրագիր տեսքով ներկայացվելու են երեք նախագծերի տարբերությունները համեմատական գնահատականի կտրվածքով: Մինչ այդ տեղերում՝ Արշակ Սադոյանի պարզաբանմամբ ամեն մեծ քաղամասերում ստեղծվելիք շաբաթներում հանրությանն իրազեկելու են անցկացված նախագծի վնասներին: Նպատակը հանրաքվեն կեղծելու հեռանկարը բացառելն է, այլապես Հայաստանի համար փորձարկի հավասարեցված հանրաքվեն պատուհաս կդառնա հայաստանաբնակների համար, ինչպես պնդում է Սադոյանը ու հավաստիացնում. «Հասկանալով հարցի կարեւորությունն՝ իսկապես ընդդիմադիրները երեւի պիտի միանան»: Սրանով բանախոսը մեղմեց միասնականության խնդիրը, բայց ընդգծեց, որ դժվարություններ կան ֆինանսական հնարավորությունների առումով: Անկախ դրանից, «ԱԺԴ-ն դիմում է բոլոր քաղաքական ուժերին, հասարակական կազմակերպություններին, անհատներին եւ կոչ անում որ առաջ համախմբվել եւ համատեղ ջանքերով «ոչ» ասել այս ազգադավ սահմանադրության բարեփոխումներին», ինչպես ասված է կուսակցության ծավալուն հայտարարությունում: Այն հռչակվել է երեկ հրավիրված ասուլիսի ընթացքում, որի ժամանակ Արշակ Սադոյանը տարբեր տեսանկյուններից ձիշտ համարեց ե՛ւ ընդդիմության դիրքորոշումը, թե «մեկ է, ինչ ուզեն, այն էլ անելու են անկախ իրենց մասնակցել չմասնակցելուց», ե՛ւ իր մասնակցությունը «հիմա իրավունք ունենք ասելու՝ լավ նախագծեր կային, անցավ վատը»:

ՆԱՆՈ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Հարցազրույց

1-ին էջից

Մանավանդ Իռլանդիայից Վիլյամ Շաբասի ելույթը շատ տպավորիչ էր: Ինչ-որ ձեւով Ալֆրեդ դե Զայասի միջոցով հնչեց նաեւ ՄԱԿ-ի ձայնը: Թեեւ ինձ համար ոչ այնքան տպավորիչ, որովհետեւ նա խոսում էր ոչ թե Հայոց ցեղասպանության մասին, այլ ընդհանրապես բնութագրում էր ցեղասպանությունը՝ փորձելով ստեղծել տպավորություն, թե այդ բոլորը վերաբերում են Հայոց ցեղասպանությանը: Այսինքն՝ Զայասն առանց շեշտելու բնորոշեց Հայոց ցեղասպանությունը: Այնուամենայնիվ, համաժողովին մեր պետության մասնակցությանն անդրադառնալիս հարկ եմ համարում հասկացնում են, որ ճանաչումից այն կողմ որեւէ բանի չսպասենք: Թեեւ ոմանք ներողության մասին արտահայտվում են, բայց երբեք հաստատման մասին, ո՛չ նյութական, ո՛չ հողային, ո՛չ էլ նույնիսկ խոսում են պատմական հուշարձանների պահպանման շուրջը:

- Այսինքն, այս ամենը վերաբերում է նաեւ Թաներ Ակչամին:

- Այո, նույնիսկ Ակչամին: Ես նրան անձամբ ասել եմ, որ ինձ գնահատում եմ իբրեւ հայրենասերի: Բայց մենք երբեմն տարվում ենք մտորումներով, թե թուրք գիտնականները ցեղասպանության հարցում ճիշտ մեզ պես են մտածում: Եթե նկատել էիք, համաժողովին Բասքին Օրանն ասաց, որ ուզում են Հալիլ Բերքայի կամ Թաներ Ակչամի պես մտավորականներ տեսնել նաեւ հայ գիտնականների մեջ: Այսինքն, ուզում են, որ այստեղ հայ գիտնականներից որեւէ մեկը հայտարարի. «Ցեղասպանություն չի եղել»: Սա է Օրանի խոսքերի մեկնաբանությունը: Ի դեպ, Օրանը, որն իմ կողքին էր նստած, երբ Արկադի Ղուկասյանը ելույթ էր ունենում եւ հիշատակեց Արեւմտահայաստանի մասին, ինձ հարցրեց. «Ո՞վ է ելույթ ունեցողը»: Իմանալով, որ Լեռնային Ղարաբաղի նախագահն է, Օրանն ասաց. «Տեսնո՞ւմ եք ինչպիսի ազգայնամոլ անձնավորություն է, հողերի մասին է խոսում»: Դրա համար եմ ասում, որ նրանց համար փոխհատուցման, հողային զիջումների խնդիրներ գոյություն չունեն: Պարզապես ցանկանում են այնուհետեւ ժառանգությունից ձերբազատել իրենց պետությունը: Բայց եւ այնպես, նրանք ինչ-որ ձեւով մեր անտղակի դաշնակիցներն են նաեւ, որովհետեւ երեկ Թուրքիայում ցեղասպանության մասին առհասարակ չէր հիշատակվում, իսկ այսօր դա լուրջ հարց է դարձել շնորհիվ նրանց աշխատանքի: Այնուամենայնիվ, ես կողմ եմ հայ-թուրքական երկխոսությանը, առավել եւս միջազգային գիտաժողովներում հայ եւ թուրք գիտնականների հանդիպումներին:

- Պրն Ազատյան, ինչպես գիտեք, թուրքերը Մեծ եղեռնի 90-րդ տարելիցից դեռեւս ամիսներ առաջ «հայկական ցունամիի» մտավախություն էին ապրում: Եղա՞վ այդ ցունամին:

- Կարծում եմ, ցունամին ավելի շուտ եղավ մեր մտքերում, ինչպես նաեւ Հայաստանում եւ սփյուռքում, բայց ցեղասպանության 90-րդ տարելիցը միջազգային մամուլում վերստին մնաց լուսանցքային հարց: Այդ մամուլն ավելի շուտ ուշադրություն դարձրեց ֆաշիզմի դեմ տարած հաղթանակի 60-ամյակին, Օսվենցիմին, քան Մեծ եղեռնին:

- Փաստորեն, ասացիք, որ դա չկատարվեց այն չափով, ինչ մենք էինք ակնկալում: Միգուցե դրան նպաստեց Թուրքիայի վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանի նամակը ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանին:

- Կարծում եմ, Էրդողանի նամակը ճիշտ այդ նպատակով էր պատրաստված: Թուրքերը, ունենալով լավ դիվանագիտություն, ցունամիին դիմակայելու համար միջոցներ էին որոնում, փորձեցին չեզոքացնել դրա ազդեցությունն Էրդողանի նամակով: Իրականում նամակը Հայաստանին ծուղակի մեջ գցելու համար մտածված խաղ էր: Արդեն ձայնակցողներ էլ եղան՝ օրինակ, նախագահ Բուշն ապրիլի 24-ի ելույթում հարկ համարեց ընդգծել Էրդողանի «սխանչելի առաջարկի» մասին: Նրան միացավ նաեւ Գերմանիայի կանցլեր Գերհարդ Շրյոդերը՝ բարձր գնահատելով այդ առաջարկը: Բուշն ու Շրյոդերն անկասկած գիտեին, որ դա Թուրքիայի սարքած քակարդն է: Նրանք, փաստորեն, հայերին ակնարկում էին, որ դուք ուժ չունեք, հետեւաբար պետք է ընկնեք քակարդը, դրանով էլ դուրացնեք մեր գործը: Ակնհայտ է, որ Էրդողանի առաջարկի համաձայն հանձնախումբ կազմելը, պարզելու՝ ցեղասպանություն եղե՞լ է, թե՞ ոչ, մեզ համար կնշանակի 90 տարի հետ գնալ: Ուրախ եմ, որ մեր բոլոր գիտնականները, պետության ղեկավարները հայտարարեցին. «Ցեղասպանության փաստը վիճարկման ենթակա չէ»: Չնայած միջազգային պատմագրությունը հաստատել է, սակայն Հայոց ցեղասպանությունը ՄԱԿ-ում արձանագրվեց իբրեւ ծանոթագրություն: Այսինքն, պաշտոնական հաստատում, այնպես, ինչպես հրեական ցեղասպանության պարագայում էր, չկատարվեց: Ըստ երեւույթին դրա հավանականությունն առայժմ չկա, որովհետեւ կարված է ուժի հետ: Այնուամենայնիվ, ես չեմ ուզում թերահավատ լինել կամ հոռետես, թե մեր տարած աշխատանքը նշանակություն չունի: Ընդհակառակը, ունի: Միաժամանակ անգլերեն եւ ֆրանսերեն, ինչպես նաեւ թուրքերեն ցեղասպանության մասին հսկայական գրականություն է մշակվել: Շնորհիվ այս ամենի մենք բացի պատմականից, նաեւ քաղաքական խաղաթղթեր ստացանք: Ուրախ եմ, որ ցեղասպանության հարցն, ի վերջո, մեր արտաքին քաղաքականության օրակարգում է: Դա ունեցավ իր կշիռը միջազգային շրջանակներում:

- Որքան էլ թուրքերը հանդես գան ժխտողականության դիրքերից, այնուամենայնիվ, Հայոց ցեղասպանության հարցը նաեւ Թուրքիայի օրակարգում է: Դրանից խուսափել չեն կարող: Սակայն ես ուզում եմ իմանալ Ձեր կարծիքը Էրդողանի նամակին Քոչարյանի պատասխանի մասին :

- Կարծում եմ, այդ պատասխանը դրական պետք է գնահատել: Այն քակարդը, որ Էրդողանը ջանացել է լարել, նախագահ Քոչարյանը փաստորեն շրջանցեց, ասելով. «Պետությունների պատասխանատվությունը պատմաբանների պատասխանատվությունից տարբեր է»: Նա միաժամանակ ընդգծեց, որ մեզ համար պատմաբանների եզրակացությունը հստակ է, ուստի նստենք եւ գործնական քայլերի դիմենք, բացենք սահմանները, դիվանագիտական հարաբերություններ հաստատենք: Կարծում եմ, պատասխանում ամեն ինչ ասված է:

- Վաշինգտոնն ինչպե՞ս է մոտենում դրան, այն առումով, որ Էրդողանն առաջարկում է սկզբում լուծել պատմական հարցերը, հետո մտածել հարաբերության մասին, իսկ Քոչարյանը պատասխանում՝ ասելով, թե նախ պետք է միջոցեպական շփումներ հաստատել, ապա նոր քննարկման դնել բոլոր հարցերը: Եթե Վաշինգտոնը շահագրգռված է հայ-թուրքական հարաբերությունների կարգավորմամբ, նրա համար ավելի ընդունելի պետք է լինի Քոչարյանի պատասխանը, քան Էրդողանի առաջարկը:

- Ես չեմ կասկածում, որ Էրդողանի նամակում նախանշված քաղաքական ուղեգիծը ներդաշնակված էր Վաշինգտոնի հետ: Ի վերջո, նամակից մի քանի օր հետո՝ ցեղասպանության 90-րդ տարելիցին նախագահ Բուշի ելույթում Էրդողանի առաջարկի մասին հիշատակելը չէր կարող պատահական լինել: Հետեւաբար նամակն ու առաջարկը համադրված մի քայլ էին, եւ Վաշինգտոնը տեղյակ էր այդ մասին: Մեզ հասկացրին, որ մտնենք նախապես պատրաստված քակարդի մեջ, որպեսզի ամերիկացիներին ձերբազատենք տհաճ մի հարցից: Հարկ է սակայն նշել, որ ԱՄՆ-ում մեր լոբբիստական աշխատանքը որքան էլ անգոհացուցիչ լինի, կատարում է իր դերը: Անշուշտ, թուրքերը շատ ավելի մեծ համեմատություններով են տեսնում դրա ուժը, բայց հայկական լոբբին որոշակի ուժ ունի, եւ դա Բուշի հայտարարությունում գտավ իր արտահայտությունը: Ամեն տարի, երբ ապրիլի 24-ին նա հայտարարություն է անում, նշանակում է ԱՄՆ-ի ծագումով հայ քաղաքացիների նկատմամբ պարտավորվածություն է զգում:

- Ձեր կարծիքով, նամակագրությունը կնպաստի՞ հայ-թուրքական հարաբերությունների կարգավորմանը, որովհետեւ դրա շնորհիվ կարծես Վարչապետ Քոչարյանն ու Էրդողանը հանդիպելու են: Ի վերջո, այդ նամակներն, անկախ բովանդակությունից, պաշտոնական փաստաթղթեր են նաեւ:

- Նամակագրությունը քաղաքական խորհի մակերեսն է: Կարծում եմ, խորքում թուրքերն այս կամ այն կերպ պետք է լուծում տան ցեղասպանության հարցին, որպեսզի վերանա եվրոպական ինտեգրացման ճանապարհի խոչընդոտներից մեկը: Տակավին ունեն Կիպրոսի խնդիր, քրդական եւ մարդու իրավունքների հարցեր, առ այսօր բանտարկված են մտավորականներն ու գրողները: Ինձ համար ամենազզվելին, բայց ոչ զարմանալին, եվրոպական պետությունների անբարոյականությունն է: 1987 թ. Եվրոխորհրդարանը որոշում էր ընդունել, որ Թուրքիան չի կարող անդամակցել Եվրամիությանը՝ շրջանցելով Հայոց ցեղասպանության հարցը: Այսօր ոչ միայն Թուրքիան է փորձում շրջանցել, այլեւ նրան այդ մասին հուշում են Գերմանիան, նույնիսկ Ֆրանսիան, թե ցեղասպանության ճանաչումը նախապայման չէ ԵՄ-ին անդամակցության համար: Սա նշանակում է, որ Թուրքիան կարող է այլընտրանքային ձեւերով եվրոպական քաղաքական ընտանիքի մաս կազմել:

- Ինչպե՞ս եք գնահատում թուրք-ամերիկյան հարաբերությունների ներկա վիճակը: Ինչպես գիտեք, վերջին շրջանում կարծես հարթվում են նրանց տարաձայնությունները:

- Այդպես էլ պիտի լիներ: Որքան էլ մենք ցանկանանք, որ Թուրքիան կորցնի իր նշանակությունն ԱՄՆ-ի համար, դժբախտաբար, դա տեղի չի ունենում: Թուրքիան քաղաքական հսկա դամբարան է, մանավանդ տարածաշրջանում, որտեղ Իսրայել-Թուրքիա գործակցությունն ամերիկյան նվաճողական քաղաքականության բաղադրիչ մասն է: Առանց այդ գործակցության չի կարող լինել նշված քաղաքական իրագործումը: Թուրքիան իրագործման համար հենարան է: Այդ է պատճառը, որ բոլոր տարաձայնություններով, Փոլ Վոլֆովիցի սպառնալիքներով հանդերձ, թե կճանաչենք Հայոց ցեղասպանությունը, այս երկու երկրները կարողացան լեզու գտնել: Թուրքիան զիջեց՝ դա նախատեսված էր, այլապես կկանգներ լուրջ բարդությունների առջեւ:

- Պրն Ազատյան, ԱՄՆ-ը սկզբնական շրջանում Թուրքիայի միջոցով էր գործում Անդրկովկասում եւ Միջին Ասիայում: Հակաքաղաքական պատերազմից առաջ նա ռազմական ներկայություն ապահովեց այս տարածքներում եւ Թուրքիայի կարիքն առանձնապես չի զգում: Ինչ կասեք:

- Դա մեզ համար նոպաստավոր է, երանի թե ավելի շատ, եւ մենք ուղղակի ԱՄՆ-ի հետ հաշվի նստենք, որովհետեւ եթե Հայաստանն ԱՄՆ-ի հետ հաշվի նստի, ապա ամերիկացիները նկատի կառնեն ամերիկահայության կշիռը քաղաքական սակարկություններում: Հայաստանն այն երկիրը չէ, որ հակակշիռ չունենա Մ. Նահանգներում: Երանի թե այս կացությունն ավելի շուտ ստեղծված լիներ, եւ մենք կարողանայինք մեր կոմպլեքսներս քաղաքականությունն իրականացնել Թուրքիայից անկախ՝ ԱՄՆ-ի հետ: Ակնհայտ է, որ Հայաստանն ԱՄՆ-ի հետ ավելի հեշտ լեզու կգտնի, քան Թուրքիայի հետ:

- Ինչպե՞ս եք տեսնում հայ-թուրքական հարաբերությունների ապագան:

- Կարծում եմ, որոշակի տեղաշարժեր կլինեն: Թուրքերը, ինչպես ցույց է տալիս Էրդողանի նամակը, մակերեսային քայլեր են կատարելու, բայց խորքային զիջում՝ չեմ կարծում: ԱՄՆ-ը ներկայություն է ապահովել Կովկասում: Եթե չլինի ամերիկահայության կշիռը, Հայաստանը բոլորովին դուրս կմնա ամերիկյան քաղաքական ազդեցությունից: Ի վերջո, ԱՄՆ-ը պետք է սիրաշահի Հայաստանին, որպեսզի հեռացնի Ռուսաստանից: Ամեն տեղ ռումբերով չէ, որ երկրներն իրեն է ենթարկելու: Որոշ դեպքերում նա պետք է որդեգրի նաեւ սիրաշահելու քաղաքականությունը: Կարծես Հայաստանն այս ծիրում է:

- Ինչ հարցի կուզենայիք պատասխանել, որը չի տրվել:

- Թերեւս երկու խոսք ասեի Հայաստանի ներկա իրավիճակի մասին: Դժբախտաբար եւ այստեղ, եւ արտասահմանում երկրի իշխանությունների դեմ գոյություն ունի ուժեղ պայքար, որովհետեւ ժողովրդի զգալի մասը չքավոր է: Դրան արձագանքում է հայաստանյան մամուլը, իսկ արձագանքը տարածվում է սփյուռքում: Անշուշտ, ես գիտեմ պետության եւ պետական այրերի այսպես կոչված մեղքերի մասին: Սակայն գիտեմ նաեւ, որ Հայաստանը կարող է շահել միայն կայունությամբ, եւ այդ մասին միշտ շեշտում եմ իմ հոդվածներում: Բոլոր այն ընդդիմադիրները, որոնց հետ հանդիպել եմ, ասում են, որ «ներկայիս իշխանությունները բավականին կերել են, թող հեռանան, հերթը մերն է»: Դա ժողովրդի կյանքում որեւէ դրական փոփոխություն չի մտցնելու, եւ ամենակարեւորը՝ Հայաստանի այս կացությունը շատ ցիչ տոկոսով է կախված մեր պետության կամ անհատների անելիքներից: Հայաստանի ճակատագիրը, դժբախտաբար, կանխորոշում են տարածաշրջանային քաղաքականությունը եւ միջազգային ուժերի անհատ մրցապայքարը: Որքան էլ այս արտահայտությունն ընդունված չլինի Հայաստանում, պետք է ասեմ՝ սա է իրողությունը:

«Հայ-թուրքական հարաբերություններում տեղաշարժ կլինի, սակայն Հայաստանն ավելի հեշտ լեզու կգտնի ԱՄՆ-ի, քան Թուրքիայի հետ»

ՀԱՍՊԻՐ ՇԱՔԱՐՅԱՆ

Խոհագրություն

Մեծն Ալեքսանդր Սարուխան

ՀԱԿՈԲ ՀԱԿՈԲՅԱՆ

Ասուած օրը մամուլի մեջ երեւում էին Սարուխանի տպանիչ ծաղրանկարները՝ ուղղված ափսարհում «դեմոկրատիայի եւ ազատության սպառնացողներու» դեմ: Պատերազմի տարիներուն 1000-ից ավելի ծաղրանկարներ են տպել օրաթերթում: Անշուշ, Սարուխանը նույն մարտիկն էր՝ իր զենքով, որ իր սուր գրիչն էր, եւ իր կյանքը վտանգելով՝ բռնատիրության դեմ կենացմահու պայքար էր մղում քաջաբար:

Պարզ էր, որ Սարուխանի հերոսները, որոնց միջոցով արվեստագետը ընթերցողին ներկայացնում էր պատերազմում տիրող օվա վիճակը, դաշնակից եւ ֆաշիստական պետությունների ղեկավարներն էին. Չերչիլը, Ստալինը՝ գերագույն հրամանատարը սովետական բանակի, որուն նաեւ մաս էին կազմում մեր փոքր ժողովրդի հարյուր հազարավոր զավակները, որոնցից շուրջ 350.000-ը զոհվեցին: Մի պատերազմ, որ հայ ժողովուրդը դեր պետք չէր որ ունենար: Բայց այսպես է 20-րդ դարու պատմությունը:

Ուրեմն՝ Սարուխանի ծաղրանկարներուն գլխավոր հերոսները, նայած ափսարհում այդ օրը տիրող վիճակին, գործող անձինք էին՝ Ստալինը, Չերչիլը եւ շարունակելով՝ անցնել Մեծավոր Արեւելք եւ հասնել Կովկաս:

Սարուխանի սպանիչ ծաղրանկարները՝ ուղղված ափսարհում «դեմոկրատիայի եւ ազատության սպառնացողներու» դեմ: Պատերազմի տարիներուն 1000-ից ավելի ծաղրանկարներ են տպել օրաթերթում: Անշուշ, Սարուխանը նույն մարտիկն էր՝ իր զենքով, որ իր սուր գրիչն էր, եւ իր կյանքը վտանգելով՝ բռնատիրության դեմ կենացմահու պայքար էր մղում քաջաբար:

Պարզ էր, որ Սարուխանի հերոսները, որոնց միջոցով արվեստագետը ընթերցողին ներկայացնում էր պատերազմում տիրող օվա վիճակը, դաշնակից եւ ֆաշիստական պետությունների ղեկավարներն էին. Չերչիլը, Ստալինը՝ գերագույն հրամանատարը սովետական բանակի, որուն նաեւ մաս էին կազմում մեր փոքր ժողովրդի հարյուր հազարավոր զավակները, որոնցից շուրջ 350.000-ը զոհվեցին: Մի պատերազմ, որ հայ ժողովուրդը դեր պետք չէր որ ունենար: Բայց այսպես է 20-րդ դարու պատմությունը:

Ուրեմն՝ Սարուխանի ծաղրանկարներուն գլխավոր հերոսները, նայած ափսարհում այդ օրը տիրող վիճակին, գործող անձինք էին՝ Ստալինը, Չերչիլը եւ Մուսոլինին: Իսկ Սարուխանը ծաղրանկարիչ է: Պատերազմից հետո, երբ «խաղաղությունը» տիրեց երկրագունդի վրա եւ ջախջախված էր ֆաշիզմը, միլիոնավոր անմեղ մարդիկ սպանվել էին մարտի դաշտում, խաղախիթ կոչված պետություններու ղեկավարներուն (ոճրագործ) շահերուն եւ իմպերիալիստներուն համար: Ամենայն դեպս չէին մոռացվել մարդկային զոհողությունները եւ նվիրվածությունը, եւ ուր կամ կանոխ հիշվում էին եւ ըստ արժանվույն գնահատվում: Այդպես ալ Սարուխանը պատերազմի ավարտից հետո Եվրոպայում դաշնակից բանակներու գլխավոր հրամանատար եւ հետագային Միացյալ Նահանգներու պրեզիդենտ Այզենհաուերի կողմից տրված պատվո շքանշանի արժանացավ պատերազմի առաջին օրից մինչեւ վերջին օրը հաղթանակի գործին իր անձնազոհ նվիրումին համար:

«Մեր սուրը հաղթական դրեցինք պատյան»,- ասում է մեր մեծ բանաստեղծը, բայց Սովետական Միությունը չէր կարող իր սուրը պատյան դնել: Նա երեւի գիտեն ալ անկողինին մեջ սուրը ձեռին էր քնում: Նա առանց մարդ սպանելու, առանց թշնամի ինչպես կարող էր պարել. եթե արտաքին թշնամի չկար, ինչպես կարող էր ներքին թշնամի ալ չլլալ: Ինքը՝ բոլշեւիկյան ռեժիմը առանց թշնամիի կյանք չուներ: Պետք էր որ թշնամիներ փնտրեր եւ հայտնաբերեր, մինչեւ որ պարզվեց, որ Սովետական Միության, սովետական ժողովուրդներու ամենաիրական թշնամին ինքը սովետական պետությունն է:

Այս հոդվածը մեր մեծ մտավորական Սարուխանի մասին է: Եթե «դաշնակից պետություններու» մեկ մասը Սարուխանին շնորհակալություն հայտնեց պատերազմում իր մատուցած ծառայության համար, սովետական ռեժիմը Սարուխանին արձանագրեց իր անբաղձալիներու գրքին մեջ: Ահավասիկ թե ինչու:

Բայց մի բան հիշեցի, նեռողամիտ եղիր, հարգելի ընթերցող, հետո կշարունակեմ: Պատերազմի ժամանակ սփյուռքահայերը լարված ուշադրությամբ հետեւում էին ռազմադաշտի վրա հոսող արյունին, որուն խառնվում էր իր ժողովրդին մաքուր արյունը եւս: Հերիք չէր, որ օտար երկիրներու մեջ հյուրընկալվող հայերը իբրեւ պարկեշտ եւ հավատարիմ քաղաքացիներ կռվում էին դաշնակից բանակներում եւ իրենց կյանքը զոհում (չեմ գիտեր զոհերուն թիվը): Ափսարհով մեկ ստեղված 1915 թվի զոհ հայերը հանգանակություններ էին կազմակերպում եւ օգնում էին Կարմիր բանակին: Հիմա մարդիկ երեւի, մանավանդ նոր սերունդը, չեն իմանում, որ սփյուռքահայերի նվիրատվություններով ստեղծվեց «Սասունցի Դավիթ» տանկային զորասյունը: Իսկ սովետական իշխանությունները պատերազմեն վերջ կազմակերպված ներգաղթի կարավաններով հայրենադարձներին Հայաստան բերին եւ Սիբիր ախորեցին: Ահա ձեզի հրաշալի օրինակ



Ալ. Սարուխան. Ինքնածաղրանկար

հայ» թե «արեւմտահայ» նշանավոր բոլոր հեղինակների գործերը: Նույնիսկ կային «սովետական» գրողների գրերը՝ Մահարու, Չարենցի, Բակունցի, որոնք ինչպե՞ս էին հայտնվել Կիրոս կղզում, չեմ գիտեր: Կարդում եւ պատշում էի «Սեւ ցելերի սերմնացանը», «Մանկությունը», հրաշալի ձեւավորված եւ նկարազարդված անզուգական Հակոբ Կոջոյանի եւ Մարտիրոս Սարյանի գրչով: Նրանց հերոսներն ինձի համար ավելի իրական եւ բաբախուն էակներ էին, քան իմ շուրջի մարդիկ: Չէի իմանում, թե այդ Սուրբերը կամ արդեն սպանվել էին հրեա Ստալինի հրամանով, կամ էլ Սիբիր էին քշվել, որպեսզի այնտեղ ամայության մեջ հող դառնան:

Բոլորս, մեծ թե փոքր, ուզում էինք Սարուխանի «Ընկեր Փանջունին» տեսնել ու շոշափել: Գիրքը սկիզբը մնում էր բարձր դասարանցիներու մոտ, բայց ամբողջ աշակերտությունը ուախացավ այդ գրքին հայտնվելովը մեր դպրոցի գրադարանում: Այդ գրքի շնորհիվ ես առաջին անգամ իմացա Ալեքսանդր Սարուխանի մասին: Թեեւ այդ ժամանակ դպրոցում նկարչության ուսուցիչ էր նշանավոր նկարիչ Օննիկ Ավետիսյանը՝ Սարուխանին աներձագը:

Ամենայն դեպս կուզեի խոսիլ «Ընկեր Փանջունի»-ին մասին, քանի որ առիթը ներկայացել է: Այդ գրքին Մելգոնյանում հայտնվելեն վերջ մեքենագրված եւ բազմացված «Ծաղկվարը» մտավ հայ գրականության դասավանդման ծրագրի մեջ, ինչպես նաեւ ուրիշ հայ գրողներ, որովհետեւ հայոց գրականության համար դասագիրք չկար: Մեքենագրված եւ բազմացրած՝ աշակերտներուն իբրեւ դասագիրք բաժանվում էին: Բայց հայ գրականության հետ մեր ծանոթացումը հիմնականում ոչ թե դասարանում էր լինում, այլ գրադարանից վերցված գրքերից: Գրադարանն էր մեր իրական դասատուն:

«Արդ», ինչպես իր ամեն մեկ խոսքը սկսում էր մեր դպրոցի տնօրենը՝ դոկտ. Հակոբ Թոփճյանը, 7-րդ դասարանում, երբ աշակերտներուն տարիքը 15-17-ի մեջ էր, մենք չէինք գիտեր հայոց ժամանակակից պատմությունը, չէինք անցել տակավին: Ժամանակակից ափսարհի պատմության ալ տեղյակ չէինք: Դեռ չէինք գիտեր «սոցիալիզմ» ինչ է, «իմպերիալիզմը» ինչ է, «հեղափոխություն», «դասակարգային պայքար», «եղեռն», «հոկտեմբերյան հեղափոխություն», «Սովետական Հայաստան», «Առաջին հանրապետություն», «երիտթուրքեր»: Կարդում էինք «Փանջունին», գոնե, ես ասում եմ իմ տպավորությունս: Զվարճալի լեզվով, հատուկ այդ «հերոսին» համար սարքված արեւելահայերեն-արեւմտահայերեն իրար խառնված լեզու, Փանջունիի զեկուցագիր նամակները կարդում էինք, որոնք ավարտվում էին «մի ֆիչ փող ուղարկեցեք»-ով: Մեր գրականության ուսուցիչը՝ պարոն Սարգիս Աղտաշյանը (Վահե-Վահյան), որ իբրեւ «բանաստեղծ» էր ներկայանում, կարծեմ բանաստեղծություններու մի գիրք էլ էր հրատարակել արդեն դպրոցում, իմ գնահատանքով եւ կարծեմ նաեւ դասընկերներուս, միջակ «բանաստեղծ» էր: Չէ՞ որ մենք Թեքեյանը անգիր գիտեինք, Մեծարենց, Զարիֆյան, Տեղյան, Թումանյան, Դանիել Վարուժան, ո՞ր մեկը ասեմ: Այնպես որ կրնայինք Վահե Վահյանը իր տեղը դնել: Բայց եթե ինքը նաեւ չըլլար ինքնասիրահարված՝ «լրջության» կեղծ դիմակը դեմքին, խոսքով եւ վարվելակերպով՝ գլխի մազի ծայրեն մինչեւ եղունգին ծայրը ձեւական մարդ, կարող էինք ավելի լավ հիշել զինք: Ինչի՞ ուսուցիչն էր, եթե մեզ՝ պատանիներուս տալիս էր «Ընկ. Փանջունին» եւ չէր բարեհաճում սուզել, թե ո՞նց ենք ընկալել մեր ազգային գրականության ամենալուրջ եւ օգտակար գիրքը: Այդ պարոնը, որ հավակնում էր ըլլալ հայ ուսուցիչ եւ «բանաստեղծ», ըստ իս կրնար հայ գրականության ճաշարանին մեջ մատուցող ափսաթի, երբ այդ ճաշարանում սեղան նստած լինեին Վ. Թեքեյանը եւ Ե. Չարենցը: Լավ, մեկ կողմ թողնեմ Վահե-Վահյանը, որուն մասին ուրիշ բաներ ալ կարող եմ ասել: Հիմակուտիմա թող մնա:

Տարիներ պարելով եւ տարիքս առնելով, պարելով սփյուռքում իբրեւ վարանդի, պարելով սովետական ճամբարում, հիմա էլ պարելով նորանկախ Հայաստանի Հանրապետությունում, ես սկսեցի հասկնալ ինչ է այդ «Ընկեր Փանջունի» գիրքը: Այդ գիրքը մեկ ու կես հարյուրամյակի հայության պատմության հետ կապված ամենաարժեքավոր գիրքն է: Առանց «Ընկեր Փանջունի»-ին անկարելի կըլլա ճիշտ գրել 150 տարվա հայ ժողովրդի պատմությունը: Իբրեւ «գեղարվեստական» արժեք ինչպե՞ս են գնահատում հայ գրականագետները, գրող հայ գրողներու ցուցակը, ես առաջին տեղում կարձանագրեմ Օշյանին անունը, մնացածները վեր-վար կըարեմ: Վերջերս գրած հոդվածներուս մեջ անցած դարը ես կոչում էի «եղեռնի դար», բայց հիմա կոչելու եմ նաեւ «ընկ. Փանջունի»-ի դար:

Հետագային, Երկրորդ համաշխարհային պատերազմի օրերուն վանգավոր ճամփորդութենեն մը վերջ ուսումս կիսատ թողած 7 տարի ընտանիքս բաժանվելուց հետո վերադարձա ընտանիքիս մոտ Ալեքսանդրիա: 1943-ին, երբ իմացա, որ շատ սիրելի ուսուցիչս ալ վերադարձել է Եգիպտոս՝ Կահիրեի իր բնակարանը, ամեն ինչ արեցի, որ իր մոտ ըլլամ. եւ ես ալ նորից բաժանվեցի ընտանիքս եւ Կահիրե վազեցի, ուր պարում էր ամուսնացած քույրս: Ուզում էի մանավանդ սովորել Գեղարվեստից ակադեմիայում: Ամեն շաբաթ այցելում էի ուսուցչիս, որ բնակվում էր նույն տանը՝ իր փեսայի՝ Ալեքսանդր Սարուխանի հետ: Այնպես որ, Սարուխանին տեսնում էի հաճախ: Սարուխանը այդ ժամանակ համաշխարհային համբավի տիրացած արվեստագետ էր եւ մեծ սեր ու հարգանք էր վայելում Եգիպտոսում եւ ամբողջ արաբական աշխարհում իբրեւ ժուռնալիստ: Նա հանդես էր գալիս նաեւ ֆրանսերեն եւ անգլերեն մամուլում: Ամեն օր իր երգիծանկարները երեւում էին մամուլում, եւ ամեն օր առաջին բանը, որ ընթերցողը փնտրում էր օրաթերթում, Սարուխանի նոր ծաղրանկարն էր, որ ներկայացնում էր պատերազմի վիճակը: Որովհետեւ այդ տարիներուն ֆաշիստներու բանակները ներխուժել էին Եգիպտոսի սահմաններեն ներս եւ սպառնում էին ոչնչացնել անգլիական գաղութարարներու կողմե ղեկավարող դաշնակիցներու բանակները եւ շարունակելով՝ անցնել Մեծավոր Արեւելք եւ հասնել Կովկաս:

«Շպէտք է թոյլ տալ, որ հայ չէզոք կամ ո՛չ յեղափոխական տարրը փորձէ գլուխ բարձրացնել»:
Ե. Օտյանի «Ընկ. Փանջունի» գրքի սարուխանյան նկարազարդումներից:

«Իր ծնե ծաղրանկարիչ Սարուխանի ստեղծագործությանը հատկանշական է հզոր դինամիզմը: Դեմքերի արտահայտությունը եւ ֆիգուրների շարժումը, թեեւ ծայրահեղացված, այնուամենայնիվ, վերարտադրված են զարմանալի բնականությամբ: Սարուխանն օժտված է արտաները, տողորությունը, մարդկային կեղծ ժպիտները անողոքաբար վեր հանելու եւ դրանք դաժան ծաղրի ենթարկելու արտասովոր ունակությամբ: Մյուս կողմից՝ նույնիսկ ամենասովորական դեպքերն ու գործողությունները նրա մատիտի տակ դառնում են վերին աստիճանի զվարճալի:

Իբրեւ դիմանկարիչ՝ նա գիտի մի քանի էական գծերով որսալ իր բնորդների նմանությունն ու ներքին բնավորությունը՝ ներկայացնելով դրանք կա՛մ դիմանկար-շարժերում, կա՛մ ծաղրանկարներում:

Իր կոմպոզիցիաներում Սարուխանը սովորաբար չի թողնում դատարկ մասեր. նրա էջերի ամբողջ մակերեսն օգտագործված է շահեկանորեն, կիրառված է հատկանշական ամեն լրացնող տարր: Ավելորդ մանրամասներից խուսափող նրա գիծը հաստատուն է, ջղուտ, երանգավորված:

Լինելով բեղուն երեւակայության տեր՝ Սարուխանը գիտի անվերջ փոփոխակել իր կոմպոզիցիաները, ինչը նրա ստեղծագործությունները դարձնում է հետաքրքիր եւ ուշագրավ: Ահա ինչու եգիպտացի հանրությունը ամենեւին չի հոգնում նրա ծաղրանկարները ավելի քան երեսուն տարի ամեն օր տեսնելուց. ընթերցողը դրանք փնտրում է եւ վայելում հաճույքով: Սարուխանի այս զարմանահրաշ ակտիվությամբ, ստեղծագործության հատկանշականությամբ եւ մեծ տաղանդով են բացատրվում նրա լայն ժողովրդականությունը, նրա անունը հայտնի է ոչ միայն ողջ Եգիպտոսում, այլեւ Մեծավոր Արեւելքի մյուս արաբական երկրներում:

Եվ վերջապես, նա դպրոցի պարագլուխ է. շատ են նրան ընդօրինակող կամ նրա ազդեցությունից չխուսափող երիտասարդ ծաղրանկարիչները»:

բոլշեւիկյան ժողովուրդներու բարեկամության: Ինչպե՞ս այդ հրեշավոր եւ մարդասպան ռեժիմը «ամենամարդասիրական» «լոզունգներն» էր ձեւակերպում: Երեւի կար մասնագետ լեզվաբաններու հատուկ խումբ, որ մարդասպանը խոսի սիրո եւ մարդասիրության մասին: Ճիշտ է, ոճրագործը ինչո՞ւ չի սիրի իր զոհին, հապա առանց զոհի ինքը ինչի՞ համար է:

Այս ամբողջը, տեսեք, Սարուխանին մասին խոսակցությունը, մեզ ուր հասցուց: Ինչո՞ւ Սարուխանը հայտնվեց սովետական ռեժիմին «անվստահելիներու ցանկում»: Տեսեք՝ ինչ հիմար վիճակ: Ով որ Սովետական Միությունում պարել է, գիտի, որ սովետական մտածողությունը եւ գործունեությունը բացատրող մի բառ կա՝ անտրամաբանություն: Հիշեցեք բոլշեւիկյան պետության պատմությունը, պարզապես ձեր պարած կյանքի ժամանակը հիշեք: Այս տեսակետս հաստատող միլիոնավոր օրինակներ կան:

Սարուխանը նկարում էր «ծաղրանկարչական ժանրով», իր արվեստի ձեւը երգիծանկարչությունն էր: «Ծաղրանկարիչը», դա է ընդունված բառը, օժտված է տեսնելու բնորդին դիմագիծերու կամ մարմնին այնպիսի մասերը, որոնք բնորդին տարբերում են ուրիշներից՝ որքան ալ որ աննշան թվան այդ ձեւերը. մեկուն քիթը մի քիչ ավելի երկար է, մյուսին աչքերը՝ փոքր, մեկը հատկանշվում է իր չաղությամբ, մյուսը՝ իր երկար «բոյով». հազար բան կարող ես նշել: Ահավասիկ ծաղրանկարիչները տարբերվում են մյուս նկարիչներից իրենց այդ կարողությամբ՝ ավելի սուրությամբ զգալու եւ տեսնելու բնորդին յուրահատուկ կողմերը եւ նույնիսկ կարող են

Տես էջ 8

Խոհագրություն

Սկիզբը՝ էջ 4

գտնում կերտարին ֆիզիկական վիճակին եւ նկարագրին, նույնիսկ բառյական վիճակին, բնավորության գիծերուն հետ: Ընդհանրապես, երբ ծաղրանկարիչը շեշտված ձեւով է ցույց տալիս իր «մոդելին» կերտարը, հաճախ սացվում է զվարճալի մի կերտար: Չեմ սխալվիր, եթե ըսեմ, որ մարդիկ հաճույքով են դիտում երգիծանկարիչին ստեղծածը: Ով չի սիրում հումոր. ըլլա իբրեւ նկար, ըլլա իբրեւ պատում: Բթամիտը երեւի: Եվ ահավասիկ, սովետական «իդիոտները» Սարոփանին երգիծանկարներուն մեջ գտել էին անարգանք եւ ոչ հարգալից կեցվածք իրենց պաշտելի ղեկավարին,մեղա՞ Աստված, սրբություն սրբոցին, ժողովուրդներու մայրերու ամուսինին հանդեպ:

1953-ին Ստալինը սատկեցավ: Ես այն ժամանակ սովորում էի Փարիզում: Ես, որ համակրանք ունեի կոմունիստներու եւ Սովետ Միության հանդեպ, որուն մաս էր կազմում Հայաստան երկիրը, որուն ձգտում էի ամբողջ հոգով: Թեեւ հիմա գիտեմ՝ այն ժամանակ բան չէի իմանում իրական Սովետական Միության մասին, եւ ինչպե՞ս կարող էի իմանալ, եթե այդտեղ չէի եղել: Նաեւ չմոռնանք, որ մարդ չի սիրեր վատ բան լսել իր սիրածին մասին: Ամբողջ հոգիովս ուզում էի Սովետական Հայաստանում բնակվիլ: Որեմն գացի մասնակցելու այն սգո հավաքին, զոր կազմակերտել էր ֆրանսիական կոմկուսը իր անդամներուն եւ համակիրներուն համար «վելոդրոմին» մեջ, որ լեփ-լեցուն էր, ասում էին, 30.000 հանդիսականներով: Ընդհանուր մթնոլորտին մեջ զգացվում էր մի տեսակ «հիստերիա». մարդիկ չէին կարողանում զսպել իրենց լացը եւ չէին էլ ուզում երեւի: Երգեցին, ճարեր, վերջում էլ, հարգանքի իբրեւ տուրք (ինանք, ինչո՞ւ չէ), ֆրանսիացի արվեստագետներ կատարեցին «մեծ առաջնորդին» սիրելի երգը՝ «Սուլիկոն», անշուշտ վրացերեն: Բնական է՝ ֆրանսիացի կոմունիստները առաջին հերթին իրենց ղեկավարը համարում էին «համաշխարհային պրոլետարիատի առաջնորդ» Ստալինին: Հետագայում, մտածում էի մանավանդ սովետական քաղաքացի դառնալես հետո, մտածում էի. ախր Ֆրանսան ո՞ւր եւ այդ քոսոտ վրացին ուր: Բայց երեւի այդ վրացին մի բան էր, որ միլիոնավոր ֆրանսիացիներուն, «Ազատության, հավասարության, եղբայրության» ֆրանսիացիին (կոմունիստ) վերածել էր ոչխարներու հոտի: Անհավատալի է: Բայց մարդ արարածը կարող է էականալ: Ինչ ասեմ հիմա, այդպիսին էր վիճակը: Բայց ամեն բան չես կարող նախատեսել, եթե նույնիսկ ֆրանսիացի մեծ պոետ Լուի Արագոնն ես: Որեմն՝ Լուի Արագոնը սովետներու ծախված, սովետներու փողերով գրական-գեղարվեստական շաբաթաթերթ էր հրատարակում, որը երբ տեսա Լենինական քաղաքում թերթավաճառի մոտ, աչքերիս չէի հավատում, եւ ուրախությամբ կարդում էի մինչեւ 1968 թվականը, երբ Արագոնը վերջապես համարձակվեցավ իր անհանգստությունը արտահայտել սովետներու Պրագա մտնելու առթիվ, եւ այդ պահից սովետական փողերու ծորակը փակվեց եւ Les Lettres Francaises-ը դադարեց լույս տեսնելե: Սա՝ ի միջի այլոց:

Դեպքերից առաջ չանցնեմ, որ հաճախ անում եմ: Որեմն 1953 թվականն եմ, Ստալինը սատկել է եւ պոետ Լուի Արագոնը այցելում էր իր կուսակցության անդամ եւ մտերիմ, մեծագույն իսպանացի նկարիչ, վտարանդի Պաբլո Պիկասոյին, որը պատերազմի ժամանակ ընդունվել էր ֆրանսիական կոմկոսի շարքերը իր համակրանքը եւ հավատը հայտնելու ֆաշիզմի դեմ պայքարներուն: Եվ հայտարարել էր, որ իր հայրենիքը ֆրանսիական կոմկոսն էր: Որեմն Արագոնը խնդրում է, որ Պիկասոն մի գծագրությունով երեւա իր շաբաթաթերթին մեջ՝ մասնակցելու համար «Մեծ առաջնորդին» (դրամ հասկացեք Ոճրագործին) մահվան առիթով մատուցվող հարգանքին: Պիկասոն այդ տարիներուն կոմկոսին աջակցելու որեւէ խնդրանքին, մանավանդ իբրեւ նկարիչ չի մերժել: Հիշեցեք նշանավոր «Խաղաղության աղավնին», որ տարիներ «էմբլեմա» էր «խաղաղության համար պայքարողներու» հավաքներուն: Որոնց եսերը անշուշտ կանգնած էր Չեկան:

Որեմն Պիկասոն ընդառաջելով իր կուսակցական ընկերոջ փափագին, նկարում է Ստալինի դիմանկարը, որ տպվեց Արագոնի շաբաթաթերթին՝ «Լե լեսը ֆրանսեզի» մեջ: Վա՜յ այդ տպվելուն: Ես տեսել եմ Պիկասոյի այդ գծագրությունը, որ պարզապես մի մարդու նկար էր՝ անմեղ արտահայտությամբ, կարծես ասելիք եւ «բեղավոր» մի մարդ: Հիշում եմ, այդ ժամանակ Ստալինին ասում էին «բեղավորը»: Ֆրանսիայի կոմկոսին արվեստով հասել էր հնարավոր լավագույն արդյունքի, իր եւ իր ընտանիքին ֆիզիկական գոյությունը ապահոված էր: Արժանացել էր հյուրընկալ ժողովուրդի հարգանքին եւ սիրույն. էլ իրեն ինչ էր մնում: Իրեն պե՞տք էր իր ծագումը եւ իր ժողովուրդը: Չեմ գիտեր՝ պետք էր թե պետք չէր, բայց Ալեքսանդր Սարոփանը ոչ մի քայլ իր ժողովուրդը չի մոռացել, իր ժողովուրդեն չի հեռացել եւ աշխատել է իր ժողովուրդին հոգսերով եւ իր հայրենիքին հիշողությամբ, իր ստեղծագործական գործունեության աղբյուրը իր ժողովուրդն է եւ ստեղծված է, ամեն բանե առաջ, իր ժողովուրդին համար, առանց որեւէ նյութական վարձատրության ակնկալության: Սարոխանը ակնկալել է միայն իր հայրենակիցներուն սերը: Երկրագունդի որ մասում էլ որ կա սփյոռք, հայերը գիտեն Սարոփանի մասին եւ սիրում են նրա գործը:



«Հիտլեր. «Պիտի մտնեմ Ստալինգրադ»:
Ստալին. «Հրամմէ՛ մարդուկս, հրամմէ՛»:
Ալ. Սարուխանի ֆրանսիական մամուլում տպված գործերից, 1942թ.:

Միայն Հայաստանի Չեկան էր, որ չէր ուզում Սարոփանին: Օտարության մեջ իր ժողովրդով ապրող, իր ժողովրդի համար մահացած մի քանի մեծ արվեստագետներից էր Սարոփանը: Չեմ ուզում ասել միակը:

Դժբախտաբար, մեր ժողովուրդին ստեղծած շատ արժեքներ տակավին չեն արժանանում այն ուշադրության, որուն օգուտը ամենաառաջ պետք է հայուն: Մեզի, բոլորիս:

Միթե ժամանակը չի եկել, երբ ունինք անկախ պետականություն, արժանին հատուցելու մեր ժողովրդի ընտիր զավակին, որ ինչպես գիտենք, դիտավորյալ անտեսված էր սովետական ռեժիմի կողմից: Չէ՞ որ Սարոխանը՝ հայ իսկական արվեստագետը, հայոց հոգեւոր գանձարանը հարստացրել է չարժեզրկվող «արժեթուղթերով». ե՞րբ պիտի անդադարանք ազգովին, որ առանց հոգեւորի է, որ կյանքը իմաստազուրկ է: Մտածում էի, որ պարտավոր չէի՞նք իր հիշատակը վառ պահել:

Կարծեմ՝ անվանի քանդակագործ Առա Սարգիսյանը ստեղծել է Սարոխանի դիմաքանդակը, 1968 թվին Սարոփանի Հայաստան այցելության ժամանակ: Օրինակ, վարպետի այդ քանդակը փոխանակ մնալու իր արվեստանոցում, կրնար զարդարել մարդաշատ զբոսայգի մը, կամ մի մշակութային հիմնարկում դառնալ մասնակիցը մեր ժողովուրդի կյանքին, որուն այնքան կարված էր հայ մեծ նկարիչը: Կարելի չէ՞ր մի փողոց անվանակոչել Սարոփանի անունով:

Այս մտածումներով էի, երբ հիշեցի 40 տարիներ առաջ անմոռանալի «տրագիկոմիկական» մի խոսակցություն, ավելի շատ նման՝ մենախոսության:

Կարծում եմ, որ հայ մարդու ապրելու կերպին, մտայնության մեջ աչքի զարնողը զգացմունքայնությունն է, որը հայուն հմայիչ է դարձնում թե իր ազգակիցներուն եւ թե օտարներուն մոտ: Հայուն գովում են իր տաքարյունության համար, իր մարդամոտության համար, իր անմիջականության համար, բայց նաեւ այդ վիճակը օգտագործում են հայուն գլխին խաղեր խաղալու եւ նույնիսկ թաքուն ծիծաղելու հայուն վրա: Հավանաբար բամբասում են, որ հայը անկիրթ է: Մի քիչ շեղվեցի:

Ահավասիկ այդ խոսակցությունը:

Կալենցին հիշում եմ այն պահից, երբ թեւանցուկ, ոտվիճեցու ճանապարհը, որով գնում էինք, ցեխոտ էր եւ սայթաքուն (աշուն էր), գնում էինք իրենց բնակարանը: Ես նոր էի հասել երազներուս «երկիր դրախտավայրը»: 1962 թվի աշունն էր: Իսկ Կալենցը 15 տարի առեն ապրում էր հայրենիքում: Ճանապարհը խորդուբորդ էր եւ փոսերով: Եվ հանկարծ Կալենցը կանգնեց եւ անսպասելի եւ սանչելի մի հարցով դիմեց ինձ՝ իր նոր բարեկամին. «Հակոբ, գիտե՞ս այս փողոցին անունը ինչ է»: Գոնե փողոցի նման ըլար այդ փողոց կոչեցյալը: Անշուշտ ինքն ալ գիտեր, որ չէի կարող իմանալ այդ «փողոցին» անունը: Ես լոտ եւ ուշադիր իրեն էի նայում: «Լավ, որ մարդը ողջ չէ...»: Այսինքն լավ, որ այդ մարդը կենդանի չէ եւ չի կարող խայթել այն «փողոցով», որ իր անունն է կրում մեր մայրաքաղաքում: Այդ հարգարժան անձը, որուն մասին էր խոսքը, ոչ միայն ողջ չէր, այլ 1550 տարիներե ի վեր բնակվում էր ուրիշ տեղում՝ դրախտում: Այդ փողոցին անունն էր՝ Մեսրոպ Մաշտոցի փողոց:

Հասկանում էի, որ Կալենցը ինձ հետ հարց չէր քննարկում: Իրը պարզապես դառնացած հայու մենախոսություն մըն էր, որուն ես ներկա էի: Ես այդ ժամանակ նոր էի սէր դրել հայրենի հողին, չէի կարող իրականությունը եւ անիրականը իրարից ջոկել: Տեսակ մը գինովության մեջ էի: Իսկ Կալենցը 15 տարիներե ի վեր Սովետական Հայաստանում էր: Այդ պահից 42 տարի վերջ ես այսօր հասկանում եմ Կալենցի ապրումները: Չէ՞ որ այս լուսավոր հայը՝ 1915 թվականի դժոխքից փրծած պատանին, Կյոտինի Հարմանդարյան ազնվական գերդաստանի շառավիղը, խորապես վիրավորված էր: Նա Հայաստան եկել էր հանդիպելու ոչ թե միջազգային «դեբիլներու» առաջնորդին, սիֆիլիսով խաթարված ոտերով «առաջնորդին», որուն պիղծ անունով կնքված էր մեր սուրբ մայրաքաղաքի՝ Մատենադարանով ավարտվող ամենամեծ պողոտան, կամ Մոնոմենտ կոչվող բարձունքեն Երեւանին հսկող չարագուշակ, մարդկային ցեղին վրացական ճյուղեն ծնած ամենազզվելի վիժվածքին, 60.000.000 անմեղ մարդկանց դահիճին: (Էլ ինչո՞ւ ենք զարմանում, որ «եղբայրական քրիստոնյա» վրացին իր հողին վրա հայոց եկեղեցիներն է պղծում): Այլ եկել էր հանդիպելու հայ ժողովուրդի սրբազնագույնին, որուն սովետական իշխանությունը արժանի էր գտել այդ այլանդակ ցեխաստանը: Ցեխը պետք էր բերանը լեցնել հայ կոչվող մշակույթի այն «ցեխավիկներին», որոնց պաշտոն էր տրվել փողոցներու անուններ որոշել:

Կալենցին սիրտը խորապես վիրավորված էր՝ «Հակոբ, գիտե՞ս այս փողոցին անունը ինչ է...»: Կալենցը մեր ժողովուրդին ծնած ամենաայծառ, ամենամեծ նկարիչներեն մեկն էր: Բայց ավելի բան մըն էր: Շա՜տ ավելին: «Հայու հոգին» էր: Որքան ալ որ մեր ժամանակը կավատներու ժամանակն է, չդատեմ Հայաստանը հայ կավատներով: Ես խոսում եմ մի սուրբի մասին: Կալենցի մասին: Այստեղ է, որ մենք իրավունք ունինք ըսելու, որ «հայը դա վսեմ է հնչում»: Լիբանանը, այդ բիբլիական, Միջերկրականի ծովափնյա երկիրը Կալենցին համար իր հայրենիքը չէր, ասոր համար լքել էր Լիբանանը գալու համար Սովետական Հայաստան, որ իր «հայրենիքն» էր: Բայց Սովետական Հայաստանն ալ ինչ հայրենիք կրնար ըլլալ Ազատության համար ծնված մարդուն, որ սովետական կոչված համակենտրոնացման ճամբարի մի մասն էր:

Այստեղ պատմեմ մի դեպք Կալենց կոչվող ՈԳԻԻ մասին եւ վերադառնամ Սարոփանին: Մի օր Կալենցը մի քանի ընկերներով (հայերու հետ) ԹԵՖ է անում, ուտում-խմում, ուրախանում են: Հաջորդ օրը Կալենցին հրավիրում են մինչեւ այսօր ալ տխրահոչակ Նալբանդյան փողոց: Կալենցը ներկայանում է: «Ընկեր» չեկիստը ոտքը բացում է. «Կալենց, չփորձես ուրանալ, երեկ դուն (ԹԵՖի ժամանակ, իր «ընկերներու» շրջապատում) «Մեր հայրենիքն» ես երգել»: Այդ տարիներուն այդ երգը, որ չէր աղավաղված իբրեւ 3-դ հանրապետության հիմնը, նկատվում էր Սովետական Միության թշնամի Դաշնակցական կուսակցության հիմնը: Որեմն Սովետական Միությունում այդ երգը երգողը մահվան հետ խաղ էր անում: Եվ այսպես Կալենցին կանչում են Չեկա, որ կարող էիր հիշել ժամանումիդ թվականը, բայց շարունակությունը դժվար թե կարողանայիր հիշել: Չեմ կարող պատկերացնել, թե այդ պահուն Կալենցը ինչ էր զգում: Երեւի Կալենցը կայծակնային արագությամբ գիտակցեց, որ Չեկայում այդ չեկիստի դեմ հանդիման իր կյանքի ասեղային, ո՛չ, ասոտային ժամն է ապրում:

Կյանքի ընթացքին մարդ արարածին սպասում է մի դաժան քննություն ՄԱՐԴ կոչվելու «ինքնության քարտ» ստանալու համար: Իր ՀՈԳԻՆ ունի՞ այնքան ուժ, որ իր մարմինը (նյութ, վախ) ենթարկի իրեն: Եթե սովետական ռեժիմը մի նախադասությունով բնորոշեմ, պիտի ըսեմ՝ ՀՈԳՈՒ մահացու թշնամի:

Կալենցը շատ բարի, գեղեցիկ աչքերով նայում է հարցաքննողի աչքերին եւ պատասխանում. «Այո,- ասում է,- երեկ ես երգել եմ «Մեր հայրենիքը»: Տասը տարի է ձեր հայրենիքն եմ երգում, երեկ ալ ՄԵՐ ՀԱՅՐԵՆԻՔ երգեցի»: Չեմ գիտեր ինչ պատահեց «ինկվիզիտորի» հետ՝ լսելով այդ պատասխանը, հավանաբար սարսափահար իր սենյակից դուրս փախավ՝ երկու ականջները ափերով փակած: Կալենցը դուրս է գալիս Չեկայից, փառք աստուծո, ողջ-առողջ: Շարունակության մանրամասնությունները չեմ գիտեր: Այս պատմությունը լսել եմ սիրելի Տիգրան Լեւոնյանի բերանեն, որ Կալենցի սիրելին էր եւ գրի առած է բազմաթիվ «պատմություններ» Կալենցի մասին:

Չեկայում Կալենցը նայել է մահվան աչքերուն եւ թքել այդ աչքերուն մեջ: Կալենցը մարդկության հայ կոչվող տեսակի ամենակատարյալ տեսակն է, որուն արձանը պետք էր դրվեր Հայաստանում: Բայց այդ արձանը ինչ նյութով պիտի քանդակել, որ իրեն արժանի ըլլա, չեմ գիտեր:

Ախր, ե՞րբ հայը պիտի դադարի ուրիշ հայու հարցնելե. «Ինչո՞ւ համար եկար Հայաստան»: Երեւի այն օրը, երբ վերջին հայը իր շունչը փչե:

Հ.Գ.- Սարոփանին անունը եւ տեղը հայկական մշակույթի թանգարանին մեջ ամենաազնիվներու կողքին է, որովհետեւ մեր ժողովուրդի ցավերով, պայքարեցաւ մեր ժողովուրդի անվտանգության համար, պայքարեցաւ մանավանդ մեր ժողովուրդի բարոյականին անխաթար մնալուն համար՝ համոզված, որ անբարոյականությունը ինքը մահացու հիվանդություն է ժողովուրդի համար:

Սուրբ Հակոբ Պարոնյան, հայ մտավորականության խիզախության հերոս, որ երբ մահացավ, գրպանում սոխ ու հաց էին գտել:

Երվանդ Օշյան, որ ապրեցավ Տեր-Զորի դժոխքը եւ հրաշքով ողջ մնաց եւ մահացավ 1926 թ., երբ 60 տարի էլ չէր ապրել:

Սարոփանը, նրանց գործը նկարագրելով եւ հրապարակելով, ավելի է մաշտելի դարձրել իր հայրենակիցներուն նրանց գրվածքները: Իր տեղը ուղիղ նրանց կողքին է:

Ինչպե՞ս կարելի է մոռանալ Լեո Կամսարը, որ բանտին մեջ անգամ մի քարոզ չի մոռացել, որ ինքը իր ժողովուրդին պաշտպանն է, իսկ երբ Չեկայի դժոխքեն ողջ մնացած վերադարձավ ազատություն կոչված բանտը, մեր «մտավորականությունը» նրա հետ ինչպե՞ս էր վարվում. կարծես Լեո Կամսարը գոյություն չուներ: Այո, եթե կար մի բան, որ գոյություն չուներ Հայաստանի մեջ, դա էլ Գողերու միությունն էր իր գողերով:

Անշուշտ, նոր բժիշկը չկա, իսկ վանդը մահանում է: Պարոնյան, Օշյան, Լեո Կամսար, Սարոփան մեր բժիշկներն էին: ■

ԱԶԳ-ՆԵՐԴԻՐ

Արշիլ Գորկի-100

«ԱՐՇԻԼ ԳՈՐԿԻ. ԻՆՔՆԱԲԱՑԱՀԱՅՏՄԱՆ ՏԱՐԻՆԵՐ»

ԴՈՐ ԱՇՏՈՆ

ՈՒՇԱԾԱԵ ԿԱՐԵՐԻՔ ԳՈՐԿՈՒ ՄԱՍԻՆ

Օլբրայթ-Նոֆս արվեստի պատկերասրահից Կարեն Լի Սփոլդինգի խմբագրած «Արշիլ Գորկի. Ինքնաբացահայտման տարիներ» գիրք-ալբոմից ստորև Հակոբ Ծուլիկյանի թարգմանությամբ ներկայացվող եզրափակիչ հոդվածը (այսօր հրապարակում ենք հոդվածի առաջին մասը) հեղինակել է Ամերիկայի ամենափնտրված առաջավոր արվեստի քննադատներից մեկը՝ Դոր Աշտոնը, Նյու Յորքի Քուքեր Յունիոն կրթօջախի արվեստի պատմության պրոֆեսորը:

Գիրք-ալբոմը հրատարակել է Իտալիայում 1995 թ. «Ռիզոլի ինտերնեշնլ փաբլիքեյշնզ» հրատարակչատունը՝ Մ. Նահանգներում Գորկու 1940-1947 թթ. նկարների ցուցահանդեսի առիթով, որը կազմակերպվել է Ֆորթ Ուորթի (Տեխաս) Արդի արվեստի թանգարանի եւ Բուֆալոյի (Նյու Յորք) Օլբրայթ-Նոֆս արվեստի պատկերասրահի ջանքերով: Ցուցահանդեսը 1995 թ. մայիսի 7-ից սեպտեմբերի 17-ը գործել է Վաշինգտոնի Արվեստի ազգային պատկերասրահում, այնուհետեւ հոկտեմբերի 13-ից մինչեւ դեկտեմբերի 31-ը՝ Բուֆալոյի (Նյու Յորք) Օլբրայթ-Նոֆս արվեստի պատկերասրահում, ապա 1996 թ. հունվարի 13-ից մինչեւ մարտի 17-ը՝ Ֆորթ Ուորթի (Տեխաս) արդի արվեստի թանգարանում: Նյութերը հավաքել եւ ալբոմը կազմել է Ֆորթ Ուորթի արդի արվեստի թանգարանի գլխավոր պատասխանատու Մայքլ Օփինգը:

Գորկուն անդրադառնալիս մինչ մտածում էի, թե ինչ կարելի է ասել նրա մասին հսկայական գրականության առկայության պայմաններում, հիշեցի Բոդլերի ներողամտություն հայցող խոսքերը, որ նա արտասանել է «Մադամ Բովարիի» վերաբերյալ ուշացած գնահատական տալու առիթով. «Քննադատության հարցերում ուշացած՝ ուրիշներից հետո եկած գրողն առավելություններ ունի, որոնցից զուրկ է գրող-մարգարեն, այսինքն՝ նա, ով հաջողությունն է կանխատեսում եւ հավատարմության սկզբունքով մարդկանց մտքում պատկերացումներ կազմել տալիս»:

Բոդլերը նշում է, որ բազմաթիվ արվեստագետներ գովասանքի խոսքեր են շռայլել Ֆլոբերի հիանալի գրքի մասին եւ որ «քննադատությանը ոչինչ չի մնում անել, բացի վեր հանելուց մի քանի մոռացված կետեր եւ մի փոքր ավելի ուժգին շեշտադրում կատարելուց որոշ առանձնահատկությունների վրա, որոնք, իմ կարծիքով, չեն տացել ամբողջական մեկնաբանություն կամ գնահատական» (1):

Ուշացած եկողը, Բոդլերի խոսքերով, որպես աննախընթաց, շատ ավելի ազատ է: Մինչ ես բոլորովին էլ անծանոթ «այցելու» չեմ, քանի որ տարբեր առիթներով գրել եմ Գորկու նկարչական հարստության մասին, ցանկանում եմ այստեղ վեր հանել մի քանի մոռացված կետեր եւ անտեսված առանձնահատկություններ:

Ինձ բախտավոր եմ համարում, որ Գորկու վերջին գործերին ծանոթացել եմ Ջին Ռեյնալի խոհանոցի մտերիմ մթնոլորտում, երբ դեռ ուսանող էի: Ռեյնալը, որը թ՛ւ արվեստագետ-նկարիչ էր, թ՛ւ հովանավոր, շատ անգամ էր նեցուկ կանգնել Գորկուն՝ հաղթահարելու վերջին տարիների դժվարությունները:

(Հետագայում զարմանքով իմացա, որ Ռեյնալը, որի ինտերնացիոնալիստական հակումներն ակներեւ էին, ռուս նկարիչ եւ խճանկարի վարպետ Բորիս Անրեպի ընկերն էր, վերջինս էլ՝ Աննա Ախմատովայի: Բնականաբար, ուրեմն, Ռեյնալը Գորկու բարդ բնավորությունն ավելի լավ պիտի հասկանար, քան իր ամերիկացի ընկերներից որեւէ մեկը):

Այն, ինչ այցելությունից այցելություն ես «կլանեցի», հավանաբար 1947-ին վրձնած շատ մեծ ծավալի մի գծանկար էր, որտեղ Գորկին ի մի էր բերել փոքրիկ, նրբորեն գծագրված ձեւեր, որոնք, ըստ ինձ, ներկայացնում էին ածի օրգանական սկզբունքներն այնպես, ինչպես նկարագրել էին չին վաղեմի գրողներից սկսած մինչեւ Գյոթեն եւ Ջլեյը: Իր հարուստ մանրամասնություններով եւ չնչին պակասություններով այդ գծանկարը հատուկ ուշադրություն էր պահանջում՝ սկսած ուշադրությունը, որն անհանգիստ հայացքով մի կողմից մյուսն է տեղափոխում աչքը, որպեսզի դանդաղորեն մի ամբողջական պատկեր ստեղծի մտքում: Մեկ ուրիշ աշխատանք, որն այդ նկոտային խոհանոցում կախված էր, անսովոր գեղեցկություն ուներ եւ անմոռանալի էր: Մտածում եմ, որ այդ կտավն արտահայտում էր Գորկու մեծագույն կարողությունը, կարողություն՝ իր վրձնահարվածներում ներդնելու որոշակի զգացմունքներ: Օխրայի, վառված նարնջագույնի եւ համապատասխան հողագույնի քնքուշ նրբերանգները միաձուլվելով, հետին պլան էին մղել ճշգրտորեն ներկայացված, սակայն անորոշ մի կերպարանքի ամբողջ դրաման: Այդ ժամանակ տպավորությունս այն էր (հիմա էլ նույն կարծիքին եմ), որ Գորկուն հաջողվել էր գտնել անհրաժեշտ ծանկոյթը՝ ողողակելու համար այն առասպելական մթնոլորտը, որ նա երբեմն պատկերացնում էր:

Ուշացածի հանգամանքով նշեմ, որ հարգում եմ նախորդ քննադատներին եւ հիշում նրանց ռեֆլեքսային ընդգծումն այն սինքն՝ նա, ով հաջողությունն է կանխատեսում եւ հավատարմության սկզբունքով մարդկանց մտքում պատկերացումներ կազմել տալիս»:

Բոդլերը նշում է, որ բազմաթիվ արվեստագետներ գովասանքի խոսքեր են շռայլել Ֆլոբերի հիանալի գրքի մասին եւ որ «քննադատությանը ոչինչ չի մնում անել, բացի վեր հանելուց մի քանի մոռացված կետեր եւ մի փոքր ավելի ուժգին շեշտադրում կատարելուց որոշ առանձնահատկությունների վրա, որոնք, իմ կարծիքով, չեն տացել ամբողջական մեկնաբանություն կամ գնահատական» (1):

Ուշացած եկողը, Բոդլերի խոսքերով, որպես աննախընթաց, շատ ավելի ազատ է: Մինչ ես բոլորովին էլ անծանոթ «այցելու» չեմ, քանի որ տարբեր առիթներով գրել եմ Գորկու նկարչական հարստության մասին, ցանկանում եմ այստեղ վեր հանել մի քանի մոռացված կետեր եւ անտեսված առանձնահատկություններ:

Ինձ բախտավոր եմ համարում, որ Գորկու վերջին գործերին ծանոթացել եմ Ջին Ռեյնալի խոհանոցի մտերիմ մթնոլորտում, երբ դեռ ուսանող էի: Ռեյնալը, որը թ՛ւ արվեստագետ-նկարիչ էր, թ՛ւ հովանավոր, շատ անգամ էր նեցուկ կանգնել Գորկուն՝ հաղթահարելու վերջին տարիների դժվարությունները:

(Հետագայում զարմանքով իմացա, որ Ռեյնալը, որի ինտերնացիոնալիստական հակումներն ակներեւ էին, ռուս նկարիչ եւ խճանկարի վարպետ Բորիս Անրեպի ընկերն էր, վերջինս էլ՝ Աննա Ախմատովայի: Բնականաբար, ուրեմն, Ռեյնալը Գորկու բարդ բնավորությունն ավելի լավ պիտի հասկանար, քան իր ամերիկացի ընկերներից որեւէ մեկը):

Այն, ինչ այցելությունից այցելություն ես «կլանեցի», հավանաբար 1947-ին վրձնած շատ մեծ ծավալի մի գծանկար էր, որտեղ Գորկին ի մի էր բերել փոքրիկ, նրբորեն գծագրված ձեւեր, որոնք, ըստ ինձ, ներկայացնում էին ածի օրգանական սկզբունքներն այնպես, ինչպես նկարագրել էին չին վաղեմի գրողներից սկսած մինչեւ Գյոթեն եւ Ջլեյը: Իր հարուստ մանրամասնություններով եւ չնչին պակասություններով այդ գծանկարը հատուկ ուշադրություն էր պահանջում՝ սկսած ուշադրությունը, որն անհանգիստ հայացքով մի կողմից մյուսն է տեղափոխում աչքը, որպեսզի դանդաղորեն մի ամբողջական պատկեր ստեղծի մտքում: Մեկ ուրիշ աշխատանք, որն այդ նկոտային խոհանոցում կախված էր, անսովոր գեղեցկություն ուներ եւ անմոռանալի էր: Մտածում եմ, որ այդ կտավն արտահայտում էր Գորկու մեծագույն կարողությունը, կարողություն՝ իր վրձնահարվածներում ներդնելու որոշակի զգացմունքներ: Օխրայի, վառված նարնջագույնի եւ համապատասխան հողագույնի քնքուշ նրբերանգները միաձուլվելով, հետին պլան էին

մասին, թե ինչ բազմաբնույթ մտածելակերպ է Գորկին ձեռք բերել՝ ուշադիր ուսումնասիրելով հին ու նոր վարպետների ստեղծագործությունները: Այդ մտածելակերպի ակունքները հայտնաբերելու մոլուցքի մեջ նրանք հաճախ աչքաթող են արել մատնանշելու Գորկու ստեղծագործություններում տիրող *հայտնագործության* հրաշալի զգացումը մարդկանց փոխանցելու անհրաժեշտությունը: Արվեստանոցում՝ մերթ ընդ մերթ հետեւից թափանցող լույսի պայմաններում, հավանաբար սամույրի մորքուց ճկուն վրձնով եւ կաթկթող գույներով նրբագծեր անելիս որոշակի լուսաբող մտապատկերներ հղանալու նրա հայտնագործությունը պակաս հրաշագեղ չէր, քան Վելասկեսի՝ մուգ ֆոնի վրա վարդագույնի ունեցած առեղծվածային ազդեցության եւ կամ Գոյայի՝ վարդագույն թեմի վրա բարակ, թափանցիկ սպիտակ շերտերի ունեցած ազդեցության հայտնագործությունը: Այս զգայական ազդեցությունները, որոնք բնորոշ են յուրաքանչյուր օգտագործող նկարիչներին, առավել խոսուն են, քան որեւէ այլ ազգային հատկանիշներով օժտված իր՝ լինի դա թուրքական հողաթափ, հայկական գութան, թե վիրջինիական կրակարան:

Գորկուն մոտիկից ուսումնասիրած արվեստաբանները սովորաբար բաժանվում են երկու հակադիր ուղղությունների: Մի մասը տարվել է Գորկու ոգեւորությամբ (բնականաբար, նրա երիտասարդ տարիների, որի մասին նրանք չեն նշում), այլ նկարիչներին (Սեզան, Պիկասո, Պիեռո Դելլա Ֆրանչեսկա, Պաուլո Ուչելլո, Էնգր եւ Միրո) ընդօրինակելու, նրանց տարբեր ոճերից յուրացրածը միաձուլելու նրա մեթոդներով: Ըստ այդմ նրան ներկայացրել է որպես «էսթետիկական առումով հարկադրված որովայնախոսի» (2), կամ էլ «մի քանի դերեր մարմնավորողի» (3): Նման մոտեցումը փիչ բան է պարզում նկարչի անձի մասին եւ հուշում է կարծես, որ միայն Գորկին է ընդօրինակության միջոցով ինքնություն» կտավից հաջող ընդօրինակել, նա դադարում է այլեւս լինել սոսկ «որովայնախոս»:

Մյուսներից՝ ովքեր հետեւել են պատկերագրության գլխարային ուղուն, առաջնորդվել են նույնքան սահմանափակ՝ հետեւաբար եւ աղավաղված մտասեւեռումով: Իրենց որոնումներում նրանք հաճախ անտեսել են Գորկու փորձարարությունները, նրա ճկունությունը, կողմնակի, չծեծված ճանապարհներով ընթանալը, համեմատություններ կատարելու նրա սուր աչքը եւ վերջապես նկարելիս՝ իր վրձնի կատարած ձեւափոխություններից նրա ստացած հաճույքը, բավարարվածությունը: Հայկական արմատներին վերադառնալու Գորկու ուշ շրջանի մտահոգություններն ու այդ առնչությամբ նրա նամակների հրապարակումները հարուստ նյութ են մատակարարել իր նախասիրած կերպարանքների իմաստները բացահայտող ուսումնասիրություններին: Խորհրդապատկերների իսկության պարզաբանումն, անշուշտ, ունի իր դրական կողմերը, սակայն դա չի կարող արտահայտել կտավի զգացական իմաստը, որը բազմաբնույթ է՝ հաշվի առնելով Գորկու լիրիկական խառնվածքը: Իմաստը, ինչպես Կոլերիջը պիտի նախընտրեր ձեւակերպել, ավելի նման է ստորջրյա հոսանքի (թափուն, պարզորոշ չարտահայտված տրամադրություն), քան խորհրդապատկերների համառոտագրության: Չեմ կարող համաձայնվել խորհրդապատկերների մեկնաբան Հարրի Ռանդի հետ, որը հավատում է, որ Գորկու աշխատանքներում յուրաքանչյուր կերպարանքի իմաստը հասկանալու համար անհրաժեշտ է նախ բացահայտել «դրանց հետեւում կանգնած պատկերաստեղծ, հուզական ուժը» (4): Սա հակասում է Գորկու էսթետիկային, հատկապես նրա վերջին տարիների էսթետիկային, երբ նա ամենից ավելի որոնում էր ուղիներ համընդհանուր, տիեզերական երանգ հաղորդելու իր պատկերներին: Ընդհանրացնելու գլոբալ ոգին երբեք չի

սուցմամբ զբաղվել: Մինչդեռ Գորկուն սերնդակից շատ նկարիչներ փորձել են մրցել իրենց ժամանակակից վարպետների հետ, բայց ոչ նույնքիսի հաջողությամբ: 1930-ականների վերջերին ամերիկյան աբստրակտ նկարիչների խմբի հետ ցուցադրվող սերնդակից արվեստագետների կտավները շատ հաճախ նման էին Գորկու վրձնածներին, եւ Պիկասոյից կամ Միրոյից վերցրած իր կերպարանքները նույնքան հաճախականությամբ էին հայտնվում նրանց գործերում, սակայն, անշուշտ, ոչ նույնքիսի հմտությամբ կամ ըմբռնումով:

Գորկու նկարչական ընդունակությունները այլ բարձունքի վրա էին, ինչպես մեկ ուրիշ հմուտ նկարիչ Վիլեմ դը Քունինգը շատ հաճախ պնդել է: Երբ հազիվ 25-ը բոլորած մի երիտասարդ նկարիչ կարողանում է սինթետիկ կուբիզմի ծանրակշիռ օրինակ հանդիսացող «Ներկապնակով վերացականու-

հանդուրժի յուրաքանչյուր ձեւկերպարանք մանրամասն ուսումնասիրելու մանրախնդրությունը: Գորկին ինքն էլ միշտ մերժել է նման զտնորոշիչ մեկնաբանությունները, ասելով, որ նա իր կերպարանքներին դեմքեր չի նկարում:

Հիշում եմ, որ Կաֆկայի նամակներից մեկում կարդացել եմ, թե նա հավատում էր, որ արվեստագետը բազում կյանքերի, բազում հնարավոր անձնավորությունների եւ իր ժամանակի հետ ամենատարբեր հարաբերությունների տեր անհատականություն է: Գորկին այդպիսին էր: Նա մեկ հրաժարվում էր անձնավորել իր կերպարանքները, մեկ էլ, երբեմն, սենտիմենտալ հիշողություններով տարված, ասոցիացիաներ էր վերապահում դրանց: Քրոջը գրած իր նամակներում, երբ հանդես էր գալիս որպես եղբայր, որը ու անօթեւան հայ երեխա՝ լքված օտար ափերում, նրա հայկական ակունքներն էին խոսում եւ դրանցով բացատրվում նրա կտավները: Բայց երբ նա ճանապարհորդում էր Նյու Յորքում մի շարք այլ նկարիչների հետ անծանոթ արդիականության զգլխիչ արահետներով, նա համոզված կոսմոպոլիտ էր, որը մերժում էր գոռոզաբար որեւէ ազգային կամ տարածաշրջանային սահմանափակում: Եվ, իհարկե, նա նաեւ այլ «անձնավորություններ» էր: Այդ պատճառով էլ նրա վերջին կտավները որոշակիորեն ամրագրված ոճից հեռանալու վիրտուոզ նմուշներ են: Նաեւ այդ պատճառով Անդրե Բրետոնի հաճախ անտեսված խոսքերը Գորկու մասին դեռեւս մնում են նրա պատկերավոր երեւակայության ամենաճշգրիտ բնութագրումները:

Բրետոնը ցիտ էր հասկացել նրա ձեռներեցության բնույթը եւ երբ նա գրում էր՝ «աչքը ստեղծված չէ, որ ածուղախոսի նման գույքի ցուցակագրումով զբաղվի», այլ «քաջելու տարբերակիչ գիծը՝ հաղորդալարը երկու տարասեռ իրերի միջեւ», նա չափազանց ճշգրիտ էր բնութագրում Գորկու տեսնելու, նկատելու կարողությունը (5): Ավելին՝ երբ Բրետոնն ավարտում է իր ներածությունը, հաստատելով Գորկու կարողությունը, «սովորականից եւ իմացությունից այն կողմ անցնելու եւ լույսի անբասիր շողով մատնանշելու ազատության իսկական զգացումը» (6), նա փաստորեն խոսում է Գորկու խնդության զգացումի հաղթական բնույթի մասին, երբ նա Վիրջինիայի արեւակեզ դաշտերում խորհրդածում էր, մտիտը ձեռին, բնության ձեւերի հարստության եւ մարդկային պատմությունների հետ դրանց ունեցած բնական առնչությունների մասին: Բրետոնը նրան անվանել էր «ակնաղբյուր» եւ իրոք սկզբնական աղբյուրի՝ ջրհեղեղյան տիեզերական նշանակությամբ, գաղափարը կարմիր թելի նման անցնում է Գորկու ուշ շրջանի բոլոր գծանկարների եւ կտավների միջով:

2.

Գորկու աշխատանքների վերաբերյալ լուրջ ուսումնասիրություններից մեկում՝ գրված Ուիլյամ Սեյթսի կողմից, (որը նկարչից դարձավ արվեստաբան) կարդում ենք «ինչպիսի նուրբ գործողություն է բնորոշել, թե որոշակիորեն ինչ է ցուցադրված արվեստի տվյալ աշխատանքում» (7):

Նրա քննարկումներն, օրինակ, վերջին նկարներից «Գութանը եւ երգը» (1947) կտավի վերաբերյալ առավել լավ են բացահայտում այնտեղ պատկերվածը, քան որեւէ կենսագրական կամ խորհրդապատկերներ վերծանող հոդված: Սեյթսի համոզմամբ, Գորկին «ուրվագծագրիչ» է այդ բառի ամենալայն իմաստով: «Գութանը եւ երգը» կտավի նման իր աշխատանքների համար կատարած գծանկարներում «ուրվագծումը հիմնական դեր է կատարում: Իմաստն աբստրակցիայի (վերացականության) մեջ չէ, այլ տեսողական եւ շոշափելի աշխարհի փութաջանորեն կատարված ձեւաբանության մեջ է, որն այնքան վարպետորեն զատորոշում է մարմնական, մտոս զանգվածները կարծր, ոսկրոտ ելուստներից, մասնակիորեն իրար ծածկող ծաղկաթերթերի վաղանցիկ փնջերից կամ միջատների դյուրաբեկ մարմիններից» (8):

Սեյթսի նկարագրությունը, թե ինչպես էր Գորկին աշխատում «որոշակի սիստեմով», նախ գծային էսյուդներ էր անում, հետո ավանդական մեթոդով փոխանցում դրանք երեք կտավների վրա եւ ապա ամբողջացնում, ծանոթ էր Գորկու մասին գրողներից շատերին: Սեյթսին նրանցից առանձնացնողն այն է, որ նա գտնում էր, թե Գորկու ուշ շրջանի կտավներում *ամեն ինչ* ենթակա էր ծայրահեղ փոփոխությունների: Նա (Գորկին) ներելով մատրամ էր, նորից նկարում եւ փորձում աշխատանքի ընթացքում վերաիմաստավորել կտավը: Այդ նույն գրության մեջ Սեյթսը մի դրվագ է մեջբերում, որը նա ճշգրտորեն օգտագործում է ցույց տալու Գորկու զգայական հակումները: Մոտավորապես 1945 թ. դը Քունինգը Գորկուն ծանոթացնում է խորհրդանշանների այսպես կոչված «խազային վրձնահարվածներին», որոնք, ըստ Սեյթսի, Գորկին յուրացնում է այնքիսի հափշտակությամբ, որ սկսում է «մազերի բարակությամբ կարգի բերել» իր էսյուդների մատիտագծերը: Դրանից հետո Գորկին երբեք չի հրաժարվում այդ նորարարությունից: Սեյթսը, իմիջայլոց, հիշեցնում է իր ընթերցողներին, որ «դժվար է գիտակցել, թե ինչքան փիչ բան է անհրաժեշտ նկարչին, երբ մի գաղափար սկսում է նրան մատանջել այնքան, որ սկսում է փոխադարձ ներգործությունների մի ամբողջ շարք... Գորկին կարող էր կերպարանքների մի ամբողջ ցիկլ հնարել որեւէ նկարում կամ բնության գրկում «պատկերված» ձեւաբանական կազմվածքից: Նույնը կարելի է ասել նաեւ գաղափարների մասին: Մի բառ, մի արտահայտություն կամ խոսակցության ընթացքում մեջբերված մի ակնարկ կարող էր երկար տարիների աշխատանքի աղբյուր դառնալ» (9):

Ես Սեյթսի մոտեցումներն ընդգծում եմ, որովհետեւ Գորկու այդ հարուստ աշխարհը մուտք գործելու լավագույն ձեւը հասկանալն է, ինչպես Սեյթսն էր ասում, թե ինչքան փիչ բան է անհրաժեշտ նկարչին փոխադարձ ներգործությունների մի ամբողջ շարք սկսելու համար: Արեւմտյան նկարչության ամբողջ պատմությունը լի է այնքիսի նկարիչների օրինակներով, որոնք յուրաքանչյուրի, մատիտի, գրչի եւ թանաքի ընձեռած լայն հնարավորություններից օգտվելով՝ ձեռնամուխ են եղել գլխապտույտ առաջացնող արկածախնդրությունների: Եթե որեւէ մեկը թերթի Ռեմբրանտի էսքիզների ալբոմը, պարզ կդառնա, որ իր կարիերայի կես ճանապարհին, երբ նա հայտնաբերեց եղեգնյա գրչով արված այն սահուն գիծը (երբեմն անկյունային, երբեմն սվերային), սկսեց թափանցել նոր տարածքներ, որոնք վստահորեն զարմացրին եւ ուրախացրին նրան:

Տես էջ 9

Արշիլ Գորկի-100

Սկիզբը՝ էջ 9

3.

Մինչ Գորկին ուժ էր հավաքում իր երիտասարդ տարիներին, նա բազմաթիվ հանդիպումներ էր ունենում, որոնք, ըստ մեկնաբանների, հետագայում իրենց արտացոլումն են գտել իր կտավներում: Նրա ծննդյան տարեթիվը 1904-ն է, 1905-ը կամ 1906-ը: Եթե վերջինն ընդունենք, ուրեմն նա ընդամենը 24 տարեկան էր 1930-ին, երբ Նյու Յորքի Նորաբաց Արդի արվեստի թանգարանում մասնակցել է ցուցահանդեսի եւ հաստատվել Յունիոն Սքուեարի հանրահայտ իր արվեստանոցում: Եթե նույնիսկ 26 տարեկան էր, դարձյալ շատ երիտասարդ էր որպես նկարիչ (հաշվի առնելով տեխնիկական եւ պատմական ոճերի իրեն ընձեռված ուսումնասիրությունների բազմաթիվ հնարավորությունները) եւ դեռ երկար ճանապարհ ուներ անցնելու: 1925-ից նա Նյու Յորքում էր: Ուեսթ Վիլիջ (որտեղ նա աղքում էր Սուլիվան փողոցում) հասնելուց հետո, երկու տարում նա խորապես ուսումնասիրել էր կուբիզմի սկզբունքները, որի վկայությունն իր այդ շրջանի բեախնդությամբ արված գծանկարներն են: Մինչեւ 1930 թ. նա արդեն գծագրության դասատու էր, որն ինքնին պահանջում էր որոշակի գիտելիքների յուրացում եւ քննադատական սուր մտածողություն: Դասավանդելու համար նա պետք է կարողանար գործի դնել իր իսկ սովորածը եւ փորձը: Հաշվի առնելով Մ. Նահանգներ ուշ ժամանումը (արդեն 16 տարեկան էր) եւ լեզվական դժվարությունը, տրամաբանական է մտածել, որ նա շատ էր աշխատում որպես մանկավարժ արվեստի վերաբերյալ իր տեսակետները հստակեցնելու համար:

Ուշ 20-ականներից մինչեւ 30-ականների վերջը՝ վճռորոշ տարիներ ոչ միայն Գորկու, այլ նաեւ իր ընկերների համար, արժեքավոր շատ բան կա նշելու, գաղափար կազմելու համար Գորկու բազմաբնույթ ձեռնարկումների մասին: Նա հանդիպել է Ստուարտ Դեյվիսին 1929-ի աշնանը, երբ վերջինը հենց նոր էր վերադարձել Փարիզից: Հաջորդ տարի Գորկին երկար ժամեր անցկացրել է Արվեստի ուսանողների լիգայում, որտեղ Դեյվիսը դասավանդում էր, եւ որտեղ քննարկումներն անպակաս էին: Դեյվիսը, պերճախոս ռուս գաղթական Ջոն Գրահամը, որն այդ լիգայի ճաշարանում էր տեղավորվել, եւ Գորկին հայտնի եռյակ էին դարձել: Երբ դը Քունինգը հանդիպել է Գորկուն, հավանաբար 1933-ին, նրանց անվանել է «երեք հրացանակիրներ»: Դեյվիսը, որը մի տասը տարով մեծ է եղել, եւ Գրահամը, որն ավելի մեծ էր, ֆրանսիական նկարչության մասնագետներ էին եւ կարող էին տեղեկություններ ու խորհուրդներ տալ Գորկուն: Բայց թե ինչքանով էր Գորկին օգտվում դրանցից, հարցական է: Հաճախ Գրահամի տեսական գրությունները են (որոնք հակասություններով լի են) օգտագործվում որպես հիմք ներկայացնելու Գորկու էվոլյուցիան: Բայց հաշվի առնելով այդ շրջանի տարբեր նկարիչների կցկտուր նշումները Գորկու մասին, առավել հավանական է, որ Գորկին իր անհանգիստ բնավորությամբ, մտածելակերպով եւ սուր աչքով դեսից-դենից մանրումներ վերցնելով, ի վերջո իր արվեստանոցի տարածքում հանգում էր սեփական եզրակացություններին: Անառարկելի է, որ Դեյվիսն ու Գորկին առնվազն մինչեւ 1934 թ. ծառայում էին միեւնույն նպատակին: Գորկին Դեյվիսի մասին էր գրում, Դեյվիսը՝ Գորկու: Երկուսն էլ փառաբանում էին կուբիզմի առաքինությունները: Գորկին հիանում էր Դեյվիսի սեղմ արտահայտություններով, որ նա գրել էր 1931 թ. գարնանը «Դաունթաուն պատկերասրահում» իր կազմակերպված ցուցահանդեսի առիթով:

«Այստեղ ձեւային հասկացությունների անսահման քանակություն կա: Իմը չափազանց պարզունակ է եւ հիմնված այն ենթադրության վրա, որ տարածությունը շարունակական է, իսկ նյութը՝ մատերիան, ընդհատական» (10): Դեյվիսը խոսում էր նաեւ մի գաղափարի մասին, որն անվանում էր «ուղղորդիչ (կամ կառավարող) ճառագայթ», որը դատելով Գորկու այդ շրջանի գործերից, կարող էր զարկ տալ վերջինիս երեւակայությանը: Գորկին էլ իր հերթին գնահատանքի խոսքեր է գրել Դեյվիսի ստեղծագործությունների մասին, որը տպագրվել է միայն ժամանակ անց: Դրանում նա անդրադարձել է տարածության մասին Դեյվիսի նոր մոտեցմանը: «Նա տալիս է մեզ շոշափելի տարածության խորհրդապատկերներ, իրենց ձգողականությամբ եւ ֆիզիկական օրենքներով»: Նա գովասանքով է արտահայտվել Դեյվիսի կտավներում նշված այն նախադասության մասին, որտեղ արվեստագետն իր նկարներն «անալոգիական» է բնութագրել եւ այնուհետեւ խոսել «տեսողական սղագրության» մասին (11): Գորկին հստակորեն համամիտ է եղել Դեյվիսի էքսպրեսիոնիստական դիրքորոշումներին եւ մեծապես ոգեշնչված ավագ ընկերոջ հետ իր խոսակցություններից: Գորկին շարունակել է խորհրդածել կուբիզմի բնույթի շուրջ եւ մինչեւ 1937 թ. փորձել մի անգամ եւս հստակեցնել դրա ծրագիրը: Քրոջը եւ նրա ընտանիքին 1937-ի հուլիսի 3-ին գրած նամակում նա գրում է. «Ինչ է տեսական կուբիզմի էությունը: Ձարդել որեւէ առարկայի ձեւը, պայթեցնել եւ սեղմել այն, որպեսզի ցույց տվի տարածության եւ առարկայի միաձուլումը: Կուբիզմը ենթադրում է, որ տարածությունը դատարկ չէ, որ տարածությունը նույնպես կենդանի է, շնչում է: Երբ որեւէ առարկա հարվածում է երկչափ տարածական մի մակերեւույթ, առարկայի շուրջը գտնվող տարածությունը դառնում է այդ առարկայի անփակելի մասը» (12):

Գորկին նաեւ հայտնվել է այլ միջավայրերում, որոնցում տարբեր թեմաների շուրջ խոսակցության է բռնվել: Նա հաճախ է այցելել Դավիթ եւ Մարուայա Բուրլիուքներին, որոնց ռուսական առաջադիմական գաղափարները նրան դուր են եկել: Բուրլիուքները մի արվեստանոց ունեին, որտեղ ինքնաեռը միշտ պատրաստ վիճակում էր եւ որտեղ այլ ռուսական ծագում ունեցող արվեստագետներ, ինչպես Սոյեր երկվորյակները, Ռաֆայելն ու Մովսեսը, ժամանակ առ ժամանակ մասնակցում էին թեժ վիճաբանությունների՝ կյանքի, աշխարհի եւ արվեստի թեմաների շուրջ: Այլ վայրեր Գորկին այցելում էր ուրիշ նպատակներով: Նա, օրինակ, մշտական հաճախորդ էր կամ առնվազն այցելու Լեխինգտոն պողոտայում գտնվող Ուեյիիի գրախանութի, որտեղ նա եւ իր ընկերներից շատերը կարող էին ծանոթանալ Եվրոպայից ստացված արվեստի վերջին գրքերին եւ պարբերականներին: Մոլեռանդ գրքասեր լինելով՝ Գորկին այլ հրապարակումներից բացի իր տեղեկություններով լրացնում էր փարիզյան ավանգարդ նկարչության ասպարեզում կատարվող փոփոխությունների մասին Գրահամից ստացած լուրերը: Գրահամը նրան էր փոխանցում նաեւ «Քայե դ'Ար», «Վենդեսեմ սիեքլ» եւ «Դոկյումանտ» հանդեսների իր սեփական օրինակները: Գորկին մեծ ուշադրություն էր դարձնում այդ հոդվածներին, որոնցում նոր կլասիցիզմի նման «միջպատերազմական» հակումների մասին էին գրում: Նա ոչ միայն մեծ հետաքրքրություն էր տածում Ջիորջիո դը Չիրիկոյի հանդեպ, այլ նաեւ գիտեր, ինչպես իր կտավներն ու գծանկարներն են վկայում, «Վայրի պլաստիցի» անունով ճանաչված իտալական շարժման արվեստագետ անդամներին:

Գորկու մի շարք նայուտմորտերի (1928-ի եւ ապա տասը տարի անց՝ 2 «Ծաղիկների» քանիր, մածուցիկ ներկերում եւ ռիթմիկ վրձնահարվածներում նշմարելի է Դերենի փարիզյան ոճը: Այնուհետեւ այլ ավանգարդիստների հետ եւս Գորկին հանդիպել է: Նրանց թվում Ֆրեդերիկ Քիսլերը, այդ ավստրիացի անխոնջ ավանգարդիստը, որը տարբեր արվեստաբանական շրջանակներ այցելելով՝ արմատական էքսպրեսիոնիստական տեսակետներ էր քարոզում, Բումինստեր Ֆուլերը եւ Մաքս Վեբերը, որը մի ժամանակ սովորել էր Մատիսի հետ, եւ որին կարելի էր տեսնել Արվեստի ուսանողների լիգայի ճաշարանում: Տասնյակ ուրիշներ էլ կային, որոնց հետ հանդիպումները տարբեր ժամանակներում կարեւոր էին Գորկու համար:

Ինչ վերաբերում է արվեստի նշանակության մասին Գորկու հայացքների ձեւավորմանը, հիմնավոր պատճառներ կան ենթադրելու, որ մի քանի կարեւոր սկզբնաղբյուրներ, դրանց թվում Ջոն Դյուիի գաղափարները, հաճախ են քննարկվել Գորկուն ծանոթ արվեստագետների եւ սյուրռեալիստների կողմից: Դյուիի արվեստի վերաբերյալ հորդորումները, որպես «ապրված» փորձարարություն, ուժգին ազդեցություն են ունեցել: Նույնիսկ Դեյվիսը, արվեստագետների միության կարեւորության մասին գրելիս՝ հենվել է Դյուիի հայացքների վրա՝ բացատրելու համար արվեստագետի սոցիալական դերը: «Արվեստի գործը հասարակական ակցիա է կամ, ինչպես Դյուին է ասում, «փորձարարություն» (13): Մի քանի տարի անց Դյուիին շատ հաճախ մեջբերում էին Գորկու շրջանակի նկարիչները: Մաստան, որը նշանակալի դեր է խաղացել Գորկու կյանքում, նույնպես տպավորված է եղել Դյուիի գաղափարներով, հատկապես էքսպրեսիոնիստական փորձարարության էությունում օրգանական կամ դինամիկ ձեի հասկացությունով: Նա պատրաստ է եղել ընդունելու Դյուիի թեզը, քանի որ սյուրռեալիստները, որոնց Մաստան հանդիպել էր նախքան Փարիզից հեռանալը՝ 1939-ին, նույնպես այդ տեսակետները կրողներ էին: Երբ Ժյուլիեն Լեւին 1936-ին հրատարակում է «Սյուրռեալիզմը» (որն, ըստ նրա, մանրամասն ուսումնասիրել է Գորկին), գիրքը դառնում է ոչ միայն գրական եւ արտիստական գործունեության համագործակցության անգլերեն առաջին հրատարակությունը, այլեւ առաջին փորձն անգլախոս հասարակությանը ներկայացնելու ֆրանսիացի փիլիսոփա Գաստոն Բաշլարին: Երեւակայության գործունեության վերաբերյալ Բաշլարի էսքիզային հայացքները բազմաթիվ առումներով համեմատելի էին Դյուիի հայացքների հետ: Փորձառությանը զուտ տրամաբանական մոտեցում ցուցաբերելու տեսակետի նրա քննադատությունը բավական համարձակ էր: Նա ասում էր, որ «մտածողության բնագավառում անընդհատությունն էլ է մեթոդ», եւ որ «հոգեկան հեղափոխություն է հենց նոր տեղի ունեցել այս դարաշրջանում. մարդկային դատողությունը խարխխը հանելով մեկնել է, եւ հոգեւոր ճանապարհորդությունն է սկսվել: Գիտակցությունը հեռացել է անմիջական իրականության ափերից» (14):

Լեւիի պատկերասրահը բաց էր 1932-ից եւ Գորկու մշտական այցելությունների վայրն էր: Այնտեղ նա ոչ միայն տեսնում էր գլխավոր սյուրռեալիստ նկարիչների աշխատանքները, այլեւ 20-30-ականներին նրանց թողարկած ամենատարբեր հրատարակությունները: Բայց միայն Լեւիի գրքի հրապարակումից հետո է, որ Գորկին ծանոթանում է սյուրռեալիստ բանաստեղծներից ամենանշանավորների հետ: Նա մեծապես ոգեւորված էր Սամուել Բեքեթի թարգմանությամբ Պոլ Էլուարին հայտնագործելով եւ պատշաճ ձեւով օգտագործում էր Էլուարի «Սիրո տիկինը» իր սիրային նամակներում: Դժվար չէ պատկերացնել նրա հափշտակվածությունը հատկապես Էլուարով, որը միշտ խոսում էր տեսողության, աչքերի, լայնաձակ երկնքի եւ նրա գույների մասին, որն ամենանոտքն էր սյուրռեալիստ բանաստեղծներից: Բայց Լեւիի գրքում Գորկին միայն Էլուարին չհայտնաբերեց: Բեքեթը թարգմանել էր նաեւ Անդրե Բրետոնին: Անկասկած, Գորկին նաեւ ընկալել էր Պիկասոյի առանց կեսադրության եւ ազատ ասոցիացիաներով 1935-ին գրած պոեմը:

Հավատացած եմ, որ 1930-ականների վերջերին Գորկու միտքը զբաղված էր 2 սյուրռեալիստական մտահոգություններով: Առաջինը բոլոր սյուրռեալիստ տեսաբանների առաջ քաշած տեսողական ազատ ասոցիացիաների տեխնիկան էր: Օրգանական ձեւի շեշտադրումը, որ մենք գտնում ենք սյուրռեալիստ գրողների մոտ, հետագայում լրացվեց նյույորքյան արվեստագետների համար Դարսի Ուենթուորթ Թոմպսոնի «Աճի եւ ձեւի մասին» ուսումնասիրության ընթերցանությամբ, մի մոնումենտալ աշխատանք, որը հրատարակվեց 1942-ին եւ վերահրատարակվեց 1952-ին: Երկրորդը՝ այն մեծ հետաքրքրությունն էր, որ Գորկին տածում էր պրիմիտիվ, ոչ արեւմտյան հասարակությունների եւ եվրոպական արվեստի վաղ շրջանի նկատմամբ: Գորկին եւ հետագայում աբստրակտ էքսպրեսիոնիստ կոչված մյուս նկարիչները պարզապես պետք է թերթեին Ժորժ Բաթայի խմբագրած «Դոկյումանի» կամ էլ «Քայե դ'Արի» կամ «Մինոտորի» էջերը՝ տեսնելու համար լուսանկարներն այն բազմաթիվ մարդաբանական կամ արվեստագիտական հոդվածների, որոնց նրանք «պրիմիտիվ» մակդիրն էին կցրել:

Հնարավոր չէ այստեղ նշել Գորկու 30-ական թթ. մանհեթենյան բոլոր դեգերումների կամ վեճերի, հաշտությունների, կապերի մասին: Բայց ժամանակի արվեստագիտական իրադարձությունները պետք է, անշուշտ, նշվեն: Նախեւառաջ Ալֆրեդ Բարրի տարօրինակ ցուցահանդեսների շարքը, որը լուսաբանում էր արդի շարժումները: Նյույորքցիները հազվադեպ հնարավորություն էին ունեցել (ի տարբերություն եվրոպացիների) տեսնելու ոճականորեն կապակցված աշխատանքների հսկայական մի համախմբում: Միայն 1936-ի գարնանը կազմակերպվեց «Կուբիզմը եւ աբստրակտ արվեստը» ցուցահանդեսը, իսկ ուշ աշնանը՝ «Երեւակայական արվեստը: Դադա եւ սյուրռեալիզմ» ցուցահանդեսը: Պիեռ Մաթիսն ու Ժյուլիեն Լեւին արդեն ցուցադրել էին նշանավոր սյուրռեալիստ նկարիչներին եւ շարունակելու էին դեռ երկար տարիներ հրատարակել նրանց մասին կատալոգներ: Նյու Յորքում կանոնավորապես ցուցադրվում էին Պիկասոյի կտավները եւ, անշուշտ, ջանասիրաբար հավաքվում Արդի արվեստի թանգարանում: Երբ իսպանական քաղաքացիական պատերազմը Պիկասոյին մղեց վրձնելու իր հայտնի «Կեռնիկան», կտավն անմիջապես նավով ուղարկվեց Նյու Յորք, որտեղ նկարիչների եւ հատկապես Գորկու ուշադրության կենտրոնում հայտնվեց:

Հոդվածի շարունակությունը՝ հաջորդիվ

«Ծաղիկներ ծաղկամանում»

«Վարդուշի դիմանկարը»

Ծանոթագրություններ

1. Շառլ Բոդլեր: «Գրաֆավ Ֆլոբերի «Մադամ Բովարի» արվեստի եւ գրականության ընտանիում (Նյու Յորք: Պենգուին Բուքս հրատ., ԱՄՆ, 1972 թ.), էջ 244:

2. Ռոբերտ Սթոն: «Պարտատոմսերի հայելիներ», «Արշիլ Գորկի: 1904-1948» գրքում (Մադրիդ: Ֆունդացիոն կահա դը Պենսիոնես եւ Լոնդոն: Ուայթչափել Արվեստի պատկերասրահ), էջ 27, 1989 թ.:

3. Ջոն Գոլդինգ: «Արշիլ Գորկի: Ինքնատրոնում» «Արշիլ Գորկի: 1904-1948», էջ 15:

4. Հարրի Ռանդ: «Արշիլ Գորկի: խորհրդապատկերների քաղուն իմաստը» (Մոնկլեր, Նյու Ջերսի, Ալենհելդ, Օսմուն եւ ընկ. հրատարակչություն, եւ Լոնդոն, «Ջորջ Պրայոր հրատարակչություն» ՍՊԸ, 1981 թ.), էջ 54:

5. Անդրե Բրետոն: «Սկզբնաղբյուրը: Արշիլ Գորկի» «Արշիլ Գորկի» գրքում (Նյու Յորք: Ժյուլիեն Լեւի պատկերասրահ, մարտ 1945): Նույնպես Ժյուլիեն Լեւի «Արշիլ Գորկի» գրքում (Նյու Յորք: Հարրի Աբրամս ինկ. 1966), էջ. 34:

6. Նույն տեղում, էջ 20:

7. Մեջբերում Ուիլյամ Ս. Սեյթսի «Աբստրակտ էքսպրեսիոնիստական նկարչությունն Ամերիկայում» գրքի «Ներածություն» գլխից՝ գրված Դոր Ասոնի կողմից (Քեյմբրիջ, Մասաչուսեթս եւ Լոնդոն, Անգլիա, Հարվարդ համալսարանի հրատ., Արվեստի ազգային պատկերասրահի համար, 1983 թ.), էջ 16:

8. Սեյթս: «Աբստրակտ էքսպրեսիոնիստական նկարչությունը Ամերիկայում», էջ 16:

9. Նույն տեղում, էջ 160:

10. Սայուարտ Դեյվիս (Նյու Յորք: Դաունթաուն պատկերասրահ, 1931 թ.):

11. Արշիլ Գորկի: «Սայուարտ Դեյվիս», «Կրիտերիվ արտ (Նյու Յորք) հանդես, սեպտ. 1931, էջ 213:

12. Նամակ Վարդուշ, Մուրադ եւ Կառլեն Մուրադյաններին: Հուլիս 3, 1937 թ., Կառլեն Մուրադյանի «Հատուկ հարց Արշիլ Գորկու մասին», Առարատ (Նյու Յորք) պարբերական, աշուն 1971, էջ 70:

13. Սայուարտ Դեյվիս: «Նկարիչն այսօր» հոդվածը «Ամերիկն մեգըզին օֆ արտս» հանդեսում (Նյու Յորք), օգոստոս 1935, էջ 506:

14. Գաստոն Բաշլար: «Սյուրռեալիզմ» հոդվածը Ժյուլիեն Լեւիի «Սյուրռեալիզմ» գրքում (Նյու Յորք, «Բլեք սան» հրատ. 1936 թ.), էջ 188-89:

«Կոմիտաս» խառյակ-80

«Սա աշխարհի լավագույն քառյակներից մեկն է»

ՍՎԵՏԼԱՆԱ ՍԱՐԳՍՅԱՆ

(«Universale»), Մեխիկո

Ռուսաստանի եւ Հայաստանի երաժշտական արվեստի պատմությունը հագեցած է գեղարվեստի փաստերով, որոնք հավասարապես կարեւոր են երկու մշակույթների համար: 20-րդ դարում դրա առավել վառ վկայություններն են Արամ Խաչատրյանի ստեղծագործությունը եւ Կոմիտասի անվան խառյակի գործունեությունը:

2005 թ. փետրվարի 25-ին լրացավ Մոսկվայի Պ. Ի. Չայկովսկու անվան կոնսերվատորիայի «Սաների խառյակի» առաջին հրապարակային ելույթի 80 տարին: Դրա կազմում էին ուսանողներ Ավետ Գաբրիելյանը, Լեւոն Օհանջանյանը, Միխայել Տերյանը, Սերգեյ Ասլամազյանը, որոնք, կատարելագործվելով պրոֆ. Ե. Մ. Գուզիկովի կվարտետային դասարանում, սկսեցին գեղարվեստական վեհ իդեալներով եւ ստեղծագործական սխրանքներով լի գործունեություն:

Շուտով նվագացանկի եւ կատարողական հնարավորությունների բազմազանությամբ տպավորություն գործած խառյակի սրընթաց պրոֆեսիոնալ աճը 1938 թ. հաղթանակի հանգեցրեց աղեղնավոր խառյակների համամիութենական մրցույթում. արդեն որպես Կոմիտասի անվան խառյակ (1932 թ.), նա առաջին տեղը կիսեց Մեծ թատրոնի լարային խառյակի հետ: 30-40-ական թթ. Մոսկվայում, Լենինգրադում, Սիբիրի, Պովոլժիեի, Հյուսիսային Կովկասի, Ուկրաինայի, Բելոռուսիայի, Անդրկովկասի քաղաքներում խառյակի լայն ճանաչման արդյունքը դարձավ ԽՍՀՄ Պետական (Ստալինյան) մրցանակի շնորհումը (1946 թ.): 1953 թ. սկսվեցին արտասահմանյան համերգներ: Որպես երկրի առաջատար, խումբը դարձավ 1963 թ. ԱՄՆ եւ Կանադա այցելած առաջին խորհրդային խառյակը (32 համերգ երկամսյա հյուրախաղերի ընթացքում): Այն ժամանակ (5 փետրվար, 1963 թ.) «Վաշինգտոն փոստում» երաժշտական քննադատ Պ. Հյումն իր «Ռուսական խառյակը փայլուն ոճ է ցուցադրում» հոդվածում գրեց. «Համույթը նվագում է մեծ նրբությամբ եւ զգում ֆրազի ու տոնայնության անորսալի երանգները»:

Կես դարից ավելի խառյակի անփոփոխ ղեկավարն Ավետ Գաբրիելյանն էր (1899-1974 թթ.)՝ կարկառուն մի անձնավորություն, ջութակի արվեստի մի ամբողջ դարաշրջանի առաջնորդ, որն արդեն 1924 թ. Երեւանում հիմնել էր հայկական առաջին լարային խառյակը: Նրան արժանի բարձրակիրթ երաժիշտ, թավջութակահար Սերգեյ (Սարգիս) Ասլամազյանը (1897-1978 թթ.)՝ խառյակի համար Կոմիտասի երգերի աշխարհահռչակ վերադաշնակումների հեղինակը, խմբի կազմում էր ընդհուպ 1968 թվականը:

Քառյակի գործունեությունը 50 տարի ծավալված էր Մոսկվայում. խմբի երաժիշտները միաժամանակ Մոսկվայի կոնսերվատորիայի պրոֆեսորներ էին: Մասնավորապես ալտահար եւ դիրիժոր Միխայել Տերյանը կազմակերպիչն է Մոսկվայի կոնսերվատորիայի կամերային նվագախմբի, որը 1970 թ. դարձավ Հերբերտ ֆոն Կարայանի անվան հիմնադրամի բեռլինյան մրցույթի դափնեկիր:

1947 թ. խառյակի կազմի մեջ են մտնում ջութակահար Ռաֆայել Դավթյանը եւ ալտահար Հենրիկ Թալալյանը (անժամանակ մահացավ 1972 թ.): Սակայն ճակատագրի վայրիվերումները եւ կազմի փոփոխությունները փոխհատուցվում էին Գաբրիելյանի ներկայությամբ, որն առաջնորդում էր համույթի ավանդույթների ժառանգորդությունը, կատարողական ոճի պահպանումը:

Հսկայական նվագացանկը (պարտավոր տեղ էին գրավում Ռուսաստանի եւ Հայաստանի կոմպոզիտորների կվարտետները) ձեւավորեց գեղարվեստական արտահայտչականության եւ գործիքների վիրտուոզ տիրապետման ձեւերի բազմազանությունը: Հատկանշական է, որ խառյակի անդամները ստեղծագործության ընթերցման մեջ չէին կորցնում իրենց կատարողական անհատականությունը, ինչը մշտապես նշվում էր 50-60-ական թթ. խորհրդային եւ արտասահմանյան մամուլում: Քառյակի կատարողական նկարագիրն առանձնանում էր կատարման ռոմանտիկ ներշնչանքով, յուրահատուկ հուզական տոնուսով եւ միաժամանակ արվեստագետների նվագի «անհատական ինքնօրինակությամբ»: Կոմիտասականների կատարողական ոճի հմուտ գիտակ Ռ. Դավթյանը դրան բնորոշ առանձնահատկությունների մեջ ընդգծում է «մենանվագային եւ իմիտացիոն դրվագներում անհատական արտահայտման ազատությունը՝ երկձայնության եւ բազմաձայնության մեջ կատարման նույնականության հետ զուգորդված»: (Բ. Դավիդյան, "Квартет имени Комитаса", Ереван, 1974, стр. 51):

1970 թ. սկսվում է նոր ժամանակաշրջան. Ավետ Գաբրիելյանը որպես երկրորդ ջութակ հրավիրում է Մոսկվայի պետական կոնսերվատորիայի (Լ. Բ. Կոգանի դասարան) 23-ամյա շրջանավարտ, Գ. Վենյավսկու եւ Մ. Լոնգ-Ժ. Տիբոյի անվան մրցույթների դափնեկիր Էդուարդ Թադեւոսյանին: Ավետ Գաբրիելյանի հետ աշխատելու վեց տարիները Թադեւոսյանի համար դարձան համույթային վարպետության դպրոց, թույլ տալով թափանցել խառյակային լաբորատորիայի գաղտնիքների մեջ: 1976 թ. Է. Թադեւոսյանն սկսեց գլխավորել Կոմիտասի անվան խառյակը՝ առ այսօր հանդիսանալով դրա առաջին ջութակը:

Այդ ժամանակվանից Քառյակը հաստատվեց Երեւանում: Դրա նոր սաները հիմնականում Մոսկվայի եւ Լենինգրադի կոնսերվատորիաների սաներ էին: Ռուսաստանի աղեղնավոր գործիքների դպրոցների ավանդույթները մերձեցրին այնպիսի տարբեր անհատականությունների, ինչպիսիք են Հակոբ Մեհինյանը (երկրորդ ջութակ), Յակով Պառյանը (ալտ) եւ Ֆելիքս Սիմոնյանը (թավջութակ). սա էր Քառյակի կազմը 1976-1984 թթ.:

1984 թ. որպես երկրորդ ջութակ Քառյակի մեջ է մտնում Սուրեն Հախնազարյանը (Լ. Կոգանի սաներ էր Մոսկվայի պետկոնսերվատորիայում), 1990 թ.՝ Ալեքսանդր Կոսեմյանը (ալտ), 2000 թ.՝ Արամ Թալալյանը (թավջութակ): Քառյակի նվագակցներ (ընդհանուր առմամբ Կոմիտասի անվան խառյակը հանդես է եկել 50-ից ավելի երկրներում), խումբը մշտապես թարմացրել է ծրագրերը՝ ընդսմին պահպանելով նվագացանկային առաջատար սկզբունքները: Առաջինը 19-20-րդ դդ. գերմանական եւ ռուսական կլասիկան է (այդ թվում Ասլամազյանի կատարած Գ. Ֆ. Հենդելի «Պասակալիայի» կվարտետային փոխադրումը), ըստ որում ոչ միայն կվարտետները, այլեւ Ռ. Շումանի, Դ. Շոստակովիչի դաշնամուրային կվինտետները: Երկրորդ սկզբունքը 20-րդ դարի երկրորդ կեսի երաժշտությունն է, որն առավելապես հայկական է (Ա. Բաբաջանյան, Է. Միրզոյան, Է. Հովհաննիսյան, Ղ. Սարյան, Տ. Մանսուրյան, Լ. Ջաուրյան, Է. Հայրապետյան, Ս. Զաֆարյան եւ ուրիշներ), թեեւ նվագացանկում կան 3. Ֆալիկի երկու կվարտետներ (թիվ 3-ը նվիրված է Կոմիտասի անվան խառյակին), Դ. Շոստակովիչի հինգ կվարտետներ (NN 1, 4, 7, 8, 11) եւ արտասահմանյան կոմպոզիտորներ, օրինակ՝ Դ. Կուրտագը: Երրորդ սկզբունքը լարային խառյակի համար գրված Կոմիտաս-Ասլամազյանի մանրանվագ գլուխգործոցներն են, որոնք յուրահատուկ համերգի պարտադիր հավելումն են:

Կոմիտասականները կատարողական կարգը պահպանում են ամենայն պատասխանատվությամբ: Համույթը փառաբանված է չորս գործիքների տեխնիկական եւ տեմբրային ներդաշնակությամբ: Այսպես «Wiesbadener Tagblatt»-ը 1986 թ. նոյեմբերի 23-ին նշում է հետեւյալը. «Յուրահատուկ գործիքի ձայնը բացարձակ էր...», կամ «դա փառատոնի իսկական սենսացիան էր», ինչպես գրում է «Svenska Dagbladet»-ը 1987 թ. օգոստոսի 7-ին, կամ «...չորս երաժիշտ մեկ ուրով» («Ասպարեզ», ԱՄՆ, 13 մայիսի 2003 թ.), կամ, ինչպես գրում է էկվադորյան «El Commercio»-ն 2003 թ. հունիսի 6-ին, «ջութակները, ալտը եւ թավջութակը հնչում են որպես մեծ նվագախումբ»:

Համերգների այդ եւ մյուս արձագանքները, «փայլուն», «զմայլիչ», «ֆանտաստիկ» մակդիրները վկայում են, որ մեծ նախորդների դասերն ըստ արժանվույն շարունակվում են: Քառյակի անհատականությունը, որպես կանոն, մատնում է կենդանի երաժշտական խոսքի առկայությունը՝ իր անկրկնելի ձայներանգով եւ ագոգիկայով, բաբախուն դինամիկայով ու ռիթմով: Կարետելով յուրահատուկ ֆրազը, արտահայտիչ կերպով խոշորացնելով երաժշտության պլաստիկան, ստեղծելով կատարվող կվարտետի ասես միասնական, ընդհանրացված կերպար՝ կոմիտասականները դրանով իսկ չեն բացառում երաժշտության իրենց յուրօրինակ մեկնաբանումը ոճային ավանդույթի շրջանակներում:

Նման անհատականացումը երկրի հնագույն երաժշտական կոլեկտիվի շարժման, մշտական կատարելագործման իմաստն է: Կոմիտասի անվան խառյակի 80 տարվա գործունեության վկայությունները 17 ձայնաթակները եւ 13 խտասկավառակները, համամիութենական ռադիոյի եւ Հայաստանի ռադիոյի բազմաթիվ ֆոնդային ձայնագրություններն ու նաեւ ունկնդիրների ուրտերն են:

Հոգեպես եւ գործիքային առումով համերաշխ կոմիտասականները (Հախնազարյանը, Կոսեմյանը եւ Թալալյանը նվագում են Ա. Գվարներիի պատրաստած գործիքներով, իսկ Թադեւոսյանը՝ Գաբրիելյանի հանձնած Պ. Գվարներիի ջութակով) վստահաբար են դիմավորում նոր տասնամյակը: ■

1-ին ջութակ՝ Ա. Գաբրիելյան, 2-րդ ջութակ՝ Ռ. Դավթյան, ալտ՝ Հ. Տալալյան, թավջ.՝ Ս. Ասլամազյան: 1950-ական թվականներ

1-ին ջութակ՝ Է. Թադեւոսյան, 2-րդ ջութակ՝ Ա. Հախնազարյան, ալտ՝ Ա. Կոսեմյան, թավջ.՝ Ս. Թալալյան: Կես դար անց

ԴՈԿՏ. ՀԻԼՏԱ ԳԱԼՓԱՅԵԱՆ-ՓԱՆՈՍԵԱՆ

ԴԱՍԱԼԲՈՒԹԵԱՆ ՅՈՐԴՈՐ՝ ՍՓԻՒՌՔԱՀԱՅՈՒՆ

Բարեկամներու միջոցաւ տեղեկացայ, որ հայասաստեան «Ազգ» օրաթերթի մէջ յօդուածի ձեւով «նամակ» մը լոյս տեսած է ինծի ուղղեալ «**Հանդուրժենք մեր զոյգ ուղղագրութիւններ**» խորագրով եւ բանասիրական գիտութիւններու թեկնածու Արծուի Բախչինեանի սորագրութեամբ, որ իրականութեան մէջ պատասխան մըն է Պէյրութի «Շիրակ» ամսագրի սեպտեմբերի թիւին մէջ իմ գրած մէկ յօդուածիս: Բախչինեանի այս «նամակ»ը նոյնութեամբ լոյս տեսած է նաեւ 26 փետրուար 2005ի «Ազգ» օրաթերթի համացանցի կայքին վրայ, արտատպուած է նաեւ Ամկավար ազատական կուսակցութեան պատշաճաթերթ «Նոր Օր»ի վրայ, Նիւ Եորք:

«Ազգ»ի խմբագրութիւնը, իր կողմէ քանի մը տողնոց նախաբանով կ'ըսէ հետեւեալը. «Արդէն 3-4 տարի «Ազգ»ը մերժում է տպագրել ուղղագրութեան հարցի շուրջ սփիւռքից եւ Հայաստանից ստացուած բազմաթիւ իրարադէմ յօդուածներ ... բացատրելով որ **ներկայ պահին ոչ Հայաստանի, ոչ էլ սփիւռքի գլխաւոր առաջնահերթութիւններից չէ այդ խնդիրը**»:

«Ազգ»ի այս տողերէն իսկ կը յայտնուի թէ ուղղագրութեան նիւթը թաբու է Հայաստանի մէջ: Արդէն որեւէ հայաստանեան թերթ չի հրատարակեր ուղղագրութեան նիւթով յօդուած: Այս պատճառաւ է որ թէ՛ սփիւռքահայ եւ թէ Հայաստանցի մտաւորականներս Մեսրոպեան ուղղագրութեան վերականգնումը պահանջող մեր յօդուածները սթիպուած կը հրատարակենք սփիւռքի թերթերուն մէջ: Պատասխան յօդուածներն են միայն որ կը հրատարակուին հայաստանեան թերթերու մէջ, որոնք միշտ յառաջ կը բերեն Մեսրոպեան ուղղագրութեան վերադարձին համար **ներկայ պահու անյարմարութիւնը**, ինչպէս կ'ըսէ «Ազգ»ն ալ իր նախաբանով, հարցի «**ոչ առաջնահերթութեան**» գաղափարը տարածելով:

Բախչինեան պատմական առումով շահեկան կը գտնէ «ՀԱՅԵՐԷՆԻ ԿՐԵՄԼԻՆԵԱՆ ՃԱԿԱՏԱԳՐԷՆ ՍԻՆՉԵՒ ԱՅՍՕՐ» խորագրեալ յօդուածս, «Շիրակ»ի մէջ, ըսելով.- «Քիչերն են ծանօթ Կարէն Ա. Սիմոնեանի «Կրեմլի յոյժ գաղտնի փաստաթղթերից մի քանիսը» գրքոյկին, որի վրայ հիմնուելով եւս մէկ անգամ դուք ցոյց էք տուել, որ՝ այո՛, Մոսկուայի անմիջական հրամանով է ի կասար ածուել Հայոց լեզուի ուղղագրութիւնը փոխելու որոշումը: ... Ոչ ոք դրան չի կասկածում: Այդ փաստաթղթերի հրապարակումից յետոյ այլեւս ոչ ոք կասկածելու իրաւունք չի կարող ունենալ»:

Փաստ Աստուծոյ, իմ պնդումներէս մէկը աղացուցուեցաւ: Յուսանք որ Հայաստանի այսօրուան լեզուաբաններն ալ Բախչինեանի նման ընդունին փաստը, թէ ուղղագրութեան փոփոխութեան պատճառը զուտ քաղաքական էր եւ այլեւս անիմաստ կերպով չպնդեն թէ Աբեղեան արդէն 1892 թուականին փոփոխութեան առաջարկ մը հրապարակած էր, շատ լաւ գիտնալով հանդերձ թէ առանց 1922ի տխրահռչակ սովետական հրամանագրին, Աբեղեանի առաջարկը մինչեւ այսօր կրնար մնալ իր դարակին մէջ, որպէս յիշատակ:

Բայց միթէ մինչեւ մեր օրերը սպասելու պէտք կա՞ր, գիտնալու համար որ 150 ազգերու ուղղագրութիւններու փոփոխութիւնը այդ ազգերը միաձուլելու նպատակով Սով. Միութեան հետապնդած լեզուական քաղաքականութեան արդիւնքն էր, քանի որ 1920 թուականի սկիզբը Մոսկուայէն Հայաստան ուղարկուած առաջին Լուսաւորութեան Կոմիսար Ատոմ Յովհաննիսեան արդէն յայտարարած էր այդ թուականին, թէ «Ուղղագրական հարցը քաղաքական հարց է եւ հայ լեզուի ուղղագրական ռեֆորմի խնդիրը՝ Հայաստանի յեղափոխական իշխանութեան հերթական խնդիրը»: Այս հարցի ներքին ծալքերն ու իշխանատրներու միջեւ փոխանակուած գաղտնի գրագրութիւններն են միայն, որ վերջերս պարզուեցան: Հայաստանի լեզուաբանները շատ լաւ գիտեն այս պատմական իրողութիւնը, սակայն մինչեւ այսօր կը թաքցնեն զայն ժողովուրդէն, Սովետական վարչաձեւին մեղքը ծածկելու նպատակով: Դժբախտաբար Բախչինեանն ալ Հայաստանի ներկայ լեզուաբաններու ճակատներուն զոհ գացողներէն մէկն է, քանի որ կը գրէ .- «Ուզում եմ հաստատել, որ Հայութիւնը մասնակիորէն կը բաժանուի եւ կը պարտադրուի ոչ միայն Հայաստանի, ոչ էլ սփիւռքի գլխաւոր առաջնահերթութիւններից չէ այդ խնդիրը»:

Ոչ, ես չեմ կարծեր որ լեզուի եւ ուղղագրութեան հարցը այնքան անկարեւոր է, որ իր լուծումը կարելի է թողուլ յետագայի՝ երբ Հայաստան նիւթապէս վերականգնի:

Չեմ կարծեր նաեւ, որ հարցի լուծումը նիւթական մեծ գումարներու կը կարօտի: Եւ մանաւանդ, չեմ կարծեր որ Հայոց Պատմութեան ամենաճնշուն շրջանը ներկայի շրջանը ըլլայ: Յիշենք գերութեան, սովկութեան երկար դարերը, երբ վայրի ցեղերը կ'ասպատակէին, կը կոտորէին մեր ժողովուրդը, կ'աւերէին մեր երկիրը, կ'ոչնչացնէին մեր հոգեւոր արժէքները: Ոչ գաղթը նորութիւն է մեզի համար, ոչ աղքատութիւնը, ոչ ալ՝ ջարդը, սովը եւ համաճարակները: Այդ արհաւալից դարերու ընթացքին մարդիկ ինչպէս գոյութիւն պատշաներ են: Միլիոններով գաղթեր են: **Իսկ մնացողները աւելի կուշտ փոր չունէին, քան այսօրուան միջին Հայաստանցին, բայց միշտ, ամենադժուար ժամանակներու մէջ ալ Մշակոյթը շարունակուեր է**: Ոչ ոք մտածեր է՝ «Սա վատ ժամանակները թող անցնին, 50- 60-100 տարի համբերենք, գիր եւ գրականութեամբ յետոյ կը զբաղինք» : Դեռ 90 տարի առաջ, մեր մեծ մայրերն ու մեծ հայրերը խոտերուն մէջ ամիսներով պահուրտելով, սողալով, վայրի խոտեր եւ միջատներ ուտելով գոյութիւն պատշաներ են, թունատուտողը մահացեր է, բայց ողջ մնացողը անապատի կիզիչ աւազներուն վրայ մատով այբ, բեն, գիմ սորվեցուցեր է իր սովահար երախային : Այնպէս որ չեմ կարծեր թէ լեզուի եւ մշակոյթի հարցերը կարելի ըլլայ յետագայի թողուլ: **Չեմ կարծեր թէ ոեւէ մէկը իրաւունք ունի «ներկայ պահը անյարմար» նկատելու կամ ուղղագրութեան վերականգնումի հարցը «առաջնահերթ» չնկատելու**: Ընդհակառակը, Սովետական Միութեան փլատակներէն վերյառնող Հայաստանի Հանրապետութիւնը առաջին հերթին պէտք է զբաղի լեզուի եւ մշակոյթի հարցերով, քանի որ 80 տարուան ապազգայնացումէ յետոյ առաջին հերթին պէտք է նետել ազգային մտածողութեան, ազգային գաղափարախօսութեան հիմերը: Այլապէս, ապազգայնացած վիճակով, միայն երկրի տնտեսական հարցերով ու «բիզնես»ով զբաղելով կարելի չէ իր սեփական դէմքը ունեցող երկիր պահել, պետականութիւն կառուցել, ինքնիշխան ըլլալ: Պատմութեան ընթացքին մենք Հայերս մեր մշակոյթով է որ գոյատեւեր ենք, նոյնիսկ՝ պետականութեան բացակայութեան դարերուն: Իսկ հիմա որ պետականութիւն ունինք, հիմա՞ է որ պիտի հեռանանք մեր մշակոյթէն, մշակութային հարցերու լուծումը յետագայ դարերուն թողլով: Մեր գրատր լեզուն մեր ազգային ինքնութիւնն իսկ է: Պէտք է վերադառնանք մեր արմատներուն եւ վերագտնենք մեր համազգային ինքնութիւնը:

Հայաստանեան ներկային վերաբերող ցաւերուն մեծ մասը ապազգային մտածողութեան եւ գործելակերպի արդիւնք են, հետեւանք՝ սովետական ժամանակաշրջանի բարքերուն: Օրինակ, աղանդաւորական գաղափարախօսութեան , «գլոբալիզմ»ի, «ամերիկանիզմ»ի եւ այլ «իզմ»երու հանդէպ այս զանգուածային հակումը ինչո՞ւ այսքան տարածուած է, որովհետեւ չկայ զանոնք փոխարինող ազգային գաղափարախօսութիւն: Մարդիկ ինչո՞ւ կը գաղթեն: Որովհետեւ մարդոց բարոյականը բարձրացնող, ապագայի տեսակէտով յուսադրող որեւէ «ազգային» մօտեցում եւ կեցուածք չկայ: Հայոց հայրենիքը ազգային դիմագիծ չունի դեռ : Եւ մարդիկ կը գաղթեն, հետեւելով ասացուածին որ կ'ըսէ՝ «Որտեղ հաց՝ այնտեղ կա՛ց»: Հայերէնի ուսուցումը դպրոցներու մէջ ինչո՞ւ անընդունելիօրէն յետամնաց վիճակ ունի, նոր սերունդը ազգային լեզուէն ու գրականութենէն ինչո՞ւ այսքան հեռացած է, հայերէն լեզուն, որ աշխարհի ամենահարուստ եւ ամենաճկուն լեզուներէն մէկն է, ինչո՞ւ այսքան խեղճացած, աղքատացած եւ մուրացկանութեան ելած է՝ օտար լեզուներէն տեւաբար անյարմար եւ սխալ փոխառութիւններ կնքելով: **Պատճառը միշտ ազգային մօտեցումի բացակայութիւնն է**:

Այս բոլորին դարմանն է **ժողովուրդին ազգային մտածողութիւն եւ ազգային զգացողութիւն ներարկել: Առաջին հերթին անհրաժեշտ է վերականգնել համազգային միասնական ուղղագրութիւնը,** մեր ազգի երկու հատուածներուն միջեւ բաժանումը վերացնելով:

Թէ ինչո՞ւ պէտք է ուղղագրութեան հարցէն սկսիլ: **Որովհետեւ միայն լեզուի կալուածն է որ գերազանցապէս ազգային է, ներհայկական է**, որ բացարձակապէս կախեալ չէ արտաքին ազդակներէ, պետութիւններու կամքէն, փոխյարաբերութենէն եւ փոխադարձ շահերէն: **Կրթական ու մշակութային կեանքի մէջ կատարուած ուղղագրական բարեփոխութիւնը ազգային արժանապատուութիւն եւ հպարտութիւն պիտի ներշնչէ ժողովուրդին, վստահութեան մթնոլորտ մը պիտի յառաջացնէ Պետութեան եւ Հայաստանի ապագային հանդէպ:** Արդարեւ, աշխարհի վրայ քանի՞ ժողովուրդ ունեցած է սեփական այբուբեն եւ ուղղագրութիւն, որ անփոփոխ կերպով օգտագործուած ըլլայ 15 դար: Միթէ ի՞նչ պատուաբեր բան է սա եւ ի՞նչ հպարտութիւն կը պատճառէ ժողովուրդին: Սփիւռքի հսկայական ներուժին հետ ալ ո՛չ թէ կարգախօսով, այլ իրաւո՛ւն միասնանալու կարելիութիւնը այլապէս պիտի նպաստ՝ յուսադրելով եւ բարձրացնելով մարդոց բարոյականը, ինքնավստահութեան զգացում յառաջացնելով եւ նախաձեռնութեան ոգի ներշնչելով անոնց: Ամէն ինչ մարդոց բարոյականէն ու կամքէն կախեալ է:

Իր հիմնադրութեան տարիներուն, Իսրայէլի պետութիւնը, որպէս առաջին գործ, ձեռնարկեց դարերէ ի վեր մոռցուած եբրայերէնի վերականգնումին, որ անբաղդատելիօրէն աւելի դժուար գործ էր, քան՝ մեր ուղղագրութեան մէջ քանի մը օրէնքի փոփոխութիւնը: Ոեւէ մէկը «**ներկայ պահը անյարմար» չնկատեց այդպիսի հերիւրեան գործի մը համար, այլ երկիր կառուցելու ձեռնարկեցին լեզո՛ւն վերականգնելով, որպէս առաջնահերթութիւններու՛ առաջնահերթութիւն**: Ցեղասպանութենէ փրկուած սովահար ազգ մը անապատի պայմաններուն մէջ հետզհետէ չգնաց, չորեգրեց իրեն ծանօթ ետոպական լեզուներէն մէկը՝ որպէս երկրի պաշտօնական լեզու: Այլ յաղթելու կամքով զինուած, ասպարէզ կարդաց դժուարութիւններուն եւ յաղթանակեց: Փրկեց լեզուն եւ ինքն ալ փրկուեցաւ: Ցուցանէ առակս :

Բախչինեան, հաւատ ընծայելով Հայաստանցի լեզուաբաններու տարածած սխալ տեղեկութիւններուն, կը տարակուսի թէ ուղղագրութեան տարբերութիւնը մեր ժողովուրդի երկու հատուածներու միջեւ յառաջացած բաժանումին հիմնական պատճառը ըլլայ: Հարց կու տայ .- «**Միգուցէ, անհիմն կանխատրամադրուածութիւնը եւ միմիեանց աւելի լաւ ճանաչելու գործո՞ւնն է առկայ**»: Փոխադարձ հարց կու տամ.- Ինչո՞ւ Սփիւռքահայերս տասնեակ տարիներէ ի վեր կ'ըմբոստանանք, անընդունելի կը գտնենք ուղղագրական տարբերութիւնը եւ կը պահանջենք վերադարձ միասնական Մեսրոպեան ուղղագրութեան : Որովհետեւ բառապատկերներու փոփոխութեան հետեւանքով իրարու մամուլ եւ գրքեր կարդալու անկարելիութիւն յառաջ եկաւ, գրատր հաղորդակցութեան կապը խզուեցաւ Հայաստանի եւ Սփիւռքի միջեւ, իրարու լեզուամտածողութեան եւ հոգեբանութեան անհաղորդ դարձանք: Հայերենիէն հեռու ապրողներս աւելի լաւ կը զգանք թէ հեռզհեռէ աւելի կը հեռանանք իրարմէ եւ մեզ իրարու կապող զգացական կապն իսկ փրթելու մօտեցած է: Մեր ըմբոստութիւնն ու պահանջատիրութիւնը իրականութեան մէջ նաւաբեկեալին արձակած S.O.S. նշանն է, որով ան օգնութիւն կը խնդրէ օգնելու կարելիութիւն ունեցողէն: Դժբախտաբար մեր դիմումը կը հանդիպի տեսնել, լսել եւ զգալ չուզող խումբ մը անձերու մերժումին, որոնք իրենց անմիտ կեցուածքով թէ՛ Սփիւռքի եւ թէ Հայաստանի ապագային վնաս կը պատճառեն՝ իրենց նստած ծառին ճիւղը կտրելով: Տասնեակ տարիներէ ի վեր, Սփիւռքահայ սերունդները հայ լեզուի, գրականութեան, պատմութեան ընդունելի դասագրքեր չունեցան, այլ դպրոցներու մէջ օգտագործուեցան աջէն ձախէն ճարուած էջեր, բանաստեղծութիւններ: Նախ անհրաժեշտ էր այդ էջերու ուղղագրութիւնը Մեսրոպեանի վերածել, յետոյ մեքենագրել, յետոյ աշակերտներու թիւով պատճենահանել եւ բաշխել աշակերտներուն: Ինչքան ջանքեր, պարապին ծախսուած գումարներ, կորսուած ժամանակ: Հակառակ այս դժուարութիւններուն, Պարոյր Սեւակ, Յովհաննէս Շիրազ կարդացուցիք մեր աշակերտներուն: Հապա ի՞նչ ըսել մանկապատանեկան գրականութեան չգոյութեան, երբ ուսուցուած լեզուն կարելի չէ աշակերտին ուղեղին մէջ ամրացնել՝ Մեսրոպեան ուղղագրութեամբ ընթերցանութեան գրքերու չգոյութեան պատճառով: Ո՞ր ազգը այսքան դժուարութիւն դիմագրաւած է : Այս պայմաններուն մէջ ձեռք բերուած արդիւնքը հրաշք համազօր է:

Բայց ինչ հիանալի սերունդ կրնայիք ունենալ, եթէ չըլլար այս բաժանուածութիւնը եւ օգտուէիք միասնական ուղղագրութեամբ տպուած Հայաստանեան դասագրքերէ եւ մանկապատանեկան գրականութենէ: Այս բոլորին վրայ վերջին տարիներս նոր եւ անյաղթահարելի դժուարութիւն մը եւս աւելցած է, որ բոլորովին անկարելի կը դարձնէ սովորական նամակագրութիւնն անգամ Հայաստանի եւ Սփիւռքի միջեւ: Խօսքս կը վերաբերի հայերէնով եւ հայկական տառերով համակարգչային հաղորդակցութեան, որ այնպիսի դժուարութիւն կը ստեղծէ, որ փափաքողները յուսահատելով, ի վերջոյ կ'օգտագործեն լատինական տառերը: Իսկ համացանցէն օգտուիլն ալ նոյնպէս գրեթէ անկարելի է: Եւ պատճառը երկու ուղղագրութիւններու անհամատեղելիութիւնն է եղեր...: **Ահա թէ ինչպիսի «հաղորդակցութեան» մը եւ «միմիեանց աւելի լաւ ճանաչելու» ինչ հրաշալի կացութեան մը հասած ենք** ...: Եւ դեռ պնդողներ կան, թէ «**ներկայ պահը անյարմար է**», «**ուղղագրութեան հարցը առաջնահերթութիւն մը չէ**»:

Ուղղագրութեան հարցի լուծման համար ներկայ պահը «անյարմար» նկատողները արդեօք ի՞նչ կ'ընեն որպէսզի «յարմար պահը» գայ: Չեմ կարծեր որ յուսալիութիւն բաշխելով եւ Սփիւռքահայերուս դասալքութեան հրաւէր կարդալով կրնան բարելաւել Հայաստանի տնտեսական վիճակը: Տկարացողը իրաւունք չունի ուրիշներուն ալ տկարանալու կոչ ընելու :

Եւ արդէն, մենք Սփիւռքահայերս տկարանալու, յուսահատելու եւ դասալիք դառնալու ա՛յլ կարելիութիւն մը ունինք, ցեղասպանութեան հարցին կապակցութեամբ: Սակայն մեր մէջէն ո՛չ ոք ըսաւ «Հիմա ատենը չէ պահանջատիրութեան, ցեղասպանութեան հարցին ճանաչումը առաջնահերթութիւն մը չէ»: Այլ մօտ 90 տարի օտարութեան մէջ ապրողներ, տոկացին ամէն տեսակ դժուարութիւններու, օտար երկիրներու տակ թէ՛ ազգութիւն, լեզու եւ ուղղագրութիւն պահեցին, թէ՛ պահանջատիրութիւն ցուցաբերեցին եւ թէ Հայաստանի փրկութեան հասան՝ 1988ի երկրաշարժէն յետոյ: Եղան օտար թելադրողներ, որ մոռնան պատմական դէպքերը եւ կը բարելաւուի Հայաստանի տնտեսական վիճակը: Կարելի՞ էր անսալ այդ թելադրութիւններուն:

Տես էջ 5

Կինոսաղմոսի

Քեթի Բերբերյան. այս անունը մեզանում ինչ-որ բան ասում է միայն երաժիշտների սեղմ շրջանակին: Ավելի քան 20 տարի առաջ վախճանված այդ հայազգի երգչուհին, որ բնակվել է ԱՄՆ-ում եւ Իտալիայում, 20-րդ դարի ավանգարդ երգեցողության ամենանշանավոր դեմքն էր, եթե ոչ՝ ամենանշանավորը: Նրան անվանել են «ավանգարդ երգի Կալաս», «մոգական Քեթի», հատուկ նրա ձայնի համար կոմպոզիտորները գրել են ստեղծագործություններ, նրա անվան շուրջ լեգենդներ են հյուսվել...

Քեթի Բերբերյանը (1925-1983) ծնվել է ԱՄՆ-ի Մասաչուսետս նահանգի Աբլբորո քաղաքում, Երվանդ Բերբերյանի եւ Լուիզ Սադբեզի (նույնպես հայ) ընտանիքում: Մանկուց լսել է Շալյապինի, Սկիպայի ձայնապնակները՝ ձայնակցելով նրանց: Երբ ընտանիքը տեղափոխվել է Նյու Յորք, Քեթին հաճախել է դաշնամուրի, վոկալի եւ հայկական պարերի դասերի: Արա ուսումը շարունակել է Միլանում եւ Փարիզում: Երգչուհին առաջին անգամ բեմ է բարձրացել 1957-ին, Նեապոլում: Մեծ ձայնածավալի տեր Քեթի Բերբերյանը (կոնտրալտոյից կոլորատուրային սոպրանո) խորացել է իմիտացիոն արվեստի մեջ՝ երգերում տեղ հատկացնելով ամենատարբեր ձայների: Հավասար հաջողությամբ կատարել է դասական եւ օպերային, աշխարհի տարբեր ժողովուրդների երգեր, ջազ եւ մինչեւ անգամ՝ ռոք երգեր: Լինելով ջերմ հայրենասեր՝ Բերբերյանը մշտապես իր համերգներում տեղ է տվել հայ երգին: Նա ունեցել է ձայնամարզության սեփական սուդիա, զբաղվել մանկավարժությամբ, գրել երաժշտական գործեր: 1983 թվականին Բերբերյանի խմբագրությամբ լույս է տեսել կին երգահաններին նվիրված հատորը, որտեղ որպես առաջին կին երաժշտաստեղծ, որի ստեղծագործությունը մեզ է հասել, ներկայացվել է 8-րդ դարի հայ բանաստեղծուհի-երաժիշտ Սահակդուխտ Սյունեցին...

Միայն ձայնագրություններից լսած լինելով եմ սիրահարվել էի «մոգական Քեթիի» ձայնին... Եվ ահա, աշխարհի հայազգի կինոգործիչների մասին նյութեր հավաքելիս անակնկալ կերպով իմացա, որ Քեթի Բերբերյանի դուստրը՝ Լուիզա Քրիստինա Բերիոն, բեմադրիչ եւ արտադրիչ է, որ բնակվում է Քալիֆորնիայում: Նրան գտնելու առիթը եղավ հոր՝ իտալացի նշանավոր կոմպոզիտոր Լուչանո Բերիոյի մահը՝ 2002 թվականին: Ինձ համար մեծ ուրախություն էր նամակագրություն հաստատել Քրիստինա Բերիոյի՝ իմ սիրելի երգչուհու դստեր հետ եւ զգալ նրա անկեղծ հետաքրքրությունը Հայաստանի եւ հայաշխարհի նկատմամբ: Մեր խնդրանքով՝ 2004-ի գարնանը Քրիստինա Բերիոն «Ոսկե ծիրան» կինոփառատոնին ուղարկեց 1994-ին Նիդեռլանդներում նկարահանված «Երաժշտությունն այն օդն է, որը ես շնչում եմ» փաստագրական ֆիլմը (բեմադրիչ՝ Քարի դե Սվան) Քեթի Բերբերյանի մասին, որն ընդգրկում է բազմաթիվ կադրեր երգչուհու կատարումներից...

Անցած տարի, մայիսին մեկնելով Կալիֆորնիա՝ անձամբ հանդիպեցի «մոգական Քեթիի» դստերը: Եվ «փոքրիկ Հայաստան» Գլենդելում կայացավ հիշարժան հանդիպումը Քրիստինա Բերիոյի՝ երկարավարս, մոր պես խոշոր, արտահայտիչ աչքերով, պարզ եւ անմիջական, իր տարիքից բավական երիտասարդ երեւացող այդ կես իտալուհու-կես հայուհու հետ, որ ոչ մի կերպ չես հավատում, թե արդեն տատիկ է դարձել: Քրիստինայի անմիջականությունը նկատվեց առաջին իսկ վայրկյանին, երբ նա, տեսնելով իմ հագի բրազիլական դրոշով շապիկը՝ ողջույնից հետո անմիջապես ասաց. «Դու սա իմ պատվի՞ն ես հագել... ես երկար տարիներ Բրազիլիայում եմ ապրել»: Նա եկել էր իր երկրորդ ամուսնու՝ մեխիկական ծագումով Մարկոյի հետ, որը, պարզվեց, նույնպես երգիչ է...

Մեր զրույցն իտալական սրճարանում ընթանում էր «Ոսկե ծիրանի», Քրիստինայի կինոաշխատանքների, հայ ժողովրդի եւ իհարկե՝ Քեթի Բերբերյանի շուրջ:

- Դատելով քո ծնողների մասնագիտությունից եւ այն մարդկանցից, որոնցով շրջապատված է եղել Բերիո-Բերբերյան ընտանիքը, դու պիտի որ բավական հետաքրքրական մանկություն ունեցած լինես, Քրիստինա:

- Օ, այո: Ես ծնվել եւ մեծացել եմ Միլանում, բայց ծնողներիս աշխատանքի բերումով բազմիցս ճանապարհորդել եմ: Մանկության տարիներին մեր հարկի ներքո բազմիցս հյուրընկալվել են եվրոպական եւ ամերիկյան արվեստի ամենանշանակարահանումների տեղակալման ղեկավար եւ երաժշտական պրոդյուսեր:

- Քո անունն ինձ հանդիպել է «Վայրի խոլորձ» նշանավոր ֆիլմի մակագրերում՝ որպես երաժշտական կոորդինատոր:

Քեթի Բերբերյանը դստեր՝ Քրիստինայի հետ

ԱՐԾՎԻ ԲԱԽՉԻՆՅԱՆ

Քրիստինա Բերիո.

«Մի քիչ իմ մասին եւ գրեթե ամեն ինչ իմ մոր մասին»

Հարցազրույց աշխարհահռչակ երգչուհի Քեթի Բերբերյանի դստեր՝ ամերիկյան կինոպրոդյուսեր Քրիստինա Բերիոյի հետ

վոր դեմքը... Կյանքի վերջին տարիներին մայրիկին սիրով է շրջապատել մեծանուն Իգոր Ստրավինսկին, որը Բերբերյանի համար է գրել «Եղերերգ ի հիշատակ Ջոն Քենեդիի» վոկալ նաեւ Բուզոտտիի «Կնոջ ձայնը» եւ «Տորմոն», Ջոն Քեյջի «Արիսը» եւ այլ վոկալ ստեղծագործություններ...

- Մեր ժամանակների նշանավոր գրող Ումբերտո Էկոն մայրիկիդ հետ միասին չորս գիրք է թարգմանել անգլերենից իտալերեն... հիշել է Քեթի Բերբերյանին իր հռչակավոր «Վարդի անունը» վեպի հավելվածում...

- Երբ ես երեխա էի, Էկոն մեր ընտանիքի ամենամտիկ եւ ամենասիրելի ընկերներից մեկն էր... փայլուն անձնավորություն... եւ մայրիկի հետ նրա համագործակցությունը սքանչելի արդյունք տվեց...

Դե իհարկե, մեծն Քեթին՝ Քեթի Բերբերյանը, մայրենի հայերենից բացի հիանալի տիրապետել է նաեւ իտալերեն, անգլերեն, եւ ֆրանսերեն լեզուներին: Ի դեպ, նրա դուստրը եւս սահուն խոսում է մի քանի լեզվով (ինչը բնորոշ չէ ամերիկացիներին) եւ երեք պետության քաղաքացի է՝ ԱՄՆ, Իտալիա եւ Բրազիլիա...

- Դժբախտաբար հայերեն գրքեր չգիտեմ, մեղավոր հայացքով խոստովանեց Քրիստինան: Սակայն երբ նրան ցույց տվեցի իմ կես տարեկան որդու լուսանկարը, նրա բացականչությունը հայերեն էր՝ «անուշիկ»...

- Իսկ ահա եւ իմ մեկ տարեկան թոռնիկը, պայուսակից մի լուսանկար հանելով՝ հպարտորեն ասաց երիտասարդ տատիկը: Նա բնակվում է Բրազիլիայում, ջունգլիներում գտնվող մի բնակավայրում:

- Սա էլ տիպիկ բեթիբերբերյանական է, ասում եմ ես, նրա ծոցը պիտի որ բրազիլական ջունգլիներում ապրեր... Իսկ ինչո՞ւ հենց լատինամերիկյան ադ երկիրը:

- Բրազիլիայի հետ իմ կապը տարիների վաղեմություն ունի: Ես 17 տարեկան էի, երբ Իտալիայից մեկնեցի Բրազիլիա: Այդ ժամանակ իմ վոկալ տվյալները վատ չէին, եւ ես երգել եւ նվագել եմ տարբեր խմբերում: Սակայն 1981-ից սկսեցի վավերագրական ֆիլմեր նկարահանել: Բրազիլիայում 1985-ից 1991-ը եղել է մեծ թվով խաղարկային կինոնկարների, հեռուստատեսային գովազդների եւ երաժշտական տեսաֆիլմերի արտադրիչը՝ նկարահանված ԱՄՆ-ի, Հարավային Ամերիկայի, Եվրոպայի եւ Ճապոնիայի համար: Աշխատել եմ նաեւ որպես դերաբաշխման պատասխանատու,

Քրիստինա Բերիո

Քեթի Բերբերյան

- Դա արդեն Ամերիկայում հաստատվելուց հետո էր: 1992-ին երեք զավակներիս հետ տեղափոխվեցի Լոս Անջելես եւ շարունակեցի աշխատանքս կինոյում: Եղել եմ «Պատերազմ թմրեցուցիչների դեմ», «Տխուր ծաղիկն ավազի մեջ», «Ցավագին ծովային ճամփորդություն» եւ այլ վավերագրական ֆիլմերի պրոդյուսեր: Տաս տարուց ավելի է աշխատում եմ նաեւ հոլանդական VPRO հեռուստակայանի համար, որ բազմաթիվ ֆիլմեր է կրկնօրինակել իտալերեն եւ պորտուգալերեն...

- Փաստորեն դու մասնակցություն ես ունեցել «Երաժշտությունն այն օդն է, որ շնչում եմ» ֆիլմին ոչ միայն որպես «դերակատար»...

Կինոնկարի սկզբում Արարատ լեռն է եւ «Լուսինն էլավ» հայկական երգը՝ Լուչանո Բերիոյի մշակմամբ, որն, ի դեպ, մեծ տարածում է գտել՝ ընդգրկվելով բազմաթիվ երգչուհիների երկացանկում՝ ԱՄՆ-ից մինչեւ Ճապոնիա...

- Սակայն այդ ֆիլմի ավարտին մեզ մեծ ցնցում էր սպասվում, երբ Քեթի Բերբերյանի շուրթերից հնչեց... ադրբեջանական սիրային երգ: Անձամբ ես դեռ ուշի չէի եկել երկու ամիս առաջ Բուդապեշտում հայ սպայի հետ կատարված խստմնելի ողբերգության մղձավանջից (որն իմ ընկերներից մեկի մտերիմ ընկերն էր)... եւ ահա իմ սիրելի երգչուհին շաս «էշխով» կատարում է այդ բարբարոսների լեզվով ռուսերենախառն մի երգ: Բայց մեկ ամիս անց, երբ ձեռք բերեցի Բերբերյանի սիդին՝ զարմանքով հայտնաբերեցի, որ նորից եւ նորից ցանկանում եմ լսել հենց այդ ադրբեջանական երգը: Երգն այնքան լավ է մշակված (Լուչանո Բերիոյի կողմից) եւ կատարումն այնքան հաջող է, որ մարդ մոռանում է, թե ում է պատկանում այն... Եվ երետույթն ինքնին հատկանշական է. ադրբեջանական երգն աշխարհի բեմերում հնչել է հայուհու շնորհիվ...

- Մայրիկը երգեր էր կատարում աշխարհի քսան լեզուներով, սանսկրիտ, չինարեն... եւ ադրբեջաներենն էլ այդ լեզուներից մեկն էր...

- Եվ այն ժամանակ հայերի եւ ազերիների միջեւ այս հակամարտությունն էլ չկար...

- Մայրիկը ողջ կյանքում անում էր՝ ինչ որ ցանկանում էր: Քննադատում էր շատերին՝ առանց հեղինակություն ճանաչելու: Հիշո՞ւմ ես, ֆիլմում նա Մոնսերատ Կաբալյեի եւ նրա դպրոցի ներկայացուցիչների երգելաձեւը համեմատում է կովի բառաչի հետ: Խիստ է ասված, բայց այդպես էր. մայրիկը շատ կտրուկ մարդ էր: Եվ շատերն էին նրան բամբասում, թե իբր դժվար է հետն աշխատել, որ իբր նա պրոֆեսիոնալ չէ... Իսկ մայրիկի հոգը չէր: Նա երկու բան էր ամենից շատ սիրում աշխարհում՝ երգել եւ ուտել: Կյանքի վերջում, Միլանի իր բնակարանում փակված՝ նա համեղ ճաշատեսակներ էր պատրաստում եւ բնավ հոգ չէր տանում առողջությունը... Այդ պատճառով էլ շուտ մահացավ, 58 տարեկանում...

- Գիտեմ, որ իր մահվան տարում Քեթի Բերբերյանը նկարահանվել է ֆրանսիական մի ֆիլմում, դայակի դերում... Նրա հերոսուհին երգով ննջեցրել է մի երեխայի, առա ինքը մահացել է... Եվ այդ ֆիլմի նկարահանումներից հետո, որոշ ժամանակ անց, նա հեռացել է կյանքից...

Քրիստինան լռվում է.

- Այդ որտեղի՞ց գիտես...

Նա գիտեր, որ մահից առաջ մայրը խաղացել է մի կինոնկարում, սակայն նրան անհայտ էին ֆիլմի ռեժիսորը եւ վերնագիրը: Ես պատմում եմ նրան, ինչ որ ինձ հայտնի է ֆրանսիացի հանրահայտ կինոբեմադրիչ Ալեն Ռենեի «Կյանքը վարդերով լի անկողին է» (կամ «Կյանքը մի վեպ է») կատակերգության մասին, որտեղ Քեթի Բերբերյանից բացի նկարահանվել է կինոաստղերի մի ողջ համաստեղություն: Սակայն երգչուհին չի դիտել այս շարժանկարը, նրա անունը ֆիլմում տեղ է գտել սեւ շրջանակի մեջ... Քրիստինան անմիջապես գրի է առնում կինոնկարի տվյալները՝ այն շուտափույթ գտնելու մտադրությամբ:

- Այդ նույն՝ 1983 թվականին Ֆեդերիկո Ֆելլինին նկարահանել է «Եվ նավը գնում է» ֆիլմը, որի հերոսները մի հանգուցյալ երգչուհու աճյունը նավով տանում, հանձնում են ծովի ալիքներին... Ես գիտեմ, որ Քեթի Բերբերյանի աճյունը Իտալիայից տեղափոխվել է նրա ծննդավայրը՝ Միացյալ Նահանգներ... չե՞ս կարծում, թե Ֆելլինին կարող էր այս իրողությունից ներշնչված լինել...

Քրիստինան հառաչում է.

- Այո, ես ինքս իմ ձեռքերով տարա մայրիկի աճյունը... շատ երիտասարդ էի այն ժամանակ, եւ ինձ համար դա ծանր փորձառություն էր: Բայց ոչ, որքան էլ գեղեցիկ է թվում, Ֆելլինիի այդ ֆիլմը ոչ մի կապ չունի մայրիկի հետ...

- Վերջին տարիներին Քեթի Բերբերյանի անձի եւ ստեղծագործության հանդեպ հետաքրքրությունը մեծացել է ամբողջ աշխարհում,- պատմում է Քրիստինան:- Թողարկվում են լազերային սկավառակներ, անցյալ տարի հրատարակվեց մի ծավալուն ֆրանսերեն աշխատություն՝ «Քեթի Բերբերյան, երգչուհի» վերնագրով, հեղինակ՝ Մարի-Քրիստին Վիլա: Շվեյցարիայում գտնվող Արդիապատ երաժշտության կենտրոնը հետաքրքրված է նրա արխիվով, որ ինձ մոտ է: Չափազանց հետաքրքրական արխիվ է թողել մայրիկը՝ նամակներ, բեմական հագուստներ...

- Ինչ ափսոս է, որ նա այդպես էլ չի եղել Հայաստանում,- ասում եմ ես:- Հիշում եմ նրա խոստովանությունը. «Հոգով միշտ զգում եմ հայուհի լինելս, քանզի իմ երակներում հայի տաք արյուն է հոսում: Երազում եմ համերգներով հանդես գալ Երեւանում»: Խորհրդային տարիներին որոշ հայ մտավորականներ ջանքեր են գործադրել, որ նա համերգներ տա Երեւանում, ինչը, ցավոք, այդպես էլ չի կայացել...

- Սակայն ո՞րն է պատճառը, որ նրա հայաստանյան հյուրախաղերը այդպես էլ չկայացան:

- Ավանգարդ երգեցողությունն այնքան անհարիր էր խորհրդային մտածողությանը: Խորհրդային Հայաստանում գուցեեւ էլ ընկալելի ավանգարդ արվեստը եւ հայ ժողովրդական երգերի Բերբերյանի ոչ ավանդական մեկնաբանությունները, սակայն նրա ելույթները, անշուշտ, մեծ իրադարձություն կլինեին թե՛ երգչուհու եւ թե՛ հայրենիքի համար...

Խորհրդային ղեկավարները չէին կարող հանդուրժել Քեթի Բերբերյանի հաճախ էքսցենտրիկ իմիջը՝ բուլավկա ականջօղեր, պլաստմասսայե վզքաս, երբեմն ոսաբոբիկ... Սակայն վերջերս Բերբերյանի անունն առավել, քան երբեւէ, սկսել է հնչել նաեւ Հայաստանում: Երեւանի կոնսերվատորիայում գործում է «Քեթի Բերբերյանի կրթաթոշակը», որ հատկացել է Գերմանիայում բնակվող գործարար եւ թարգմանիչ Թադեւոս Յորգանցյանը...

- Ես միշտ հետաքրքրվել եմ հայերով,- ժպտում է Քրիստինան:- Այստեղ՝ Կալիֆորնիայում, ամեն քայլափոխի շփվում եմ հայերի հետ, ունեմ բազմաթիվ ծանոթներ, հաճախ գնում եմ հայկական հավաքների: Իմ ամենամտերիմ բարեկամներից է սփյուռքում այնքան սիրված տաղանդավոր արձակագիր, դերասան եւ նկարիչ Վահե Բերբերյանը: Մարդիկ կարծում են, թե մենք ազգականներ ենք՝ ելնելով Բերբերյան ազգանունից... Ես որոշ չափով հետեւում եմ նաեւ Հայաստանում կատարվող իրադարձություններին: Վերջերս այդ ինչ ամոթալի դեպք էր կատարվել Երեւանում՝ երիտասարդ ամերիկացի գեյ դասախոսի սպանությունը... Կարծում եմ, որ հոմոֆոբիան չարիք է եւ պետք է վերջ տրվի այդ երեւույթին...

2005 թվականի հուլիսին լրանում է Քեթի Բերբերյանի ծննդյան 80-ամյակը: Մենք Քրիստինա Բերիոյի հետ բաժանվեցինք այն հույսով, որ հաջորդ տարի նա հնարավորություն կունենա այցելել մոր նախնիների հայրենիքը եւ երաժշտասերների ու կինոսիրողների միջավայրում առիթներ կստեղծվեն ներկայացնելու ամեն ինչ իր մոր՝ «մոգական Քեթիի» մասին...

Լոս Անջելես-Երեւան

ԱՐԻՍԻՐԱՏԻՊԱ

ՄԻ ԷՋ ՄԵՐ ՀՈՒՇԱՄԱՏՅԱՆԻՑ

1915 թվականի աորիլը նոր էր սկսվում: Վանի հայությունը զգում էր մոտեցող վտանգի ուժը: Պետք էր բռունցքվել ինքնապաշտպանության համար եւ ընտրել ղեկավարող, առաջնորդող ուժ: Դա դարձավ Վանի Հայ ինքնապաշտպանության Զինվորական մարմինը, որի նախագահ նշանակվեց արդեն ռազմական փորձ ունեցող Արմենակ Եկարյանը: Բոլոր կուսակցությունները թողեցին իրենց տարաձայնությունները. միասնություն էր պետք: Ստեղծվեցին պարենավորման, զինաբախ, հայթայթիչ, կարմիր խաչի, տեղեկատու եւ այլ մարմիններ: Նախապատրաստական խորհրդակցությունից հետո քաղաքի ինքնապաշտպանության գլուխն անցած Արմենակ Եկարյանը դիմեց ժողովրդին կոչով, որից հիշենք մի հատված. «Վան առաջին անգամ չէ, որ ցույց պիտի տա իր համբերախ ոգին, երբ գործ ունի ընդհանուր թշնամիին հետ: Այդ ոգին իր փառավոր անցյալն ունի: Այս անգամ ալ պիտի տանինք այս կռիվը միեւնույն համբերախ ոգով, առանց կուսակցական խտրության: Մեր ուզելով չէ, որ պիտի կռվինք, այլ ստիպողաբար: Երկու ճամփա ունինք. կամ գլուխ ծռել բռնավորին առջեւ եւ բնաջնջվել անպատիվ մահով եւ կամ անվեհեր ու բաց ճակատ դուրս գալ անոր առջեւ եւ նախընտրել մեր նախնիներուն պատվավոր ճամփան»:

Վանի հայությունը ընտրեց վերջինը եւ դուրս ելավ կռվի: 27 օր տեւած անձնազոհ պայքարը լի էր հերոսական քաջագործություններով եւ բացառիկ կազմակերպված պաշտպանական եւ հարձակողական գործողություններով: Այն արձանագրվեց մեր պատմության էջերում որպես հերոսամարտ՝ արդար եւ արժանավայել: Ահա այդ օրերի հետ կապված ամենանշանավոր անձի՝ Արմենակ Եկարյանի գրչից պոկված մի նամակ ենք ուզում ներկայացնել ընթերցողին՝ որպես վերհուշ մեր մեծ հիշատակի՝ Եղեռնի օրերից: Այն գրված է վերը հիշված կռիվներից մի քանի ամիս անց եւ հաստատված նույն ժամանակ հասարակական ակտիվ գործունեությամբ աչքի ընկած բժշկապետ, նվիրյալ հայրենասեր թիֆլիսաբնակ Բագրատ Նավասարդյանին: Վերջինս եղել է հիմնադիրն ու նախագահը Կովկասի Հայոց բարեգործական ընկերության (1881-1900): Նամակը պահպանվել է նրա արխիվում եւ այսօր լրացնում է Երեւանի Գրականության եւ արվեստի թանգարանի ձեռագրային գանձարանը՝ Բագրատ Նավասարդյանի ֆոնդ N 62/II-ի տակ:

Հասցեատերը նամակի վերջում թողել է ծանոթագրություն Ար. Եկարյանի մասին. «Վանի կռվի մէջ սա եղել է պաշտպանութեան նախաձեռնողը եւ գլուխը, թէեւ դաշնակցականները այդ դերը տալիս են Արամ (կարծեմ) փաշայ անուանուածին. եւ սա էր մեր միլիցիայի պետը»:

ՄԵԼԱՆՅԱ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

Երեւանի Եղիշե Չարենցի անվան Գրականության եւ արվեստի թանգարանի գիտաշխատող



Վսեմաշուք Բժշկապետ տոմ. Նավասարդեան

Թիֆլիս

Ազնիւ բարեկա՛մս

Երբեմ չեմ մոռցած եւ չեմ կրնար մոռնալ վերջին այն խաղը եւ ներշնչող տպաւորութիւնները, որ զիս կրծիդ վրայ սեղմելով, արցունքոտ աչքերով կաթոգին մօր մը նման կարծես ըսել կուզէիր թէ. Զաւա՛կս, գնայ սգաւոր եւ աւերակ հայրենիդ մեզի կսպասէ: Այս պատգամը առած ճամբայ ինկայ ես իմ բոլոր ընկերներովս, որոնք նոյն կոչումը կզգային իրենց սրտերուն մէջ եւ ուրախ եմ ըսելու, որ բոլորս ալ առողջ եւ ապահով տեղերնիս հասած ենք: Բայց ցաւ ի սիրտ կը յայտնեմ թէ հայրենի երկրի շէն ու փարթամ քաղաքն եւ գիւղերը բոլորովին ամայի եւ աւերակ վիճակի մէջ կը գտնուին: Երկիրը այնքան կողոպտուած, այնքան աւարի մատնուած է, որ այժմ ամբողջ քաղաքի եւ գիւղերու մէջ **հաւ** մը, **ախաղաղ** մը չի գտնուիր: Միլիոնատոր ընտանի անասուն ունեցող գիւղերը այժմ ոչ մէկ բան չունեն: Վասպուրականի մէջ գտնուած բոլոր մենաստանները, վանքերն ու եկեղեցիները, գիւղերն ու քաղաքը **ճիշ արտրու նման հերկուած** եւ քանդուած են: Ահա Կովկասէն վերին ասիճանի յուսահատութեան արդիւնք ըլլալով հայրենիք վերադարձող ժողովուրդը կարի հողին հաւասար եղած գիւղերու եւ քաղաքին մէջ: Ռուսական պետութեան ցուցուցած մեր անսահման համակրանքին եւ զոհաբերութեան հակառակ, սիրտոտած եմ ըսել թէ երկրի աւերումի գործին մէջ խազախներու դերը մեր դարատոր թշնամիներու դերէն պակաս չէ եղած: Անոնք մինչեւ իսկ չեն քաշուիր թոյլ կուտան ինքզինքին ծերունի հայ կիներ իսկ բռնաբարելու: Մէկ խօսքով ոտքերուն հետ թոտերէն իսկ գէշ կը վարուին զուլումի եւ դժբախտութեան ենթարկուած հայ ժողովուրդին հետ: Երկրիս տնտեսական դրութիւնը խիստ յուսահատական է: Ժողովուրդին համար ապրուստի ամէն միջոց կը պակսի: Այս բոլորին համար չենք յուսահատիր մենք: **Չենք յուսահատիր անոր համար, որ վստահ ենք թէ Ձեզի եւ ձեր շրջապատի նման հայրենասիրական բարձր գաղափարներով ներշնչուած, զարգացեալ եւ գիտակից հայեր ունենք:** Մենք հաւատացած ենք եւ կը սիրենք հաւատալ, որ տաճկահայուն կրած տառապանքը Դուք Ձեր սրտերուն մէջ կզգաք: **Մենք համոզում ունինք, թէ մեր սանձնած նուիրական այս գործին մէջ Դուք եւս ունեցեր էք եւ պիտի ունենաք Ձեր որոշ դերն ու ազդեցութիւնը եւ հայրենի երկրի ի մի բան բազմաչարչար եւ նահատակ հայու վերածնութեան գործին մէջ Ձեր բաժինը:**

Ազնիւ բարեկա՛մ, մեր ցեղի ամբողջ պատմութիւնը արիւնով է գրուած: Հայ ազգը ասանկ շատ օրեր է տեսած եւ սակայն չի մեռած, չի մեռնիր եւ պիտի չմեռնի ալ. քանի որ միշտ էլ ունեցեր է, ունի եւ պիտի ունենայ իր ծոցին մէջ սնած ու հայրենասիրական ամենասուրբ իդեալով ներշնչուած զաւակներ:

Օր պիտի գա, դարձեալ նորէն, երբ Հայաստանի ջինջ ու պայծառ երկնակամարը ծածկող, մթագնող սեւ ու թխպոտ ամպերը պիտի քաշուին, փարատուին: Այն ատեն քաղաքական այս անորոշ դրութեան մէջէն պիտի փայլի պայծառ արեւը. կեանք եւ շունչ տալու թշուառ հայուն, անտէր հայուն: Ուրեմն այս յոյսով եւ ակնկալութիւնով, ազնիւ բարեկա՛մս, Դուք Ձեր տեղին մէջ եւ մենք ալ աւերակ այս երկրին վրայ ձեռք ձեռքի տուած ապրինք ու գործենք միասին, վստահ ըլլալով, թէ **մօտաւոր ապագան** պիտի պսակէ մեր ջանքերն ու յոյսերը:

Մնամ յարգանքներով

ԱՐՄԵՆԱԿ ԵԿԱՐԵԱՆ

1915, նոյ. 12, Վան

ԴԱՍԱԼՔՈՒԹԵԱՆ ՅՈՐԴՈՐ...

Սկիզբը՝ էջ 2

Բաց ասենք, ուղղագրութեան հարցի լուծումը միթէ՞ այդքան դժուար է, միթէ՞ միլիոնատոր տոլարներու կարիք կայ ուղղագրական քանի մը օրէնք փոխելու համար: Ի՞նչ է հարցը .- Հայաստանցի լեզուաբանները չեն ուզեր որեւէ փոփոխութիւն, այլ կ'ուզեն հաւատարիմ մնալ 1922ի եւ1940ի Սովետական հրամանագրերուն: Իսկ Մեսրոպեան ուղղագրութեան վերականգնումը պահանջողները կ'ուզեն 1922ի դեկտեմբերի «ջնջումը» : Ասիկա ըսելու ձեւ մըն է: Որովհետեւ Մեսրոպեան ուղղագրութիւնը արգիլեալ հռչակող եւ «Նոր ուղղագրութիւն»ը Հայաստանցի ժողովուրդին պարտադրող **1922ի հրամանագիրը իրականութեան մէջ ջնջուած է արդէն եւ փոխարինուած է 1993ին ընդունուած Հայաստանի նոր Սահմանադրութեան «ԼԵԶՈՒԻ ՄԱՍԻՆ ՕՐԷՆՔ» ով, որ կը պատգամէ «ուղղագրութիւններու միասնականացումը»**: Կը նշանակէ որ Հայաստանցի լեզուաբանները եւ իրենց համախոհները 1993էն ի վեր օրէնքի առջեւ հակասահմանադրական դիրքի մէջ կը գտնուին, քանի որ չեն ուզեր միասնականացում: Արդ, քանի որ մեր ժողովուրդը վարժ չէ դեռ ժողովրդավարական ձեւերու եւ չի գիտեր թէ նոր ընդունուած օրէնք մը կը ջնջէ հին օրէնքը, **անհրաժեշտ է որ Իշխանութիւնները պաշտօնապէս յիշեցնեն, թէ 1922ի հրամանագիրը իր ուժը կորսնցուցած է, ի զօրու չէ այլեւս, այլ 1993ի ՀՀ Լեզուի մասին օրէնքն է որ ի զօրու է ներկայիս:** Այս յիշեցումը բաւական է՝ ի կարգ հրաւիրելու համար օրէնքին անսասող լեզուաբանները: Այս յիշեցումը չի նշանակեր անշուշտ, որ Մեսրոպեան ուղղագրութիւնը անմիջապէս, մէկ օրէն միւսը վերականգնուած է եւ բոլոր պաշտօնական գրագրութիւնները, Մամուլը, դպրոցներու մէջ դասաւանդութիւնները, փողոցներու ցուցապատակները Մեսրոպեան ուղղագրութեամբ պիտի փոխարինուին: Բնաւ երբէք: **Այլ, կը նշանակէ թէ Պետութեան կամքը միասնականացումն է եւ ազգովին դէպի միասնականացում պիտի դիմենք յետագայ տարիներուն : Թելադրութիւն մըն է, որպէսզի Մեսրոպեան ուղղագրութիւնը դադրի «արգիլեալ» ըլլալէ եւ բոլորը մտածեն երկու ուղղագրութիւնները միասնականացնելու ձեւերուն մասին: Թելադրութիւն մըն է նաեւ, որպէսզի Մամուլը անվախօրէն ընթացք տայ պարբերաբար Մեսրոպեան ուղղագրութեամբ գրութիւններու հրատարակութեան:** Այսքան... Յետագային, Սփիւռքահայութեան հետ խորհրդաժողով գումարելով կ'որոշուին միասնականացման կարելիութիւնները, ձեւերը, կ'որոշուին նաեւ անցումային ժամանակաշրջանի տեւողութիւնը, ընելիքներու հերթականութիւնը, եւն.:

Եւ պահը շատ յարմար է նման յիշեցումի մը համար, քանի որ մօտերս Գրերու Գիւտի 1600ամեակը պիտի տօնուի: **Այսպիսի պաշտօնական յիշեցում մը մարդոց կը զգացնէ թէ կարելի չէ Մեսրոպեան Գրերու Գիւտը փառաբանել, երբ գիւտարարին անունն անգամ արգիլուած է յիշել իր ստեղծած տառերու եւ ուղղագրութեան կապակցութեամբ ու մարդիկ սիրտոտած կ'օգտագործեն «հին», «դասական», «աւանդական», «գրաբարի», «արեւմտահայերէնի» ուղղագրութիւն բացատրութիւնները, չընելու համար «Մեսրոպեան ուղղագրութիւն»**: 1600ամեակի առթիւ այսպիսի յիշեցում մը իր դերը կը կատարէ մարդոց ուղեղներէն ներս եւ կը փրկէ պատիւը Հայաստանի Իշխանութիւններուն ու ամբողջ ազգին: Եւ չի կարօտիր տնտեսական բարգաւաճ պայմաններու, մեծ գումարներու:

Ինչ կը վերաբերի ինձի ուղղուած «Նամակ»ի վերջին պարբերութեան, Բախչինեան կը գրէ.- «Թող որ գոյատեւի այս դժուարին ազգը՝ իր երկու ուղղագրութեամբ: **...Ես շարունակելու եմ իմ սփիւռքահայ ընկերներին գրել եւ սփիւռքահայ մամուլին աշխատակցել դասականով, եւ ոչ ոք չի կարող ինձ զրկել իմ այդ իրաւունքից: ... Ի վերջոյ, ամէն ոք ազատ է ինքն ընտրելու, թէ ո՛ր ուղղագրութեամբ գրի եւ չդատի դիմացինին»**:

Սիրելի բարեկամ Բախչինեան, համբուրելի մօտեցում մըն է աս, երանի թէ իրականութիւն ըլլար եւ ամէն ոք գրէր իր սիրած ուղղագրութեամբ: Բայց արդեօք լուանի մէջ կ'ապրիք, չգիտնալու համար թէ Հայաստանի մէջ նման ազատութիւն չկայ ուղղագրութեան նիւթին կապակցութեամբ: «Ազգ» օրաթերթի վերոյիշեալ նախաբանը կը փաստէ այս իրականութիւնը: Հարց կու տամ.- Արդեօք միայն Արծուի Բախչինեա՞նը իրաւունք ունի գրելու իր ցանկացած ուղղագրութեամբ եւ ցանկացած թերթին՝ հայերէնի ուղղագրութեան մասին յօդուածներ: **Ինչո՞ւ մենք, Մեսրոպեան ուղղագրութեան Սփիւռքահայ կամ Հայաստանահայ պաշտպաններս իրաւունք չունինք Հայաստանեան թերթերու մէջ գրելու եւ պարզելու մեր տեսակէտները հայերէնի ուղղագրութեան մասին : Այդ ի՞նչ իրաւունք է, որ վերապահուած է միայն մէկ հոգիի**: Լեւոն Միրիջանեան, Գէորգ Տէր Վարդանեան, Ջանի Միրզաբէկեան, Ռաֆայէլ Համբարձումեան եւ շատ ուրիշներ ինչո՞ւ իրենց յօդուածները սիրտոտած տպագրած են Սփիւռքահայ թերթերու մէջ: Ի փոխարէն, մէկ Սփիւռքահայու յօդուած դեռ չէ տպագրուած Հայաստանի մամուլին մէջ ա՛յս նիւթին մասին եւ Մեսրոպեա՛ն ուղղագրութեամբ: Այնքէս որ **«դասական ուղղագրութեան ազատ կիրառումը Հայաստանում»** դեռ երազ է :

Ես կը հաւատամ սակայն, որ այս հարցը ուշ կամ կանուխ անպայման պիտի գտնէ իր բարեյաջող լուծումը: Հայաստանի նոր սերունդը պիտի գիտակցի որ ապազգայնացած վիճակով կարելի չէ ազատ անկախ հայրենիք պահել, պետականութիւն կերտել: Պիտի մտակէ լեզուական ազգային քաղաքականութիւն մը եւ անոր համաձայն պիտի գործէ, փրկելով մեզ երկու գրատոր լեզու ունեցող երկու տարբեր ազգերու վերածուելէ: Այսպէս, վերադառնալով իր արմատներուն, պիտի վերագտնէ իր ազգային ինքնութիւնը եւ իր ազգային միասնութիւնը Սփիւռքի հետ: Մեր պարտականութիւնն է արագացնել գիտակցութեան այդ պահը եւ անհրաժեշտ տուեալները հայթայթել իրեն, որոնց յենուելով կարողանայ ապահովել մեր ազգի եւ լեզուի միասնութիւնն ու ապագան :

Փարիզ, 31 մարտ 2005.

Խմբագրության կողմից.- Կողքի սյունակներում հրատարակում ենք Փարիզից դոկտ. Հիլդա Գալֆայանի պատասխան հոդվածը «Ազգ»-ի 2005 թ. փետրվարի 26-ի մշակութային ներդիրում լույս տեսած՝ Արծվի Բախչինյանի «Հանդուրժենք մեր զույգ ուղղագրությունները» հոդվածին: Հրատարակում ենք նույնությամբ, այսինքն՝ առանց փոխելու ուղղագրությունը, առանց ուղղելու կետադրությունը, գլխագրերը, ուղղագրական (դասական հայերենի) եւ այլ սխալները, որպեսզի հոդվածագրի կողմից չմեղադրվենք «մեսրոպյան» ուղղագրության դեմ մեղանչելու մեջ: Այսուամենայնիվ, չենք կարող զերծ մնալ մի քանի մատնանշումներից, թեեւ բազմաթիվ են մեր առարկությունները:

Առաջին հերթին՝ մերժելով մերժում ենք հոդվածի վերնագիրը, որն անարդար լինելուց բացի վիրավորական է թե՛ մեր թերթի եւ թե՛ մեր աշխատակցի նկատմամբ: «Ազգ»-ն անցնող մեկուկես տասնամյակում ոչինչ չի խնայել սփյուռքահայ գաղթօջախների կյանքը, մշահոգությունները հանրության սեփականությունը դարձնելու համար: Նույն վերաբերմունքը կար նաեւ Ա. Բախչինյանի վերոհիշյալ հոդվածում, որի էությունն այն էր, որ, հաշվի առնելով ներկա պահի հայաստանյան դժվարությունները, հնարավոր չէ վերականգնել «մաշտոցյան» ուղղագրությունը Հայաստանում, հետեւաբար առայժմ պետք է հանդուրժել մեր զույգ ուղղագրություններն էլ, մինչեւ ավելի հարմար ժամանակներ: Հայաստանում այս պահին 10-12 հազար աշակերտ դպրոց չի հաճախում սոցիալական այլեւայլ պատճառներով: Մեզ համար առաջնահերթը հենց այս եւ նման հարցերի լուծումն է: Ուղղագրությունը փոխելով՝ նրանց դպրոց չես ուղարկի: Այս պահին սփյուռքում 3-րդ եւ 4-րդ սերունդների մեծամասնությունը հայերեն խոսել չգիտի, էլ ո՞ւր մնաց գրել: Ուղղագրությունը միասնականացնելով՝ նրանց հայախոս չես դարձնի: Այս վերջին պարագան առանձին, դժվարագույն խնդիր է, որի լուծումը հնարավոր է տալ միայն այն դեպքում, երբ ողջ հայությունն ապրի աշխարհագրական միեւնույն տարածքում՝ Հայաստանում: Եվ տիկին Գալֆայանի բերած օրինակը՝ Իսրայելի եւ եբրայերենի վերաբերյալ, միայն այս առումով է տեղին:

Մերժում ենք նաեւ հոդվածագրի հերթական՝ մյուս ամբաստանությունը, թե Հայաստանում ուղղագրության հարցը տարու է: Նրանք, ովքեր հետեւել են հայաստանյան մամուլին հատկապես 1990-96 թթ., լավ գիտեն, որ բազմաթիվ իրարամերժ հոդվածներ էին հրատարակվում դասական ուղղագրության վերաբերյալ: Հանգուցյալներ Ռաֆայել Իշխանյանը, Լեւոն Միրիջանյանը եւ ուրիշներ, նաեւ սփյուռքից, «Ազգ» օրաթերթում էին շարադրում դասական ուղղագրությանը վերադառնալու իրենց սկզբունքային հոդվածները: «Հայաստանցի լեզվաբանները», որոնց նկատմամբ այդքան կրքով եւ արհամարհանքով է արտահայտվում տկն Գալֆայանը, դժբախտաբար ոչ մի ազդեցություն չունեն մեր մամուլի վրա, եւ ուրիշ ոչ ոք, ներառյալ իշխանությունները, չեն կարող լություն պարտադրել մեզ: Պարզապես, կրկնում ենք, հարցը նույն սությունը չունի այստեղ, ինչպես տիկին Գալֆայանի պատկերացումներում:

Այսուհանդերձ, օգտակար ենք գտնում հոդվածագրի այն միտքը, թե անհրաժեշտ է հանգրվանային լուծում տալ հարցին՝ նպատակ ունենալով հետագայում իրականացնել ուղղագրության միասնականացումը: Մեր թերթը, օրինակ, հյուրընկալում է երկու ուղղագրություններով էլ գրված հոդվածները: Հայաստանում այժմ միչ չեն նաեւ դասական ուղղագրությամբ (թեեւ աղճատ եւ սխալաշատ) տրված գրքերն ու գրքույկները: Հանգրվանային լուծումներից մեկն էլ կարող է լինել ակադեմիկոս Գեւորգ Ջահուկյանի առաջարկը՝ հանրակրթական դպրոցների վերջին դասարաններում գրաբարի ուսուցում կազմակերպել, աշակերտներին վարժեցնելու համար ոչ միայն հայոց հին լեզվին, այլեւ ուղղագրությանը: Բայց ինչպե՞ս: Ունե՞նք այդքան ուսուցիչ մասնագետներ: Եկեք այս մասին մտածենք եւ... գրենք:

Ռաֆսանջանին Իրանի նախագահի պաշտոնի հիմնական հավակնորդ

Հունիսի 17-ին Իրանի Իսլամական Հանրապետությունում տեղի են ունենալու 1979 թ. հեղափոխությունից հետո նախագահական 9-րդ ընտրությունները: Այսօր ներքին գործերի նախարարությունում նախագահության թեկնածուների գրանցման վերջին օրն է:

Երեք օր առաջ, ինչպես ակնկալվում էր, Իրանի նախկին նախագահ (1989-1997 թթ.) Ալի Աքբար Հաշեմի Ռաֆսանջանին եւս հայտ ներկայացրել՝ դառնալով, ինչպես ենթադրում են միջազգային եւ իրանցի դիտորդները, նախագահի հիմնական հավակնորդը: Ռաֆսանջանին համարվում է պրագմատիկ պահպանողական, որը վճռորոշ ազդեցություն ունի պետության կարեւորագույն որոշումներում՝ սկսած տնտեսությունից, վերջացրած արտաքին քաղաքականությամբ:

Ռաֆսանջանին Իսլամական հեղափոխության հաղթանակից հետո անցած 26 տարիներին միշտ էլ զբաղեցրել է բարձրագույն պաշտոններ: Նա համարվում է Իրանի ամենաազդեցիկ եւ հարուստ (մեր բառապաշարով՝ օլիգարխ) գործիչներից: Ներկայումս նա զբաղեցնում է Նպատակահարմարության խորհրդի նախագահի պաշտոնը, որը դասավորի դեր է կատարում խորհրդարանի եւ Պահապան խորհրդի վեճերում:

Իրանի խորհրդարանը, ինչպես նաեւ նախագահի ինստիտուտը լուրջ դերակատարություն չունեն երկրի ներքին եւ արտաքին քաղաքական հարցերում: Իրականում իսլամական հանրապետության որոշումները կայացնում են բարձրաստիճան կրոնական գործիչները՝ ղեկավարությամբ երկրի կրոնապետ Ալի Խամենեիի: Ինչ վերաբերում է Պահապան խորհրդին, ապա բարձրաստիճան շիա հոգետրականներից՝ 12 հոգուց կազմված մարմին է, որը եւ որոշում է, թե նախագահական կամ խորհրդարանական ընտրություններում գրանցված թեկնածուներից ո՞ւմ է թույլատրվում մասնակցել դրանց:

Այսպես, անցած տարի տեղի ունեցած խորհրդարանական ընտրություններում Պահապան խորհուրդն ավելի քան 2000 բարեփոխական թեկնածուների թույլ չտվեց մասնակցելու ընտրություններին: Իսկ 2001 թ. մայիսին տեղի ունեցած նախորդ նախագահական ընտրություններում 814 թեկնածուներից միայն 10-ին հաջողվեց որակավորում ստանալ եւ պայքարել նախագահի աթոռի համար: Ինչպես 2001 թ., այնպես էլ 1997 թ. ընտրություններում հաղթել էր բարեփոխական եւ չափավոր կրոնականի համբավ վայելող Մոհամմադ Խաթամին:

Ըստ իրանական լրատվամիջոցների, ՆԳՆ դիմած եւ նախագահի հավակնություններ ունեցողների թիվը անցնում է 100-ից: Ռաֆսանջանիից բացի, նախագահ դառնալու ցանկություն են հայտնել նաեւ Մեյբոդ քաղաքի կոմինդի գործարանի պահակը, 18-ամյա մի աղջնակ Սպահան քաղաքից: Թեկնածուների մեջ ամենատարեցը 76-ամյա մի կղերական է:

Իրանում նախագահի թեկնածուն, ըստ սահմանադրության, պետք է լինի ազգությամբ եւ քաղաքացիությամբ իսլամական հանրապետության քաղաքացի, հարգված կրոնական եւ քաղաքական գործիչ, բանիմաց, ունենա լավ համբավ, ինչպես նաեւ հավատարիմ լինի Իսլամական հեղափոխության սկզբունքներին: Հենց Պահապան խորհուրդն է որոշում, թե թեկնածուներից ովքեր են համապատասխանում վերոնշյալ սկզբունքներին:

Վերջին տարիներին Իրանում կայացած նախագահական եւ խորհրդարանական ընտրություններում պայքարը ծավալվում է բարեփոխումների կողմնակիցների եւ պահպանողական կղերականների միջեւ: Ռաֆսանջանին միջին դիրք է գրավում երկու թեւերի միջեւ: Փորձագետների կարծիքով, բարեփոխականների թեւից նախագահության լուրջ թեկնածուներ կարող են լինել նախկին վարչապետ Միրհոսեյն Մուսավին, խորհրդարանի նախկին նախագահ Մեհդի Քյարուբին եւ կրթության նախկին նախագահ Մուստաֆա Մոինը:

Կղերականների թեւից նախագահի լուրջ հավակնորդներ են համարվում նախկին արտգործնախարար Ալի Աքբար Վելայաթին, պետական հեռուստատեսության նախկին ղեկավար Ալի Լարիջանին եւ օրենքի պաշտպան ուժերի նախկին ղեկավար Մոհամմադ Բաքր Ղալիբաֆը:

71-ամյա Ռաֆսանջանին ընտրություններին մասնակցելու իր մտադրությունը համարել է «ամենադժվար որոշումը կյանքում»: Ըստ ԻՌՆԱ գործակալության, Ռաֆսանջանին վերջնականապես որոշել է 3-րդ անգամ զբաղեցնել նախագահի աթոռը՝ կանխելու «ապակառուցողական լարվածությունը», ինչը, նրա խոսքերով, խոչընդոտում է երկրի զարգացմանը:

Ռաֆսանջանին, լինելով հեղափոխության առաջնորդ եւ իսլամական հանրապետության հիմնադիր այաթոլլա Խոմեյնու հավատարիմ հետեւորդը, 1989 թ. նախագահ դառնալուց հետո սկսեց քայլեր ձեռնարկել տնտեսության ազատականացման եւ ԱՄՆ-ի հետ հարաբերություններն ինչ-որ կերպ կարգավորելու ուղղությամբ: Արդեն քառորդ դար Վաշինգտոնը եւ Թեհրանը խզել են դիվանագիտական հարաբերությունները: Մ. Նահանգները շարունակում է Իրանի նկատմամբ պատժամիջոցները եւ իսլամական հանրապետության միջազգային մեկուսացման փորձերը: ԱՄՆ պետքարտուղարության վերջերս հրապարակած զեկույցում Իրանը Սիրիայի եւ 4 այլ երկրների հետ համարվել է միջազգային ահաբեկչությունը պետական մակարդակով հովանավորող երկիր: Թեհրանը կտրականապես մերժում է մեղադրանքները եւ ԱՄՆ-ին համարում աշխարհն ապակայունացնող գլխավոր միջազգային ուժը:

ԹԱԹՈՒԼ ՀԱԿՈԲՅԱՆ

Արմատականների ապստամբություն Ուզբեկստանի արեւելքում

1-ին էջից

Ռուսական լրատվամիջոցները հաղորդում են, որ հարձակվողների ձեռքն է անցել մեծ քանակությամբ հրազեն: Ֆերգանա գործակալության տվյալներով, հրկիզվել են բազմաթիվ ավտոմեքենաներ:

Նախագահ Իսլամ Քարիմովն Անդիջան է մեկնել քաղաքի կենտրոնում շարունակվող ցույցի մասնակիցներին հետ հանդիպելու: Ըստ որոշ տվյալների, ցուցարարների թիվը հասնում է 15 հազարի: Ապստամբները փորձում են կապ հաստատել միջազգային կազմակերպությունների հետ եւ անցկացնել մամլո ասուլիս: Նրանք պատանդ են վերցրել երեք տասնյակ զինծառայողների եւ ուզում են Ռուսաստանի միջնորդությամբ բանակցել իշխանությունների հետ:

BBC-ն հաղորդում է, որ ցուցարարներն իրենց ելույթներում պահանջում են աշխատանք, ազատություններ եւ արդարություն: Հնչում են նաեւ նախագահ Քարիմովին պաշտոնանկ անելու եւ կառավարությունն արձակելու պահանջներ: Ֆրանսիայի նախագահ Ժակ Շիրաքը նշում է, որ հարեւան Ղազախստանը փակել է Ուզբեկստանի հետ սահմանը:

Անցյալ շաբաթ Անդիջանում 2000 ցուցարարներ պահանջել էին արդարացնել իսլամ արմատականության համար դատված 23 անձանց: Նրանք մեղադրվում են հակասահմանադրական գործունեության մեջ, ինչպես նաեւ իսլամական «Ակրոմիա» շարժման բջիջ հիմնելու համար: Ենթադրվում է, որ ներկայիս ապստամբներն այդ մեղադրյալների մերձավորներն են:

«Ակրոմիա» շարժումը, ըստ Ֆրանսիայի, «Հիզբի թահրիր» արմատական շարժման ճյուղերից է: «Հիզբի թահրիրն» ուզում է իսլամական պետություն ստեղծել նախկին խորհրդային միջինասիական հանրապետությունների տարածքում: Շարժման մասնակիցները հալածանքների են ենթարկվում Տաջիկստանում եւ Ուզբեկստանում:

Ղրղզստանում «Հիզբի թահրիրը» նոր անդամներ է հավաքագրում գլխավորապես գործազուրկների շարքերում, վերջին տարիներին՝ նաեւ միջին խավի ուսյալ երիտասարդների շրջանում:

Հաղորդվում է նաեւ, որ երեկ Տաշքենդում Իսրայելի դեսպանատան մոտ պահապանները նախազգուշական կրակոցից հետո սպանել են մի մարդու, որն իրենց կասկածելի էր թվացել եւ կանգ չէր առել: Իսրայելի ռադիոն ազատորեն հաղորդել, թե սպանվել է մահապարտ ահաբեկիչ: Բայց ավելի ուշ պարզվեց, որ զոհը հոգեկան խանգարում ստացած ռուս գործազուրկ է:

Պ. Ք.

Մ. ԵՍԱՅԵԳԵՐ

Օդանավակայանում ուղեւորներին ստուգում են ըստ ծիածանաթաղանթի

Ֆլորիդայի նահանգի խոշորագույն՝ Օրլանդոյի միջազգային օդանավակայանում մարդկանց ինքնությունը պարզելու նպատակով սկսել են հիմք ընդունել նրանց աչքի ծիածանաթաղանթի պատկերը: Օդանավակայանի անվտանգության ծառայության ղեկավար Բրիջիտ Ռիվերա Գերշն ամերիկյան տեղական հեռատաքնկերություններից մեկին տված հարցազրույցում ասել է, որ ինքնության պարզման նոր համակարգի շնորհիվ օդանավակայանում անվտանգության մակարդակը շուտով զգալիորեն կբարձրանա:



Հայտնի է, որ մարդու ծիածանաթաղանթի պատկերն առավել յուրահատուկ է, քան մատնահետքերը: Ծիածանաթաղանթի «կեղծումը» փաստորեն անհնար է:

ԱՄՆ իշխանությունները կարծում են, որ ամենուրեք նոր համակարգի արմատավորումը զգալիորեն կնվազեցնի անցանկալի անձանց օդանավ նստելու եւ ԱՄՆ տարածք հասնելու հավանականությունը:

«Վաշինգտոն փոստ» թերթը նշում է, որ ցանցաթաղանթի պատկերատպումը եւ ըստ այդմ ինքնության պարզումը տեսած են մի քանի վայրկյան եւ փաստորեն բացառում սխալի հնարավորությունը: Այդ արարողակարգից հետո ուղեւորին խնդրում են հարցաթերթիկում նշել իր անունը, ծննդյան վայրն ու տարեթիվը, տնային եւ էլեկտրոնային հասցեն, տնային եւ բջջային հեռախոսների համարները, աչքերի գույնը, քաղաքացիությունը, հասակը եւ վերջին 5 տարվա բնակության վայրը:

Այս տեղեկությունները ծիածանաթաղանթի թվային պատկերի հետ մտցվում են համակարգիչ. այսպիսով մարդն ստանում է «էլեկտրոնային անձնագիր»: Հետագայում նա կենթարկվի միայն աչքի վայրկենական պատկերատպման եւ կազատվի անձնագրային ստուգման հերթերից: Օդանավակայաններից առաջ նման համակարգեր օգտագործել են միայն ամերիկյան գաղտնի պետհիմնարկներում եւ միջուկային օբյեկտներում:

Ենթադրվում է, որ Օրլանդոյում տվյալ համակարգի եռամսյա փորձարկումների հաջողության դեպքում այն կօգտագործվի ամերիկյան նաեւ մյուս օդանավակայաններում:

Յուշչենկո. «Ռուսերենն Ուկրաինայում չի հալածվի»

Ուկրաինական 3 հեռատաալիքներով բնակչության հարցերին պատասխանելիս նախագահ Վիկտոր Յուշչենկոն հայտարարել է, թե ռուսաց լեզուն Ուկրաինայում ճնշումների չի ենթարկվի որեւէ մակարդակով:

«Ռուսաց լեզուն Ուկրաինայի միլիոնավոր քաղաքացիների լեզուն է, ուստի պետությունը պետք է պատասխանատվություն կրի դրա զարգացման համար», մասնավորապես ասել է նախագահը:

Նա չի բացառել երկրի խորհրդարանում պետական երկրորդ լեզվին առնչվող հարցի առաջադրման ու քննարկման հնարավորությունը:

Միեւնույն ժամանակ Յուշչենկոն անդրադարձել է Ղրիմի խնդրին: Նրա խոսքերով, թերակղզու կարգավիճակը չի կարող փոխվել, քանի որ Ուկրաինան միասնական պետություն է: Ինչ վերաբերում է հանգստյան ու վերականգնողական գոտիներում պատճառաբար վաճառված հողերին, դրանք երկու ամսվա ընթացքում կվերադարձվեն արգելոցներին:

Նախագահը Ղրիմի ուկրաինական, ռուսական եւ թաթարական համայնքներին առաջարկել է մշակել «հաշտեցման ընդհանուր հուշագիր, ըստ որի թերակղզում միջէթնիկական բոլոր հակամարտությունները լուծված կհամարվեն, եւ բոլոր էթնիկական համայնքները կգոյակցեն հաշտ, խաղաղ ու ներդաշնակ»:

Իրանը դարձել է հերոինի տարանցման ճանապարհ

Թմրադեղերի առեւտրականներն Իրանի խոսային վիճակից օգտվելով՝ այդ երկիրը վերջերս դարձրել են Աֆղանստանից Եվրոպա հերոինի տարանցման ճանապարհ: Այդ մասին հաղորդում է ՄԱԿ-ի թմրադեղերի վերահսկման միջազգային վարչությունը:

Վարչության տվյալներով, Հորդանանի իշխանություններն Իրանի սահմանի մոտ առգրավել են զանազան թմրադեղերի մեծ քանակություններ:

Աֆղանստանի ղեկավարությունը պնդում է, որ թմրանյութերի խնդիրն այնքան է սրվել, որ սպառնալիքի տակ է երկրի բուն գոյությունը: Թմրադեղերն Աֆղանստանից Իրանով հասցվում են Հորդանան, իսկ այնտեղից ավանդական երթուղիներով հայտնվում են Եվրոպայում:

Թմրադեղերի վերահսկման միջազգային վարչության նախագահ Համիդ Գոդսեն BBC-ի թղթակցի հետ զրուցելիս ասել է, որ թմրադեղերի առեւտրականներն առհասարակ օգտագործում են ճգնաժամային տարածաշրջանները, ինչպես տվյալ դեպքում Իրանը: «Անհնար է խաղաղություն հաստատել, անվտանգություն եւ զարգացում ապահովել, առանց թմրադեղերի խնդրի լուծման: Պատերազմի կամ տարերային աղետի հետեւանքով սահմանային վերահսկողության եւ անվտանգության ենթակառույցի թուլացումը երկրները դարձնում է հարմար օժանդակ եւ փոխաբեռնման կետեր, որոնցից օգտվում են ոչ միայն ահաբեկիչներն ու գոհայինները, այլեւ թմրադեղերի առեւտրականները, ընդգծել է Գոդսեն:

Նա մտահոգություն է արտահայտել Իրանի տարածքով անցկացվող թմրանյութերի ծավալների աճի կապակցությամբ: Համիդ Գոդսեի խոսքերով, Իրանի նոր իշխանությունները գործակցում են թմրադեղերի առեւտրի դեմ պայքարող կազմակերպությունների հետ, բայց առայժմ պայքարի բավարար միջոցներ չունեն:

Պ. Ք.

ԿԻՆՈ

ԿԱՆՆԻ ՍԻՐԵԼԻՆ

Անցյալ տարի էմիր Կուստուրիցան «Կյանը hրաշք է» վերնագրով իր վերջին աշխատանքն էր ներկայացրել Կաննի մրցութային ծրագրում:

Նա աշխարհի այն չորս հազվագյուտ ռեժիսորներից է, որ երկու անգամ է նվաճել Կաննի «Ոսկե արմավենու ճյուղը». 1985-ին՝ «Հայրիկը գործուղման մեջ է» եւ 1995-ին՝ «Ընդհատակ» ֆիլմերի համար, իսկ «Գնչուների ժամանակը» 1988-ին նրան բերել է նաեւ լավագույն ռեժիսորական աշխատանքի մրցանակը Կաննում: Աշխարհի ամենահեղինակավոր կինոփառատոնը, փաստորեն, Կուստուրիցային ողողել է արդեն իր մրցանակներով, այնպես որ «Կյանը hրաշք է» ֆիլմին ոչ մի պարգեւ էլ բաժին չհասավ: Դրա փոխարեն՝ վարպետի վերջին կինոնկարի առիթով Մոսկվայի միջազգային փառատոնում նրան մրցանակ շնորհվեց համաշխարհային կինեմատոգրաֆում ներդրած ավանդի համար:

Կուստուրիցան, ընդհանրապես, ռեկորդակիրներից մեկն է աշխարհի գլխավոր կինոփառատոներում շահած մրցանակների քանակով: Նրա ձոխ հավաքածուի մեջ են, Կաննի պարգեւների կողքին, Վենետիկի «Ոսկե եւ Արծաթե առյուծները»՝ «Հիշում ես Դոլի Բելին» (1981) եւ «Սեւ կատու, սպիտակ կատու» (1998) ֆիլմերի համար, ինչպես նաեւ Բեռլինի «Արծաթե արջը», որը 1993-ին «Արիզոնայի երազանքը» վավերագրել է որպես լավագույն ռեժիսորական աշխատանք:

90-ականների կեսից ի վեր Կուստուրիցան կենդանի դասականի անվիճելի համբավ է վայելում: Սերբական արմատներ ունեցող բոսնիացի ռեժիսորին, որ ծնվել ու հասակ է առել «բոսնիական պատերազմի խորհրդանիշը դարձած» Սարաեւոյում եւ ի վերջո՝ հանգրվանել Ֆրանսիայում, մեծարում են «հարավսլավական հրաշք», «նոր Ֆելլինի», «եվրոպական կինոյի իշխան» եւ համանման այլ տիտղոսներով: «Ընդհատակը», որտեղ Հարավսլավիայի նորագույն պատմությունը ներկայացված է տրագիկոմիկական շնչով, էպոսի եւ ֆարսի անբեւեւակայելի համադրությամբ, Կուստուրիցայի գլուխգործոցն է հռչակվել: Բայց ֆիլմը Կաննի գլխավոր մրցանակի հետ մեկտեղ՝ նրա հայրենիքում ջախջախիչ հոդվածներ վաստակեց: Սերբերը չեն սիրում Կուստուրիցային, որովհետեւ մահմեդական է, բոսնիացիներն էլ չեն հանդուրժում, քանի որ բավականաչափ մահմեդական չէ: Ջախ ենթադրությունների կարծիքով, «Ընդհատակն» ակնհայտորեն սերբամետ էր եւ աչքի չէր ընկնում քաղաքական նրբանկատությամբ: Բոսնիայի հերուսաստեսությունը Կուստուրիցային «հրեավոր անարխիստ» կոչեց, որը հրվում է՝ «բոլոր սրբությունները ծաղրելով»: Նրան սերբ ազգայնականի պիտակ փակցրին: Մինչեւ հոգու խորքը

Գլեյզերին է պատկանում «Մանչեսթր յունայթեդի» բաժնեմասերի 56,9 տոկոսը

Ամերիկացի միլիարդատեր Մալկոլմ Գլեյզերը մոտ է իր վերջնական նպատակին: Օրերս նա 790,3 մլն ֆունտ ստեռլինգով գնել է իռլանդացի գործարարներ Ջոն Մագնիերին ու Ջոն Մակմանուսին պատկանող ակումբի բաժնեմասերի 28,7 տոկոսը: Յուրաքանչյուր բաժնեմասի համար Գլեյզերը վճարել է 3 ֆունտ ստեռլինգ: Հաշվի առնելով, որ Գլեյզերին էր պատկանում ակումբի բաժնեմասերի 28,2 տոկոսը, այժմ բաժնեմասերի նրա փաթեթը կազմում է ընդհանուրի 56,9 տոկոսը: Սակայն դա բավարար չէ ակումբի սեփականատեր դառնալու համար, քանի որ «Մանչեսթր յունայթեդի» գործող կանոնադրության համաձայն Գլեյզերին պետք է պատկանի բաժնեմասերի 75 տոկոսը: Չնայած դրան, փորձագետների կարծիքով, Գլեյզերը գլխավոր քայլը կատարել է:

«Մանչեսթր յունայթեդի» սեփականատեր դառնալու առաջին փորձերը Գլեյզերը կատարել էր դեռևս անցյալ տարի: Սակայն նրա բոլոր առաջարկներն ակումբի ղեկավարությունն ու մյուս բաժնետերերը մերժում էին: Երկու շաբաթ առաջ ամերիկյան ֆուտբոլի

«Տամպա» ակումբի տերը կրկին առաջարկներ էր ներկայացրել: Գլեյզերին մինչև մայիսի 17-ը ժամկետ էին տվել ակումբի զարգացման ծրագիրը ներկայացնելու համար: Ամերիկացի միլիարդատերը ժամկետից շուտ կարետոր քայլ կատարեց: Այժմ, ըստ բրիտանական արժեթղթերի մասին օրենքի, Գլեյզերը կարող է հավակնել նաև բաժնեմասերի մնացած տոկոսին: Եթե նրան հաջողվի իր սեփականությունը դարձնել բաժնեմասերի 90 տոկոսը, ապա մնացած 10 տոկոսը նա կարող է գնել առանց դրանց տերերի համաձայնությունը հաշվի առնելու:

Ճիշտ է, ակումբի ղեկավարությունը բազմիցս հայտարարել է, որ չի ցանկանում, որպեսզի Գլեյզերը դառնա «Մանչեսթր յունայթեդի» միակ սեփականատերը: 126-ամյա պատմություն ունեցող թիմի բազմահազար երկրպագուներն էլ դեմ են Գլեյզերին եւ մեկ անգամ չէ, որ բողոքի ցույցեր են կազմակերպել նրա դեմ: Հիմնական մտահոգությունն այն է, որ Գլեյզերին հնարավոր է հետաքրքրի միայն եկամուտը, այլ ոչ թե «Մանչեսթր յունայթեդին» փառքի գագաթին հասցնելը: Սակայն թիմի երկրպագուները, կարծում ենք, մտահոգվելու առանձնապես խնդիր չունեն: Գլեյզերն օրերս հայտարարել է, որ թիմի գլխավոր մարզիչ Ալեխ Ֆերգյուսոնին նոր, երկարաժամկետ պայմանագիր կառաջարկվի: Բացի այդ, 100 մլն ֆունտ ստեռլինգ կհատկացվի նոր ֆուտբոլիստների գնման համար: Կհաջողվի՞ Մալկոլմ Գլեյզերին ընթանալու Ռոման Աբրամովիչի ճանապարհով, ցույց կտա ժամանակը:

Կանայք սկսում են մրցավեճը

Ընդամենը մի քանի օր առաջ ավարտվեց շախմատի Հայաստանի տղամարդկանց բարձրագույն խմբի 65-րդ առաջնությունը, որում 8-րդ անգամ չեմպիոն հռչակվեց մեր բազմափորձ գրոսմայստերներից մեկը՝ Աշոտ Անդասյանը: Իսկ այսօր Տիգրան Պետրոսյանի անվան շախմատիսի կենտրոնական տանն իրենց մրցավեճը կսկսեն կանայք: Ժամը 15-ին կտրվի շախմատի Հայաստանի կանանց բարձրագույն խմբի 55-րդ առաջնության մեկնարկը:

Երեկ Տիգրան Պետրոսյանի անվան շախմատիսի տանը կայացավ մրցաշարի բացման եւ մասնակիցների վիճակահանության արարողությունը: Առաջնության գլխավոր մրցավար՝ հանրապետական կարգի մրցավար Էռնա Խալաֆյանը նախ ծանոթացրեց մրցաշարի մրցակարգին: Առաջնությանը կմասնակցեն հանրապետության ուժեղագույն 10 շախմատիստուհիները, որոնք չեմպիոնի կոչումը կվիճարկեն շրջանաձեւ մրցակարգով: Գործելու է Ֆիշերի ժամակարգը. մասնակիցներից յուրաքանչյուրին մեկ պարտիայի համար կտրամադրվի 1,5 ժամ գումարած 30 վայրկյան ամեն մի քայլի համար: Հավասար միավորների դեպքում տեղերը մրցաշարային աղյուսակում որոշվելու են հետեւյալ հերթականությամբ. անձնական հանդիպումների արդյունքով, Բերգերի գործակիցներով, տարած հաղթանակների քանակով: Եթե 1-2-րդ տեղերը զբաղեցրած շախմատիստուհիները վաստակեն հավասար միավորներ, ապա հաջորդ օրը նրանց միջեւ կանցկացվի լրացուցիչ մրցախաղ 2 պարտիայից: Եթե դրանք էլ չորոշեն չեմպիոնուհուն, ապա կանցկացվի 2 պարտիա արագ շախմատից, իսկ հարկ եղած դեպքում՝ նաեւ կայծակնային խաղի կանոններով:

Երեք մասնակիցների հավասար միավորների դեպքում նրանց միջեւ կանցկացվի 2 շրջանից բաղկացած մրցաշար: Եթե հաղթողը չորոշվի, ապա չեմպիոնուհին ի հայտ կբերվի հիմնական մրցաշարի լրացուցիչ ցուցանիշներով:

Ի տարբերություն տղամարդկանց առաջնության, կանանց մրցաշարի մրցանակային հիմնադրամը մեծ չէ: Չեմպիոնուհին կպարգեւատրվի 300 հազար դրամով, 2-3-րդ տեղերը զբաղեցնողները կստանան համապատասխանաբար 200 եւ 100 հազարական դրամ, 4-5-րդ տեղերը գրավածները՝ 60 եւ 40 հազարական դրամ: 6-10-րդ տեղերը գրաված շախմատիստուհիները վաստակած յուրաքանչյուր միավորի դիմաց կստանան 5 հազար դրամ: Չեմպիոնուհու համար հատուկ մրցանակ է սահմանել «Սամսունգ» ֆիրման: Մրցաշարում խաղարկվում է նաեւ աշխարհի եւ Եվրոպայի թիմային առաջնության մեկ ոտեգիր: Այդ մրցաշարերում ՀՀ կանանց հավաքականում կընդգրկվեն ամենաբարձր գործակից ունեցող մեր չորս շախմատիստուհիները, իսկ 5-րդ մասնակիցը կորոշվի ընթացիկ առաջնությունում:

Վիճակահանությամբ 10 մասնակիցները դասավորվեցին հետեւյալ հերթականությամբ. 1. Աննա Հայրապետյան, 2. Լուսինե Ալավերդյան, 3. Սիրանուշ Անդրեասյան, 4. միջազգային վարպետ Նելլի Աղինյան, 5. միջազգային վարպետ Լիլիթ Գալոյան, 6. Անի Ավանեսյան, 7. միջազգային գրոսմայստր Լիլիթ Մկրտչյան, 8. միջազգային գրոսմայստր Էլինա Դանիելյան, 9. Նունե Դարբինյան, 10. միջազգային վարպետ Նարինե Գասպարյան:

Այսօր կայանալիք առաջին տուրում կմրցեն հետեւյալ զույգերը. Հայրապետյան-Գասպարյան, Ալավերդյան-Դարբինյան, Անդրեասյան-Դանիելյան, Աղինյան-Մկրտչյան, Գալոյան-Ավանեսյան:

Լուկան շրջանցեց Բեսինին

Իտալացի հեծանվորդ Դանիլո Դի Լուկան հաղթող ճանաչվեց «Ջիրո դ՚Իտալիա» բազմօրյա հեծանվավազքի 5-րդ փուլում՝ բոլորից արագ հաղթահարելով 223 կմ մրցասարածությունը: Լուկան ընթացիկ մրցումներում արդեն 2-րդ անգամ է հաղթող ճանաչվում: Այդ հաղթանակի շնորհիվ Լուկան գլխավորեց հեծանվավազքի մրցաշարային աղյուսակը: Իսկ նախկին առաջատար Պաոլո Բեսինին տեղափոխվեց 2-րդ տեղ: Վերջինս եւս երկու փուլում հաղթող է ճանաչվել: 3-րդ տեղում ընթանում է իտալացի Լուկա Մացանտին: Թիմային հաշվարկում առաջին տեղում է «Լիկուիգազ-Բյանկին», որի կազմում հանդես է գալիս Դանիլո Դի Լուկան: 2-րդ տեղում «Դոմինա Վականցեն» է:

Բրազիլացիներն ուժեղ են նաեւ լողափային ֆուտբոլում

Ռիո դե Ժանեյրոյում ընթացող լողափային ֆուտբոլի աշխարհի անդրանիկ առաջնությունում Բրազիլիայի հավաքականի առավելությունը մրցակիցների նկատմամբ ակնհայտ է: Քառորդ եզրափակիչում բրազիլացիները 9-3 հաշվով պարտության մատնեցին արգենտինացիներին: Կիսաեզրափակիչում բրազիլացիներն այսօր կմրցեն պորտուգալացիների հետ, որոնք պարտության մատնեցին Ուկրաինայի հավաքականին (5-3): Մյուս զույգը ինն Ուկրաինայի հավաքականին գազմել են Ֆրանսիայի եւ Ճապոնիայի հավաքականները: Ֆրանսիացիները հաղթեցին իսպանացիներին (7-4), իսկ Ճապոնիայի ընտրանին պարտության մատնեց ուրուգվայցիներին (4-3):

Դավիդենկոն կիսաեզրափակիչում

Թենիսի Համբուրգի մրցաշարում հաջող է հանդես գալիս ռուսաստանցի Նիկոլայ Դավիդենկոն: Նա մրցաշարի մասնակիցներից առաջինը կիսաեզրափակիչի ուղեգիր նվաճեց՝ հաղթելով Վոլանդրիին (7-6, 6-4): Նախորդ փուլում էլ նա պայքարից դուրս էր մղել Ֆեռերոյին: Այժմ կիսաեզրափակիչում Դավիդենկոն կմրցի Ֆեդերեր-Կորիա զույգի հաղթողի հետ: Նախորդ փուլում Ֆեդերերը պարտության էր մատնել Ռոբրեդոյին, իսկ Կորիան հաղթել էր Անչիչին:

Ուժերի ստուգատես Իրանում

Բռնցքամարտի Հայաստանի ազգային հավաքականը գլխավոր մարզիչ Ռաֆայել Մեհրաբյանի գլխավորությամբ մեկնել է Իրան՝ մասնակցելու միջազգային մրցաշարի: Հավաքականի կազմում ռինգ դուրս կգան 8 հայ բռնցքամարտիկներ՝ Արսակ Մալումյանը, Հրաչյա Ջավախյանը, Գաբրիել Տոլմաջյանը, Արսյոմ Հովհաննիսյանը, Սամվել Մաթեւոսյանը, Անդրանիկ եւ Աշոտ Հակոբյանները, Էդգար Մանուկյանը: Իրանի միջազգային մրցաշարը մեր բռնցքամարտիկների համար եւս մեկ փորձություն կլինի առաջիկա պատասխանատու մրցումներից առաջ, հնարավորություն կընձեռի ստուգելու մարզիկների պատրաստվածությունը:

Շերտավորում

Ֆուտբոլի Հայաստանի բարձրագույն խմբի առաջնության 5-րդ տուրից հետո մրցաշարային աղյուսակում շերտավորում է ստեղծվել: Արդեն ի հայտ են եկել ակնհայտ առաջատարները, ինչպես նաեւ հետնապահները: Այս առումով կարետոր նշանակություն ուներ երեկ Աբովյանում կայացած «Դինամո-Զենիթ»-«Լեռնային Արցախ» հանդիպումը: Մրցակիցները երեք անընդմեջ պարտություն էին կրել, ուստի, ինչպես ասում են, նահանջելու տեղ չունեին: Հանդիպումը դրամատիկ ելք ունեցավ: Խաղի 49-րդ րոպեին «Լեռնային Արցախը», շնորհիվ Արարատ Ղազարյանի եւ Տիգրան Եսայանի խփած գոլերի, խաղը շահում էր 2-0 հաշվով: Բայց հյուրերը ոչ միայն չպահպանեցին հաղթական հաշիվը, այլեւ ի վերջո խաղադաշտը թողեցին պարտված: Ընդամենը 6 րոպեում (64-70-րդ) դինամոյականներ Ստեփան Հակոբյանը, Ալբերտ Ներսիսյանը, Ռաֆայել Մկրտչյանը կշեռքի նժարը թեքեցին իրենց կողմը՝ ապահովելով թիմի հաղթանակը: Այսպիսով, «Լեռնային Արցախը» 4-րդ անընդմեջ պարտությունը կրեց, իսկ դինամոյականներն անդրանիկ հաղթանակը տոնեցին՝ խույս տալով վերջին տեղից:

ՀՀ նորընծա գավաթակիր «Միկան» սեփական հարկի տակ ոչ-ոքի խաղաց «Էսթեղլալ-Կոտայքի» հետ: Այդ խաղում առաջինը հաջողության հասան կոտայքցիները՝ շնորհիվ Արարատ Հարությունյանի 51-րդ րոպեին խփած գոլի: 14 րոպե անց Արսյոմ Ադամյանը վերականգնեց հավասարակշռությունը:

Մրցաշարային աղյուսակ

	Խ	Հ	Ո	Պ	Գ	Մ
1. Փյունիկ	5	4	1	0	10-2	13
2. Բանանց	4	4	0	0	6-2	12
3. Կիլիկիա	5	2	1	2	9-6	7
4. Միկա	4	2	1	1	4-3	7
5. Էսթ.-Կոտայք	5	1	3	1	5-5	6
6. Դին.-Զենիթ	4	1	0	3	4-6	3
7. Լ. Արցախ	5	1	0	4	8-10	3
8. Շիրակ	4	1	0	3	5-9	3
9. Լեռնագործ	4	1	0	3	1-9	3

Ռմբարկուները

Էդգար Մանուչարյան	«Փյունիկ»	3
Կարեն Խաչատրյան	«Շիրակ»	3
Սարգիս Մովսիսյան	«Կիլիկիա»	3
Նշան Էրզրումյան	«Կիլիկիա»	3

Կրամնիկը ստանձնեց առաջատարի դերը

Սոֆիայում վեց ուժեղագույն շախմատիստների մասնակցությամբ մեկնարկել է շախմատի միջազգային խոշոր մրցաշարը, որը ՖԻԴԵ-ի 20-րդ կարգի է: Մրցաշարի կազմակերպիչներին հաջողվել է հրավիրել դասակարգման ցուցակի վեց լավագույն շախմատիստներին: Բացակայում են միայն Գարի Կասպարովն ու Պետեր Լեկոն: Մրցաշարի գլխավոր հովանավորը բուլգարական բջջային կապի Mobiltel ընկերությունն է, որն ապահովել է 300 հազար եվրո մրցանակային ընդհանուր հիմնադրամը:

Մեկնարկի նախօրյակին կատարված վիճակահանությամբ մասնակիցները հետեւյալ հերթականությամբ են դասավորվել. 1. Վլադիմիր Կրամնիկ (2753), 2. Վիշվանաթան Անանդ (2785), 3. Մայքլ Ադամս (2737), 4. Ռուսլան Պոնոմարյով (2695), 5. Վեսելին Թոփալով (2778), 6. Հոտիթ Պոլգար (2732): Մասնակիցների միջին վարկանիշը 2744 է: Ընդամենը 7 կետ չբավարարեց, որպեսզի մրցաշարը 21-րդ կարգի լիներ: Նման կարգի մրցաշար ժամանակին անցկացվել է Լաս Պալմասում: Եթե Կասպարովը մասնակցեր Սոֆիայի մրցաշարին, ապա 21-րդ կարգը կապահովվեր:

Սոֆիայի մրցաշարը մի յուրահատկություն ունի: Համաշխարհային շախմատի պատմության մեջ առաջին անգամ այն անցկացվելու է նոր մրցակարգով, որում պարզապես պատերազմ է հայտարարված ոչ-ոքիներին: Շախմատիստներին խաղի ընթացքում չի թույլատրվում խոսել միմյանց հետ, իսկ ոչ-ոքի արդյունքի մրցավարի կողմից գրանցվում է միայն հավերժական շախի, դիրքը երբ անգամ կրկնելու կամ էլ տեսականորեն հաղթելու ոչ մի հնարավորություն չլինելու դեպքում:

Մեկնարկն արդարացրեց մրցաշարի կազմակերպիչների սպասելիքները: Բոլոր երեք պարտիաներում էլ համառ պայքար ընթացավ: Կրամնիկը վստահ հաղթանակ տոնեց Պոնոմարյովի նկատմամբ: Տուրի կենտրոնական պարտիայում երկարատեւ ու համառ պայքարից հետո, թագուհու զոհաբերության գնով Անանդը հավերժական շախի շնորհիվ Թոփալովի հետ հանդիպումը ոչ-ոքի ավարտեց: Ադամսն ու Պոլգարն էլ հաղթանակի ուղիներ չգտնելով, համաձայնեցին խաղաղ արդյունքի:

Այսպիսով, մեկնարկից հետո Կրամնիկը գլխավորեց աղյուսակը: 2-րդ տուրում նա սպիտակներով խաղալու է Անանդի հետ:

Քառյակը շարունակում է պայքարը

Ավստրիայում ընթացող տափօղակով հոկեյի աշխարհի առաջնությունը թեւակոխել է վճռական փուլ: Հայտնի են դարձել կիսաեզրափակիչի մասնակիցները: Պայքարը շարունակում են Ռուսաստանի, Շվեդիայի, Չեխիայի եւ Կանադայի հոկեյիստները: Քառորդ եզրափակիչ բոլոր մրցախաղերում էլ բավական համառ ու անզիջում պայքար ծավալվեց: Դրանցից երկուսում հաղթողը որոշվեց բուլիտներով:

Ռուսաստանի եւ Ֆինլանդիայի հավաքականների մրցավեճում ռուսները սկզբում մրցակցին զիջում էին 0-2 հաշվով, սակայն կարողացան հավասարեցնել հաշիվը (2-2): Մինչեւ խաղավարտ մրցակիցները մեկական տափօղակ փոխանակեցին: Հաղթողը որոշվեց բուլիտներով: Ավելի դիպուկ գտնվեցին ռուս հոկեյիստները, որոնք հաղթելով 3-2 հաշվով, մտան կիսաեզրափակիչ:

Բուլիտները որոշեցին նաեւ Չեխիայի եւ ԱՄՆ-ի հոկեյիստների մրցավեճի ելքը: Այս խաղում էլ մրցակիցները 2-ական տափօղակ փոխանակեցին, իսկ բուլիտներից միայն մեկն իրացվեց, որի հեղինակը չեխ հոկեյիստն էր: Այսպիսով, չեխերն ամերիկացիների նկատմամբ ռեւանշի հասան անցյալ տարվա աշխարհի առաջնությունում կրած պարտության դիմաց:

Մյուս երկու հանդիպումներում մրցակիցներից մեկի առավելությունը մյուսի նկատմամբ արտահայտվեց մեկ տափօղակի տարբերությամբ: Կանադայի ընտրանին հաղթեց Սլովակիային (5-4): Այդ հաջողությունում մեծ էր կանադացիների Նեշ-Գանյե-Տորնտոն առաջատար եռյակի ներդրումը, որն իր օգտին 3 գոլ գրանցեց:

Շվեդներն էլ նվազագույն հաշվով (2-1) պարտության մատնեցին շվեյցարացիներին: Կիսաեզրափակիչում այսօր շվեդները կմրցեն չեխերի հետ, իսկ Ռուսաստանի հավաքականի մրցակիցը կլինի Կանադայի ընտրանին:

Էջը պատրաստեց ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

Տնտեսություն

ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի նիստում

ԿԲ խորհուրդը մայիսի 13-ի նիստում ԿԲ գործառնությունների տոկոսադրույքները թողեց անփոփոխ. կնքվող ռեպո-համաձայնագրերի տոկոսադրույքը՝ տարեկան 3,75, տրամադրվող լոմբարդային վարկերինը՝ 16, իսկ ներգրավվող ավանդներինը՝ 1,75 տոկոս:

***

ԿԲ մամուլի ծառայությունը հրապարակում է ապրիլի 15-28-ն ընկած ժամանակահատվածում ձեավորված մակրոնտեսական իրավիճակի եւ ֆինանսական շուկայի միտումների նկարագիրը.

Մակրոնտեսական իրավիճակը Ըստ Ազգային վիճակագրական ծառայության պաշտոնական տվյալների, ապրիլի 10-20-ը գրանցվել է - 0.35% գնաճ:

Ապրիլի 15-28-ն ընկած ժամանակահատվածում բյուջեի միջին օրական հարկային եկամուտները կազմել են մոտ 1 մլդ 431 մլն դրամ:

Դրամավարկային քաղաքականություն Հաշվետու ժամանակահատվածում փողի բազան աճել է 4 մլդ 670 մլն դրամով՝ կազմելով 127 մլդ 325 մլն դրամ: Փողի բազայի աճն ոտեկցվել է ՁԱԱ-ի 8 մլդ 345 մլն դրամ աճով եւ ՁՆԱ-ի 3 մլդ 674 մլն դրամ նվազմամբ:

ՁԱԱ-ի աճը պայմանավորված է եղել ԿԲ կողմից արտարժույթի շուկայից 9 մլդ 297 մլն դրամին համարժեք արտարժույթի ձեռքբերմամբ: Վերջինիս զուգահեռ վճարվել են արտաքին պարտք եւ արտաքին պարտքի տոկոսագումար՝ համապատասխանաբար 1 մլդ 301 մլն դրամ եւ 158 մլն դրամ գումարների չափով: Այս ընթացքում վճարվել է նաեւ անդամակցության գումար՝ 40 մլն դրամ գումարի չափով, իսկ այլ ակտիվները աճել են 547 մլն դրամով:

ՁՆԱ-ի նվազումը պայմանավորված է եղել կառավարության պարտավորությունների նվազմամբ, որը կենտրոնական գանձապետարանի միասնական հաշվի մնացորդի 4 մլդ 38 մլն դրամ կուտակման, ԿԲ արժեթղթերի պորտֆելի 1 մլդ 373 մլն դրամ գումարի չափով աճի եւ 1 մլդ 912 մլն դրամ գումարի չափով կառավարության դեպոզիտների աճի արդյունք է: Այս ընթացքում բանկերի պարտավորություններն աճել են 2 մլդ 129 մլն դրամով՝ ի հաշիվ 9 մլդ 490 մլն դրամ գումարի չափով ավանդի մարման, որին զուգահեռ կնքվել է 1 մլդ 361 մլն դրամի հակադարձ ռեպո գործարք եւ ներգրավվել 6 մլդ դրամի ավանդ: Ըստ այլ ակտիվները նվազել են 1 մլդ 228 մլն դրամով:

Ապրիլի 22-ին նախորդած շաբաթվա ընթացքում փողի զանգվածն (առանց կուտակված տոկոսների) աճել է 4 մլդ 709 մլն դրամով եւ կազմել 278 մլդ 864 մլն դրամ: Շրջանառության մեջ եղած կանխիկն աճել է 748 մլն դրամով, իսկ ավանդները՝ 3 մլդ 961 մլն դրամով: Ցպահանջ արտարժութային ավանդներն աճել են 2 մլդ 969 մլն դրամով, իսկ ցպահանջ դրամային ավանդները՝ 1 մլդ 637 մլն դրամով: Ժամկետային արտարժութային ավանդները նվազել են 767 մլն դրամով եւ կազմել 62 մլդ 353 մլն դրամ: Պայմանավորված վերոգրյալով՝ դրամային զանգվածն աճել է 2 մլդ 507 մլն դրամով եւ ապրիլի 22-ին կազմել 149 մլդ 453 մլն դրամ:

Ֆինանսական շուկայի միտումները Այդ հաշվածում թղթակցային հաշիվների միջին մակարդակը կազմել է 23,431 մլն, իսկ պարտադիր պահուստավորումը՝ 16,608 մլն դրամ: Ներքին արժութային շուկայում, ՊՊ առաջնային եւ երկրորդային շուկաներում դիտվել են հետեւյալ միտումները:

Ներքին արժութային շուկա Արտարժութային շուկայում առեւտրային բանկերի կողմից իրականացված գործառնությունների համախառն ծավալը կազմել է 111 մլն ԱՄՆ դոլար, որից 52 մլն ԱՄՆ դոլարի առք եւ 59 մլն ԱՄՆ դոլարի վաճառք՝ համապատասխանաբար 440.45 եւ 444.26 դրամ միջին կշռված փոխարժեքներով:

Արտարժույթի շուկայում ձեավորված ՀՀ դրամի փոխարժեքը ԱՄՆ դոլարի նկատմամբ արժեքավորվել է 1.72%-ով՝ 446.98 դրամից մեկ ԱՄՆ դոլարի դիմաց հասնելով մինչեւ 439.41 դրամի:

ՊՊ առաջնային շուկա Տեղի է ունեցել ՊՊ-երի 4 թողարկում: Առաջին շաբաթվա ընթացքում տեղաբաշխվել են 17-շաբաթյա եւ 48-ամսյա պարտատոմսեր՝ 2 մլդ դրամ ընդհանուր ծավալով: 17-շաբաթյա պարտատոմսի նկատմամբ պահանջարկը կազմել է 1 մլդ 316 մլն դրամ (131.64%)՝ արդյունքում ձեավորելով 4.18% միջին կշռված եկամտաբերություն, իսկ 48-ամսյա պարտատոմսի նկատմամբ պահանջարկը կազմել է 1 մլդ 968 մլն դրամ (196.78%)՝ արդյունքում ձեավորելով 5.45% միջին կշռված եկամտաբերություն: Երկրորդ շաբաթվա ընթացքում տեղաբաշխվել են 32-շաբաթյա եւ 36-ամսյա պարտատոմսեր՝ 1 մլդ 200 մլն դրամ ընդհանուր ծավալով: 32-շաբաթյա պարտատոմսերի նկատմամբ պահանջարկը կազմել է 1 մլդ 88 մլն դրամ (108.84%)՝ արդյունքում ձեավորելով 4.52% միջին կշռված եկամտաբերություն, իսկ 36-ամսյա պարտատոմսի նկատմամբ պահանջարկը կազմել է 1 մլդ 552 մլն դրամ (129.35%)՝ արդյունքում ձեավորելով 5.26% միջին կշռված եկամտաբերություն:

ՊՊ երկրորդային շուկա Իրականացվել է 4 մլդ 983 մլն դրամի գործարք՝ 5.18% միջին կշռված եկամտաբերությամբ: Առաջին շաբաթվա ընթացքում իրականացվել է 1 մլդ 524 մլն դրամի գործարք՝ 5.09%-ով, երկրորդ շաբաթվա ընթացքում՝ 3 մլդ 459 մլն դրամի գործարք՝ 5.22%-ով:

Միջբանկային ռեպո գործառնություններ Միջբանկային շուկայում իրականացված ռեպո գործառնությունների ծավալը կազմել է 6 մլդ 477 մլն դրամ՝ 4.46% միջին կշռված տոկոսադրույքով: Առաջին շաբաթվա ընթացքում իրականացվել է 2 մլդ 85 մլն դրամ ծավալով ռեպո գործարք՝ 2.86%-ով, երկրորդ շաբաթվա ընթացքում՝ 4 մլդ 392 մլն դրամ ծավալով գործարք՝ 2.84%-ով:

Հաջորդ երկշաբաթյա ժամանակահատվածի ծրագրավորում Ապրիլի 29-ից մայիսի 12-ը ընկած ժամանակահատվածում փողի բազայի ցուցանիշը կկազմի 132 մլդ 937 մլն դրամ:

Ըստ ծրագրավորման, կիրականացվի արտաքին պարտքի եւ տոկոսագումարի վճարում՝ համապատասխանաբար 1 մլդ 330 մլն եւ 150 մլն դրամ գումարի չափով, ինչպես նաեւ անդամակցության գումարի վճարում՝ 300 մլն դրամ գումարի չափով: Այս ընթացքում ծրագրավորվել է ԿԲ կողմից արտարժույթի շուկայից նվազագույնը 2 մլդ 640 մլն դրամին համարժեք արտարժույթի ձեռքբերում: Այլ ակտիվները կնվազեն 311 մլն դրամով: Վերոհիշյալ հոսքերը կհանգեցնեն ՁԱԱ-ի ցուցանիշի 549 մլն դրամ աճին:

Կառավարության զուտ պարտավորությունների ցուցանիշը, ըստ ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարարության բյուջետային հարցերի հանձնաժողովի տվյալների, կաճի 5 մլդ 419 մլն դրամով՝ պայմանավորված կենտրոնական գանձապետարանի միասնական հաշվի մնացորդի 6 մլդ 430 մլն դրամ գումարի ծախսմամբ, կառավարության դեպոզիտների 968 մլն դրամ աճով եւ ԿԲ արժեթղթերի պորտֆելի 43 մլն դրամ գումարի չափով նվազմամբ: Բանկերի պարտավորությունները կնվազեն 167 մլն դրամով եւ կկազմեն 7 մլդ 339 մլն դրամ: Նախատեսվում է մինչեւ 2 մլդ դրամի ներքաշող գործիքների կիրառում՝ 833 մլն դրամ գումարի չափով հակադարձ ռեպո գործարքի մարման պարագայում: Այլ ակտիվները կնվազեն 189 մլն դրամով: Վերոհիշյալ փոփոխությունները կհանգեցնեն ՁՆԱ-ի 5 մլդ 63 մլն դրամի աճի:

Այսպիսով, նկատի ունենալով ավտոնոմ հոսքերի գնահատականները, երկշաբաթյա ժամանակահատվածում փողի բազայի ցուցանիշը 132,937 մլն դրամ պահպանելու նպատակով, ԿԲ-ն կիրականացնի նվազագույնը 6 մլն դոլարի առք: Հաշվի առնելով վերոհիշյալը, ինչպես նաեւ մակրոնտեսական ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվությունը եւ ֆինանսական շուկաներում առկա միտումները՝ ԿԲ խորհուրդը որոշեց տոկոսադրույքները թողնել անփոփոխ՝ ներգրավված ավանդների համար՝ 1.75%, ռեպո համաձայնագրերի համար՝ 3.75%, լոմբարդային վարկերի համար՝ 16%:

29.04.2005թ.

ՀՀ ԿԲ մամուլի ծառայություն

Հայաստանում Ամերիկայի Միացյալ Նահանգների դեսպանատունը հայտարարում է Հյուբերտ Համֆրիի անվան կրթաթոշակի հերթական մրցույթը

Այս ծրագրով մասնագիտական գործունեության որոշակի փորձ ունեցող մասնագետները մեկնում են Միացյալ Նահանգներ՝ մեկ տարի ամերիկյան առաջնակարգ համալսարաններում ուսանելու եւ համապատասխան մասնագիտական փորձառություն ձեռք բերելու նպատակով: Կրթաթոշակը մրցութային կարգով տրվում է պետական եւ մասնավոր ոլորտներում հասարակական աշխատանք կատարողներին: Ծրագիրը կրթական աստիճան չի շնորհում, ուսումն ավարտելիս տրվում է վկայական ԱՄՆ կառավարության կողմից:

Այս ծրագիրը գործում է 1978թ.-ից՝ ի հիշատակ եւ ի պատիվ սենատոր եւ ԱՄՆ փոխնախագահ Հյուբերտ Համֆրիի: Թեկնածուների ընտրությունը կատարելիս դիտարկվում է առաջատար մասնագետ դառնալու նրա ներուժն ու նվիրումը հանրային ծառայությանը:

Ոլորտներ.

- Գյուղատնտեսական զարգացում/գյուղատնտեսական տնտեսագիտություն
- Լրագրություն
- **Թմրանյութերի չարաշահում. համաճարակաբանություն/կանխարգելում/իրազեկում/բուժում
- Տնտեսական զարգացում
- Կրթության կառավարում
- Ֆինանսներ եւ բանկային գործ
- ՄԻԱՎ/ՁԻԱՀ. քաղաքականություն եւ կանխարգելում
- Իրավագիտություն եւ մարդու իրավունքներ
- Բնական ռեսուրսների եւ շրջակա միջավայրի կառավարում
- Սպառազինությունների տարածման դեմ պայքար
- Հանրային առողջապահության քաղաքականություն եւ կառավարում
- Հանրային քաղաքականության վերլուծություն եւ հանրային վարչարարություն
- Մարդկանց թրաֆինի շահագործման դեմ պայքար
- Քաղաքաշինություն եւ տարածքային պլանավորում:

**Թմրանյութերի չարաշահումների ոլորտում (NIDA) շեշտը դրվում է համաճարակաբանության, կանխարգելման, իրազեկման ու բուժման վրա: NIDA-ի համար դիմողները պետք է ունենան բժշկական գիտությունների, առողջապահության, կենսաբժշկական, հոգեբանական գիտությունների կամ սոցիոլոգիայի դոկտորի կոչում: Այն թեկնածուները, ովքեր ունեն միայն մագիստրոսի կոչում, սակայն ունեն նշանակալի մասնագիտական կամ հետազոտական աշխատանքների փորձ, նույնպես կարող են դիմել:

Դիմելու կարգը

Հետաքրքրված թեկնածուները պետք է դիմում ներկայացնեն ԱՄՆ դեսպանատուն: Տեղում ընտրություն կատարելուց հետո վերջնական թեկնածությունները կոտրակվեն ԱՄՆ՝ անկախ հանձնաժողովների քննությանը: Այս հանձնաժողովները կհայտարարվեն մինչեւ մարտ, իսկ ուսումնառությունը կսկսվի օգոստոս-սեպտեմբեր ամիսներին:

Առաջադրվող պահանջներ՝

- Հայաստանի քաղաքացիություն եւ մշտական բնակություն,
- բակալավրի կոչում,
- հինգ տարվա մասնագիտական աշխատանքի փորձ,
- ղեկավարին բնորոշ հատկանիշներ ու հանրային ծառայության փորձ,
- անգլերենի վարժ իմացություն:

Կրթաթոշակն ապահովում է ճանապարհածախսը, ուսման վարձը համալսարանում, պատահարների/հիվանդության ապահովագրությունը, ամսական նպաստը ու ֆինանսավորում գրքերի ու մասնագիտական պիտույքների համար: Այս ծրագրի մասնակցին ուղեկցող ընտանիքի անդամներին ֆինանսական աջակցություն չի ցուցաբերվում:

Ծրագրին չեն կարող դիմել՝

- ուսուցիչները եւ դասախոսները, որոնք չեն զբաղվում կրթության ոլորտի քաղաքականության մշակմամբ եւ կառավարմամբ,
- անցած 7 տարիների ընթացքում 1 տարուց ավել ԱՄՆ-ում ուսանած մասնագետները,
- անցած 5 տարիների ընթացքում 6 ամսից ավելի ԱՄՆ-ում աշխատած անհատները,
- Տեխնիկական, ակադեմիական կամ հետազոտական աշխատանք կատարող մասնագետները:

Դիմումների ձեւերը կարող եք ձեռք բերել ԱՄՆ դեսպանատան հասարակայնության հետ կապերի բաժնից կամ դեսպանատան ինտերնետ կայքից http://www.usa.am/announcements: Ներկայացվող նյութերը պետք է լինեն մեքենագրված կամ համակարգչով տպված: Առաջին փուլը հաջողությամբ անցած թեկնածուները պետք է հանձնեն անգլերենի քննություն՝ TOEFL, որից հետո նրանց գործերը կոտրակվեն Վաշինգտոն՝ վերջնական քննության:

Լրացված դիմումները պետք է հանձնվեն ԱՄՆ դեսպանատան հասարակայնության հետ կապերի բաժնի մշակութային հարցերով օգնական Անահիտ Խաչատրյանին: Լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք զանգահարել հետեւյալ հեռախոսահամարով՝ 464724, այնտեղ ներքին համարը՝ 4310:

Դիմումները ներկայացնել մինչեւ ***2005 թ. հունիսի 17-ը:***

ԸՆՈՐՀԱԿԱԼԻՔ

Անհուն գոհունակությամբ կը յայտնեմ խորին շնորհակալութիւններս Նորմ-Մարաշի սրսաբանական կեդրոնի վիրահատութեան բաժնի ողջ անձնակազմին: Ի մասնաւորի բժշկապետ Հրայր Յովակիմեանին՝ բարեյաջող ծանր վիրահատումով անձիս նկատմամբ եղած հոգածութեան համար:

ՎԱՀԷ ՍԱՄՈՒԷԼԵԱՆ

Հալէպ-Երեւան

ՊԱՀԵՍ

«Գաֆէսճեան Թանգարան» հիմնադրամը **փնտրում է վարձով տրվող 1500-3000մ2 մակերես ունեցող փակ տարածք (պահեստ):** Տարածքը պետք է ունենա բեռնատար ավտոմեքենայի բեռնաթափման հնարավորություն, պահպանված լինի էլեկտրասնուցմամբ եւ ջրամատակարարմամբ, ինչպես նաեւ անվտանգության տեսակետից:

Դիմել Թամանյան 2/48 հասցեով
հեռ. 54.19.32, 54.19.34

Հայտարարություն

2005 թ. մայիսի 5-ին, ժամը 13:00-ին Շիրակի մարզի Մեծ Սարիար գյուղապետարանի շենքում տեղի կունենա քննարկում՝ գյուղում կառուցվելիք ջրավազանի նախագծերի վերաբերյալ: Ցանկացողները նյութերի հետ կարող են ծանոթանալ գյուղապետարանում:

Դատարանի վարույթում է գտնվում Սարգիս Գյուլեցյանի դիմումը՝ **Մարտին Սաքայի Գյուլեցյանին** (ծնված 1957 թ., վերջին հայտնի բնակության վայրն է՝ Երեւանի Գուլակյան 8 փողոցի թիվ 51 տունը) անհայտ բացակայող ճանաչելու պահանջի մասին:

Խնդրում ենք բոլոր կազմակերպություններին եւ քաղաքացիներին Մարտին Սաքայի Գյուլեցյանի վերաբերյալ իրենց հայտնի տեղեկությունները հայտնել Արաբկիր եւ Քանաքեռ-Զեյթուն համայնքների առաջին ատյանի դատարան կամ զանգահարել 24-01-61 հեռախոսահամարով:

FOR YOUR INTERNAL NEWS OF ARMENIA LOG ON TO www.azg.am

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-24-83

«Գինդ» տպագրատուն, Երեւան, Բագրատունեաց 70ա Գրանցման թիւ՝ 65, դասիչ՝ 69150 Տպաքանակը՝ 3000 Ստորագրած է տպագրության՝ 13. 05. 2005 Գինը՝ 100 դրամ